

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ**

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)**

**THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)**

2 (27)

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ**



**ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES**

246

246

ԵՐԵՎԱՆ 2023

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ),
Ա.Ի. Շահնազարյան (գլխավոր խմբագիր), Ա.Ռ. Խոսրոնա (ԱՄՆ),
Ա.Վ. Դումիկյան (ԱՄՆ), Խ.Ր. Գազեր (ԳՖՀ), Ի.Վ. Կրյուչկով (ՌԴ),
Հ.Ղ. Մուրադյան, Վ.Հ. Թորոսյան, Մ.Կ. Կոնինյան (պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель
председателя), А.И. Шахназарян (главный редактор), А.Р. Хосроева
(США), А.В. Думикян (США), Х.Р. Газер (ФРГ), И.В. Крючков (РФ),
А.Г. Мурадян, В.Г. Торосян, М.К. Конинян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (chairman of the board), K.H. Khachatryan (deputy
chairman of the board), A.I. Shahnazaryan (editor-in-chief), A.R. Khosroeva
(USA), A.V. Dumikyan (USA), H.R. Gazer (FRG), I.V. Kryuchkov (RF),
H.Gh. Muradyan, V.H. Torosyan, M.K. Koninyan (executive secretary)

Պարբերականի հերթական համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տպ. - ISSN 1829-4596

Էլ. - ISSN 2953-8084

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



80

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է**

Սիրելի հայրենակիցներ, թանկագին գործընկերներ.

Ճիշտ 80 տարի առաջ հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ դարակազմիկ իրադարձություն. Երկրորդ աշխարհամարտի թեժ օրերին՝ 1943 թ. նոյեմբերի վերջին, ստեղծվեց հայկական գիտության մայր հաստատությունը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիան: Դեռ միջնադարյան ժամանակներից բարձրագույն կրթության ու գիտության հզոր ավանդույթներ ունեցող հայությունն այդուհետ նոր թափով շարունակեց համաշխարհային գիտության վերելքին ծանրակշիռ նպաստ բերելու և քաղաքակրթական դաշտում իր նվաճումներով արժանի տեղ զբաղեցնելու առաքելությունը:

Պատմաբաններիս համար առավել քան ուրախալի է, որ հայոց գիտության կաճառի՝ ակադեմիայի հիմնադրմանը զուգընթաց, նրա կազմում ձևավորվել է նաև պատմության ինստիտուտը, որի առաջին տնօրենի պաշտոնը զբաղեցրել է ԳԱ առաջին նախագահ, էրմիտաժի տնօրեն, աշխարհահռչակ արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին: Պատմության ինստիտուտի հիմքի վրա ժամանակի ընթացքում կազմավորվել է հայագիտական ու հասարակական գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասը:

Ութ տասնամյակների ընթացքում պատմության ինստիտուտի բազմաթիվ աշխատակիցների ջանքերով ստեղծվել են մեծաքանակ ծանրակշիռ մենագրություններ ու հոդվածներ, տարբեր լեզուներով հրատարակվել են նյութերի ժողովածուներ, կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, պատրաստվել են բազմաթիվ երիտասարդ կադրեր: Հայաստանի

ամբողջական պատմության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել Հայ ժողովրդի պատմության ութհատորյակի հրատարակությունը, որն արժանացել է պետական մրցանակի: Հետխորհրդային տարիներին անաչառ պատմություն գրելու և բազմաթիվ հայեցակարգային խնդիրների լուծման հարցում անգնահատելի է Հայոց պատմության նոր բազմահատորյակի հրատարակությունը, որի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները մոտենում են ավարտին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական անձնակազմի անունից սքանչելի հոբելյանի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ Գիտությունների ազգային ակադեմիայի բոլոր աշխատակիցներին, հայոց գիտական ողջ հանրությանը և մեր ժողովրդին: Հայկական գիտության մայր կաճառին և պատմության ինստիտուտին մաղթում եմ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ՝ վասն Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական անձնակազմի անունից՝

Տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Ա. Մելքոնյան

ԳՈՀԱՐ Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

gohar.vardumyan@gmail.com

ID 0009-0006-4120-9929

DOI: 10.59523/1829-4596.2023.2(27)-7

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒՐ» ԷՊՈՍՈՒՄ*

Բանալի բառեր՝ Բագրատունյաց Հայաստան, Գագիկ թագավոր, արաբական արշավանքներ, Քեոի Թորոս, Սանասար, Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ, Փոքր Մհեր:

Ներածություն

Էպոսը՝ բանահյուսական ժանր լինելով, ներկայացնում է հերոսական պատում, որի հիմքում պատմական կարևոր իրադարձություն է՝ գեղարվեստորեն մշակված և ժամանակի ընթացքում գրառված¹: Պատմական հենքով հանդերձ, էպոսի կարևոր աղբյուր է դիցաբանությունը, հատկապես, նախնիների մասին առասպելները, որոնք արտացոլում են տվյալ ժողովրդի ծագումնաբանությունն ու էթնիկ ձևավորումը²:

«Սասնա Ծոռը» ներկայացնում է VII–IX դդ. արաբական ար-

* Ներկայացվել է 20.IX.2023 թ., գրախոսվել է 28.IX.2023 թ. և 14.X.2023 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2023 թ.:

¹ Տե՛ս **Мелетинский** 2004, **Путилов** 1988:

² Տե՛ս **Вардумян** 2022, 3–27:

շավանքները Հայաստան և հայ ժողովրդի հերոսական պայքարը խալիֆայական գերիշխանության դեմ, որի շնորհիվ վերականգնվեց երկրի անկախությունը և սկիզբ դրվեց Բագրատունյաց հարստությանը³: Էպոսի ձևավորման ժամանակի, պատմականության, հերոսների բնույթի, ժողովրդականության, գաղափարաբանական հենքի և այլ հարցերի մասին շատ է գրվել⁴: Սույն հոդվածում համեմատական, հետահայաց-համադրական, վերլուծական մեթոդների կիրառմամբ նորովի քննության է առնվում էպոսի պատմական ակունքները և գլխավոր հերոսների իրական ու դիցաբանական նախատիպերը: Նպատակն է՝ վեր հանել հին առասպելաբանական կերպարների էպիկական զարգընթացը մինչև միջնադար:

Էպոսի պատմական հենքը և հերոսների իրական նախադիպերը

Էպոսի հերոսներից ոմանք, բնականաբար, ունեցել են իրական նախատիպեր, որոնք փոխակերպված տեսքով են մտել էպոս:

Ա. Նշանակալից է Քեռի Թորոսի նախատիպի՝ արաբական գերիշխանության և Բյուզանդիայի ոտնձգությունների դեմ պայքարում աչքի ընկած հայոց մարզպան, սպարապետ Թեոդորոս Ռշտունու կերպարը, որի քաղաքական իմաստության, հմուտ ռազմավարության ու մարտավարության շնորհիվ VII դ. կեսերին վերականգնվել է երկրի փաստական անկախությունը⁵: Որոշ պատումներում Քեռի Թորոսը հանդես է գալիս որպես Գագիկ թագավորի զինակից և, իր պատմական նախատիպի նման, հաղթա-

³ Տե՛ս Հայոց պատմություն 2018, 277–354:

⁴ Տե՛ս **Աբեղյան** 1966, 325–513: Սասունցի Դավիթ 1981: **Պետրոսյան** 1997: Սասնա Ծոեր 2000: Հայկական «Սասնա Ծոեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը 2004: **Kouyoumjian, Der Mugrdechian** 2013. **Թուրջյան** 2013: **Եղիազարյան** 1999: **Համբարձումյան** 2018: **Պողոսյան** 2023:

⁵ Տե՛ս Հայոց պատմություն 2018, 277–287:

կան կռիվներ մղում խալիֆայական զորքերի դեմ: «Քեռի» հոր-
ջորջվելով հանդերձ, Թորոսն ազգակցական կապ չունի էպոսի
մյուս հերոսների հետ, սակայն կարող է ընկալվել իբրև Ծովինարի
խորհրդանշական մորեղբայր (որոշ պատումներում՝ եղբայր), հա-
մազգային մի հավերժական Քեռի, որն ուղեկցում է բոլոր ճյուղե-
րի՝ չորս սերնդի հերոսներին, սատարում նրանց և միայն ամենա-
վերջում՝ Փոքր Մեռի Վանա ժայռում փակվելուց հետո, հեռա-
նում ասպարեզից⁶: Պատմական Թեոդորոս Ռշտունի մարզպանը
ապրել և գործել է արաբական առաջին արշավանքների ժամա-
նակ, կարողացել է ներքին և արտաքին բարդ պայմաններում
միավորել Հայաստանի տարանջատ հատվածներն ու դիմագրա-
վել թշնամական ուժերին, շենացրել է Ռշտունյաց գավառի իր
նստավայր Աղթամար կղզին՝ դարձնելով այն հրոսակային հար-
ձակումներից պաշտպանվելու հուսալի պատվար⁷:

Բ. Բագրատունյաց արքաների հավաքական կերպար է առա-
ջին ճյուղում հանդես եկող հայոց խաչապաշտ Գագիկ թագավո-
րը, որի նախատիպ կարելի է համարել Աշոտ Բագրատունուն: Նա
է հաջողությամբ դիմագրավել 689 թ. Հայաստան ներխուժած
արաբական զորագնդին և հերոսաբար զոհվել մարտում⁸: Անվան
համընկնման առումով հավանական նախատիպ է VIII դ. կեսերին
խալիֆայական զորքերի դեմ ընդվզող Գագիկ Արծրունին, որն իր
շուրջն էր հավաքել հզորացած Վասպուրականի իշխաններին ու
հաջողությամբ պայքարում էր, բայց խաբեությանը ձերբակալվել
և տանջամահ է արվել⁹: Հնարավոր նախատիպ է նաև Գագիկ Ա
Բագրատունին (990–1020), որի օրոք ծաղկեց Անի մայրաքաղա-
քը: Էպոսի մի դրվագում խալիֆն սպառնում է ավերել Հայոց եր-

⁶ Տե՛ս **Վարդունեան, Թոխաթեան** 2002, 395:

⁷ Տե՛ս **Սեբէոսի** 1939, 104:

⁸ Տե՛ս Հայոց պատմություն 2018, 291:

⁹ Տե՛ս Հայոց պատմություն 2018, 318–319:

կիրը, սակայն, ինչպես Ծովինարն էր երազում տեսել, ջախջախիչ պարտություն է կրում և փախուստի դիմում. «Բայց ո՞ր տի փախնի, /էս դին կփախներ՝ Գագիկի զորքն էր, /էն դին կփախներ՝ Թորոսի զորքն էր»¹⁰: Գեղարվեստական երևակայության արդյունքում էպոսում թշնամու դեմ կողք-կողքի կռվում են Գագիկ թագավորը (Գագիկ Արծրունի կամ Գագիկ Ա Բագրատունի) և նրա զինակից Քեռի Թորոսը՝ Թեոդորոս Ռշտունին՝ հերոսներ, որոնց իրականում դարեր են տարանջատել:

Գ. Սանասարի և Բաղդասարի նախատիպերն են համարվում մ.թ.ա. VII դ. Ասորեստանի թագավոր Սինախերիբի (Սենեքերիմ) որդիներ Սանասարն ու Ադրամելիքը, որոնք տաճարում աղոթք անելու ժամանակ սպանում են կռապաշտ հորն ու փախչում Արարադա երկիր: Այս պատումն արձագանք է գտել հայկական գրույցներում, Պատմահոր երկում¹¹, ապա՝ նաև էպոսում: Սակայն էպոսի Սանասարին ու Բաղդասարին Սինախերիբի որդիներին համադրելիս հարկ է չանտեսել ժամանակագրական այն անդունդը, որն ասորեստանյան եղելությունը բաժանում է հայկական էպոսից: Հին պատումի հայկականացման, հերոսների ներքին ժամանակակերպարային զարգացումների արդյունքում երկվորյակներն այլափոխման երկարատև ուղի են անցնում՝ էպոսում դառնալով հայրենաշեն դյուցազուններ:

Դ. էպոսում արտացոլում են գտել Սասունում և Տարոնում արաբ նվաճողների դեմ ոտքի ելած ժողովրդական պայքարի հերոսները՝ Բագարատ Բագրատունու որդի Դավիթ Արքայիկը՝ Դավթի կերպարում, արաբ Յուսուֆ ոստիկանի (իմա՝ Մսրա Մելիք) հավանական սպանող, ապստամբների ղեկավար Հովնան Խութեցին՝ Ձենով Օհանի: Կերպարների գեղարվեստական տե-

¹⁰ Սասունցի Դավիթ 1993, 31-33:

¹¹ Տե՛ս **Մովսիսի Խորենացու** 1991, 70: Տե՛ս նաև՝ **Հարությունյան** 1981, XI-XII:

ղաշարժի հետևանքով էպոսում Դավիթն է դարձել գլխավոր հերոսը: Մելիքի՝ քառասուն տակ կաշի վրան փաթաթելն ու հորում Դավթի հարվածից պատսպարվելը ևս ունի իրական նախադեպ՝ Յուսուֆը թաքնվել է Բագարատի կառուցած Սուրբ Փրկիչ եկեղեցու գմբեթի ներսում և հենց այդտեղ էլ հայ ռազմիկը սպանել է նրան¹²:

Դավիթը հայ ժողովրդի մղած պայքարի հերոսների հավաքական կերպարն է և, ըստ Հ. Օրբելու՝ «Աներկբա է արաբական զորքի դեմ Դավթի մղած ճակատամարտի, օտարերկրյա հրոսակները հայրենի երկրից դուրս շարտելու մասին ստեղծված զրույցի պատմական աստառը»¹³: Այս կարծիքը հայտնելուց հետո, Հ. Օրբելին մեկ այլ, սակայն հակառակ դիտարկում է անում, ասելով, որ պատմական նախատիպեր փնտրելու փորձերը երբեմն հանգեցնում են *անխուսափելի անսխրոնիզմների*. «Գագիկ թագավորն ապրել է 10-րդ դարում, քաջարի իշխան Թեոդորոս Ռշտունին՝ 7-րդ դարում, ... իսկ Սանասարը (իր սխրագործությունները 9–10-րդ դարերում կատարած դյուցազն Դավթի պապը) էպոսում հանդես է գալիս իբրև 10-րդ դարում ապրած Գագիկ թագավորի թոռը, որին երբ համեմատում ենք Ասորեստանի Սենեքերիմ թագավորի Սանասար որդու հետ, պարզվում է, որ նա ապրել է իր պապից տասնութ դար առաջ»¹⁴: Լիովին կիսելով Հ. Օրբելու մտքերը, ավելացնենք, որ պատմականն ու էպիկականը միշտ չէ, որ համընկնում են, և հենց դրանում է վիպականացման էությունը՝ ապապատմականացումը կամ եղելության տեղափոխումը այլ տարածաժամանակային իրականություն:

¹² Տե՛ս Հայոց պատմություն 2018, 344–345:

¹³ Օրբելի 1956, 55:

¹⁴ Օրբելի 1956, 56–57:

Սանասարը և Բաղդասարը՝ երկվորյակների պաշտամունքի վիշապամարտիկ հերոսորդներ, Սասնա բերդի կառուցողներ

Հայտնի է, որ էպոսի ակունքները սկզբնավորվել են այն վաղնջական ժամանակներում, երբ տակավին նոր էին ձևավորվում առասպելական արարածները, աստված-աստվածուհիները¹⁵: Առաջին ճյուղի գլխավոր հերոսների՝ Կաթնաղբյուրից Ծովինարի խնամ մի լիաբուռ ջրից ծնված Սանասարի և մի կիսաբուռից ծնված Բաղդասարի կերպարային ակունքներում Հին Աշխարհում տարածված պատկերացումներն են երկվորյակների վերաբերյալ¹⁶: Հայ բանահյուսության մեջ զույգերը հանդես են գալիս որպես աստվածներ (Դեմետր և Գիսանե), արքաներ (Տիգրան և Արտաշես, Երվանդ և Երվագ), դյուցազուններ (Սանասար և Բաղդասար)¹⁷:

Էպոսի երկվորյակներն անպարտելի են, բայց Ծովինարի այս *զույգ ճրագները* կհանգչեին, եթե մոր պատգամով Արաբաց երկրից չլիախչեին Հայոց երկիր, որտեղ փրկվում են խալիֆի ցասումից, կառուցում և անվանադրում են Սասնա բերդը, ապրելու և աշխատելու բարենպաստ պայմաններ ստեղծում. «շատ մարդեր ... գնացին էսոնց մոտ, շատացա՛վ, մե՛ծ քաղաք դարձավ Սասուն»¹⁸: Վարքուբարքով Սասնա երկվորյակները հիշեցնում են հայոց անվանադիր նախնիներ Հայկին և Արամին, որոնց պես կառուցում են հայրենի տունը, սահմանում համակեցության ներ-

¹⁵ Այս առումով ամենահինը Ծովինարի կերպարն է, որին՝ որպես մայր հերոսուհու, անդրադարձել ենք առանձին հոդվածով՝ **Վարդույան** 2023, 22–33:

¹⁶ Զույգերի վերաբերմունքը միմյանց հանդեպ կամ բարեկամական է կամ թշնամական, ինչի վրա էլ հիմնված են շատ առասպելներ (տե՛ս **Շտերնբերգ** 1936, 73–109, **Иванов** 1980, 174–176):

¹⁷ Հայկական միջավայրում երկվորյակների պաշտամունքի մասին տե՛ս **Իսրայելյան** 1980, 216–228, **Абрамян, Демирханян** 1985, 66–84, **Հարությունյան** 2000, 121–195: **Ղոեջյան** 2010, 178–192:

¹⁸ Սասունցի Դավիթ 1981, 52:

քին կարգը, դիմագրավում արտաքին թշնամուն, հնուց ժառանգած ավանդույթով կերտում միջնադարյան տիեզերակարգը:

Սանասարի և Բաղդասարի նախատիպերը հայ դիցաբանության մեջ ամպրոպային վիշապամարտիկներ են, ջրից ծնունդ առնող ու հզորացող հրեղեն հերոսներ¹⁹, և այս առումով համադրելի են Վահագն Վիշապաքաղին: Պատմահոր երկում վկայված «Վահագնի ծնունդը» երգը²⁰ հնագույն աստվածաճնական առասպել է, որում լուսավոր Ծով Ծիրանին (Վերին ջրերը) Ծովինարի կերպարի դրսևորումներից է, որը կենսատու ջրային կերպար լինելով, Կաթնաղբյուրից հղիանում և ծնում է երկվորյակներին: Ջրից ծնված դյուցազունները կռվում են կտրիճ-փահլևանների դեմ, սպանում դև-վիշապներին՝ *կայծակ-փայլակ շամփրելով*, ազատում են նրանց զոհաբերվող գեղեցիկ աղջիկներին և ամուսնանում՝ Սանասարը Քառսուն-ճուղ-ճամ Դեղձունի հետ, Բաղդասարը՝ նրա քրոջ²¹: Հերոսների զուգավորվելուց զատ, վիշապամարտն ամուսնությանը պսակող պատումը մարդկանց չար ուժերից ազատելու գաղափարն է կրում, որը շարունակվում է հաջորդ՝ Մեծ Միերի ճյուղում:

Առյուծաձև Միերը՝ Միիր-Միթրայի և Վահագն Վիշապաքաղի կերպարային ժառանգորդ, Սասնա պահապան

Սանասարի մահվանից հետո նրա երեք որդիներից Միերն է կառավարում Սասունը, և դեռ պատանի է, երբ երկու կես է անում Սասնա սարերը փակած ու սովի պատճառ դարձած առյուծին և դառնում Առյուծաձև Միեր: Մեծ Միերի կերպարային նախատիպը Միիրն է՝ հուր երկնայինի՝ արևի ու լույսի, հուր երկրայինի՝ կրակի

¹⁹ Տե՛ս Աբեղյան 1966, 72–93, 130–155, 383–385, Պետրոսյան 1997: Հարությունյան 1981, 65–85:

²⁰ Տե՛ս Մովսիսի Խորենացույ 1991, 85–86:

²¹ Եղբայրների ամուսնության պատումը տե՛ս Սասունցի Դավիթ 1993, 64–100:

ու ջերմության աստվածը և, ինչպես մյուս արևային աստվածները, նաև՝ արդարադատության ու դաշինքի հովանավորը: Որպես արևի աստված՝ Միհրը պատկերվել է առյուծի տեսքով, որը պայքարում էր սև ցուլի կերպարանք մտած չար ուժերի դեմ, որպեսզի գիշերվա խավարին փոխարինի ցերեկվա լույսը: Մեծ Միերն էլ սպանում է ժողովրդի օրը սևացնող առյուծին ու ստանում Առյուծածան, նաև՝ «առյուծակերպ» մակդիրները, կոչվելով Առյուծ Միեր, քանզի արևի կենդանատեսք դրսևորումներից էր գազանների արևաբաշ արքան: Վահագն Վիշապաքաղը նույնպես սպանում է վիշապի կերպարանքով խավարը²² և ծագում որպես Արև, ընդամին՝ Առյուծածան Միերը Վահագն և Միհր աստվածների ժառանգորդն է: Առյուծածան դառնալով՝ Միերը Դեղձուն մորից ստանում է հոր Թուր Կեծակին, Քուռկիկ Ջալալին և արժանանում Խաչ Պատերազմիին²³:

Միհրը (ինչպես և Միթրան) արդարության, երդմնակալության, դաշինքի հովանավորն է, ինչը էպոսում դրսևորվում է Միերի և Արմաղանի *երդմնակոտոր* լինելուն հետևած՝ նրանց երկուսի վերահաս մահով: Մարա Մելիքի կնոջը՝ Իսմիլ խաթունին *լաճ* պարգևելուց և ախոյան երկիրը հզորացնելուց հետո, Միերը պիտի Սասնա ճրագն էլ վառի, բայց Արմաղանին քառասուն տարի չմոտենալու երդումը խախտելու պատճառով՝ որդու ծնվելուց հետո ծնողները հեռանում են կյանքից: Հեռանալը ևս Մեծ Միերի արևային կերպարի գործառույթային շրջանակներում է՝ լուսավորեց Սասնա երկնակամարը և մայր մտավ:

Դավիթը՝ հովանավոր և ռազմի հին աստվածների վիպական ժառանգորդ, Սասունը Մարա Մելիքից ազապող

²² Վահագնի կենդանակերպ դրսևորումներից էր առասպելական վիշապաքաղը՝ քաղի գլխով ու վիշապի մարմնով տոտեն-աստվածը:

²³ Տե՛ս Սասունցի Դավիթ 1981, 102–103, Սասունցի Դավիթ 1993, 120:

Էպոսի կենտրոնական հերոսը Դավիթն է, քանզի նա է սպանում Մսրա Մելիքին, և այդ կռիվը շատ բաներով հար և նման է Հայկի ու Բելի պատերազմին: Երկու դեպքում էլ ազատատենչ հերոսն ըմբոստանում է պատերազմասեր բռնակալի դեմ. ընդ որում՝ Բելը Հայկի դեմ ելել էր իր «յանդուզն և անճոռնի զորութեամբ»²⁴, Մելիքն էլ ոտքի է հանել Մսրա բանակը՝ «երկնուց աստղին հաշի՛վ կար, էնոնց վրաններուն հաշիվ չը կար»²⁵: Հայկը փոքրաթիվ տոհմակիցների հետ էր կռվում Բելի հրոսակների դեմ, Դավիթն էլ միայնակ է ելնում Մելիքի դեմ, թիկունքում ունենալով հորեղբոր՝ Ձենով Օհանի, Քեռի Թորոսի և ազգակիցների զորակցությունը, որպես զենք՝ հորից ժառանգած թուրը, ձին և խաչը:

Դավթի կերպարն իր պայքարող բնույթով և հորում պատուպարված Մսրա Մելիքին սպանելու հմտությամբ նույնպես հիշեցնում է Հայկ Նահապետին, որը մարտավարական հնարքով նետահարեց Բելին, երբ վերջինս փորձում էր թաքնվել իր զինվորների թիկունքում՝ զգալով վտանգը: Բելը, որի մարմնի բոլոր մասերը զրահապատ էին, տապալվեց դյուցազուն Հայկի լայնալիճ աղեղից արձակված երեքթևյան նետից²⁶: Պակաս «զրահավորված» չէր Մսրա Մելիքը, երբ նրա երեք հարվածներին հերոսաբար դիմագրավելուց հետո, Դավիթը զարկեց Թուր Կեծակին, որը՝ «Կըտրեց քառսուն ջաղացի քար, /Կըտրեց քառսուն գոմշու կաշին, /Կըտրեց հրեշ Մըսրա Մելքին»²⁷:

Անընդհատ կռիվների մեջ հայտնվող Դավիթը, որոնցից ամենավառ դրվագը Մելիքի հարկահաններին ջարդ տալն ու Սասունից դուրս քշելն է, աղերսվում է նաև ռազմի, քաջության, շանթ ու

²⁴ Տե՛ս **Մովսիսի խորենացոյ** 1991, 34:

²⁵ Սասունցի Դավիթ 1981, 229:

²⁶ Տե՛ս **Մովսիսի խորենացոյ** 1991, 35–36:

²⁷ Սասունցի Դավիթ 1981, 241:

որոտի աստված Վահագնին, որն ամենօրյա մարտում սպանում է վիշապին և ծագում որպես Արև: Դավիթն էլ հաղթում է Սասնա ժողովրդին կեղեքող Մսրա Մելիքին, որքան էլ վերջինս ջանում է խուսափել Թուր Կեծակի անվրեպ հարվածից:

Հանգուցային դրվագ է նաև Դավիթի և Փոքր Միերի առաջին հանդիպումը, երբ միմյանց տեսած չլինելով, հայր ու որդի սկսում են մենամարտել: Կենաց ու մահու այդ կռվում քիչ է մնում որդին սպանի հորը, բայց փրկում են Խանդութ մոր աղոթքն ու Միերի թևի *ոսկի բազմանդը*, որից իրար ճանաչում են ու դադարում կռվել: Միերի մեղայականին («Իմ հեր դո՞ւն ես, ես քեզ մեղա»), Դավիթը պատասխանում է անեծքով («Անմահ էղնիս, անժառանգ»²⁸), քանի որ որդին իր դեմ էր ելել:

Ուժն ու զորությունը Կաթնաղբյուրից ստացած Դավիթն անհաղթ էր, բայց առասպելներում նույնպես նկարագրված են դեպքեր, երբ հզոր աստվածը զավակի առավել նշանակալի դառնալու հետևանքով կորցնում է փառքը, ինչպես հունական Քրոնոսը՝ Ջևսի, իրանական Ջրվանը՝ Ահուրամազդայի²⁹: Սասնա Դավիթը զոհվում է իր դստեր արձակած թունավոր նետից, ասելով՝ «էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց»³⁰: Պատճառը Հ. Օրբելին տեսնում է նրանում, որ «Դյուցազնի մեջքը հավանաբար ջրդեղված չէր կենարար հեղուկով և թիակների արանքը մնացել էր խոցելի³¹» (հմմտ. Աքիլեսյան գարշապար), և հենց այդտեղ էլ խրվում է վրի-

²⁸ Սասունցի Դավիթ 1993, 342: Իրանական «Շահնամե» վիպերգության «Ռոստամ և Սոհրաբ» ասքում նույնպես հայր ու որդի մենամարտում են առանց իրար ճանաչելու, և Սոհրաբը զոհվում է հոր թրից (տե՛ս **Ֆիրդուսի** 1967, 133–138):

²⁹ Քրոնոսը և Ջրվանը ժամանակը կերպավորող աստվածներ են, և այստեղ գաղափարն այն է, որ հզորագույն ուժ լինելով հանդերձ, ժամանակն էլ կարող է պարտվել իր իսկ ծնունդ տված զորեղ կերպարի կողմից:

³⁰ Սասունցի Դավիթ 1981, 288:

³¹ Տե՛ս **Օրբելի** 1956, 126:

ժառու աղջկա նետը: Մեծ Միերի մահը երդմնազանցության հետևանքով էր, Դավթի սպանվելը՝ խոստմնազանցության (նրա մոր հետ ամուսնանալը), երկուսն էլ խախտել էին արժեհամակարգային դրվածքը, այլապես ոչ մի թշնամի նրանց չէր հաղթի³²:

Փոքր Միերը՝ արևային-արդարադատ, մեռնող-հառնող դիցերի հետնորդ, էպոսը եզրափակող անմահ կերպար

Էպոսը եզրափակող Փոքր Միերը ևս դիցաբանորեն ակունքվում է արևային Միիր աստծո կերպարից, ինչպես իր պապ Մեծ Միերն էր: Դեռևս Հ. Օրբելին է նկատել, որ էպոսում Միերի կերպարը բաժանված է երկու մասի, առաջինը պապն է՝ ծագող արևի ճաճանչափայլ և կենսալից հատկանիշներն արտացոլող, իսկ երկրորդը թռոն է՝ հոգնած, մայր մտնող արևի հատկանիշներով³³: Փոքր Միերը հոգնել է աշխարհում տիրող չարից, իր և ձիու ոտքերը հողի մեջ են խրվում՝ «հող ծերացեր է, հալիվորցե», գնում է այցի նախ՝ մոր, ապա հոր շիրիմին՝ հարցումով, թե ինչ անի «էս աշխարհքեն անմաս» իր վիճակում, և երկուսն էլ ուղղորդում են նրան դեպի Ագռավաքար: Դավիթը խորհրդանշական պատգամով է որդուն ճանապարհ դնում. «Դու անմահ որդի ես, /Աշխարհք ավրի, մեկ էլ շինվի, /Որ գետին քո ձիու առջև դիմանա, /Աշխարհք քոնն է»³⁴:

Փոքր Միերը փակվում է Վանա ժայռի մեջ՝ որպես հոգնած արևամուտ, նա հեռացող, բայց սպասվող-վերադարձող հերոս է, նա անմահ է և պիտի դուրս գա, երբ «աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի»³⁵: Միիր արևային աստվածն իր մայր մտնող ու ծագող բնույթով աղերսվում է Հին Աշխարհում տարածված մեռնող-հառ-

³² Տե՛ս Վարդումեան, Թոխաթեան 2002, 398:

³³ Տե՛ս Օրբելի 1956, 115:

³⁴ Սասունցի Դավիթ 1993, 406:

³⁵ Սասունցի Դավիթ 1981, 315:

նող դիցերին և, ամենից առավել՝ հայկական մեռնող-հառնող Արային, որը, ինչպես և Միերը, պայքարում է չարի դեմ ու զոհվում՝ մայր մտնում, բայց և գարնանային զարթոնքի հետ՝ վերածնվում:

Փոքր Միերի Վանի ժայռախորշում փակվելը արևամուտն է, որը համահունչ է միհրական (միթոթայական) որոշ ծեսեր քարանձավում կատարելու սովորույթին, որի շնորհիվ էլ ժայռը Միերի դուռ անունն է ստացել: Միհր-Միերն ազգակից է բիայնական ժայռաբնակ Խալդիին (որի անունով Վանա ժայռը հնում կոչվել է Խալդիի դարպաս), հնդիրանական ժայռածին Միթոթային, և այս դեպքում հերոսի վերադարձը նույնանում է ժայռից ծնվելուն³⁶:

Ժայռում փակված Փոքր Միերի կերպարը համադրելի է նաև Արտաշես արքայի անեծքով Մասիսի վիհում շղթայված Արտավազդի վիպական կերպարին, որը նույնպես անմահ է՝ անվերջանալի պատիժ կրելով³⁷: Արտավազդը և Միերը հայրական անեծքի դատապարտված որդիներ են, ընդ որում՝ երկուսի հայրերն էլ վախճանվում են անեծքից հետո: Էպոսի ավարտին Սասնա տան վերջին հերոսը հեռանում է իրականությունից, սակայն վաղ թե ուշ պիտի վերադառնա, որպեսզի կատարի պապերից ժառանգած արդարադատ-փրկչական գործը, որից հետո պատմության անիվը կթեքվի դեպի բարին, և Հայաշխարհում կտիրի լիությունն ու ճշմարտությունը:

Եզրակացություններ

Դասական հերոսական էպոս լինելով՝ «Սասնա Ծոեր»-ը ներկայացնում է որոշակի դարաշրջանում տեղի ունեցած հանգուցային իրադարձություններ, որոնցում պատմականի և առասպելա-

³⁶ Կերպարային համադրությունները տե՛ս **Petrosyan** 2006, 228–238. **Вардумян** 2014, 3–19. **Вардумян** 2015, 193–220.

³⁷ Տե՛ս **Մովսիսի Խորենացույ** 1991, 191–192:

կանի յուրօրինակ միահյուսումը վերածվել է էպիկական միջավայրի՝ իր բոլոր բաղկացուցիչներով ու բնութագրիչներով: Էպոսի չորս ճյուղի կենտրոնական դեմքերի պատմամշակութային քննությունը ցույց է տալիս, որ հին դիցաբանական պատկերացումները մեծապես արտացոլվել են նրանց կերպարներում:

Սանասարի ու Բաղդասարի, Առյուծ Մհերի, Սասնա Դավթի, Փոքր Մհերի մասին պատումներում երևան են գալիս հին առասպելույթների, պաշտամունքային տարրերի հատկանիշներ, որոնք, պատմականորեն ու գեղարվեստորեն պատճառաբանված, դրսևորվում են հերոսների մտածելակերպում, գործելակերպում: Ակունքվելով առասպելաբանական անցյալից, «Սասնա Ծռեր» էպոսն իր ամբողջականությամբ և ավարտվածությամբ հանդերձ՝ միտված է սպասվելիք կարգավորված ապագային, դրանով իսկ դառնալով Հայոց պատմության մեջ հարատևող հերոսավեպ, որի հիմնական գաղափարներն են բարությունը, արդարությունը, խաղաղությունը, ազատությունն ու անկախությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1966, Հայ վիպական բանահյուսություն. «Սասնա Ծռեր», Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 573 էջ:

Ազաթանգեղայ 1983, Պատմություն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, «ԵՊՀ» հրատ., 277 էջ:

Եղիազարյան Ա. 1999, «Սասնա Ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, «Գիտություն» հրատ., 299 էջ:

Թուրջյան Հ. 2013, Հետաքննության դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը, Երևան, 292 էջ:

Իսրայելյան Հ. 1980, Երկվորյակների պաշտամունքը Հին Հայաստանում, «Պատմաբանասիրական հանդես», № 3, էջ 216-228:

Համբարձումյան Հ. 2018, Սասնա Ծռեր. Պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, «ԵՊՀ» հրատ., 322 էջ:

Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը 2004, Երևան, 178 էջ:

Հայոց պատմություն 2018, հ. II, գիրք առաջին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 705 էջ:

Հարությունյան Ա. 1981, Վիշապամարտը «Սասնա ծռերում», «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 11, էջ 65–85:

Հարությունյան Ա. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 527 էջ:

Ղոնջյան Լ. 2010, Երկվորյակների առասպելի ելակետային արժեքը հայ վիպական հուշարձանների հորինվածքներում, «Պատմաբանասիրական հանդես», № 2, էջ 178–192:

Մովսիսի Խորենացույ 1991, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի. Նմանահանութիւն. Լրացումները Ա.Բ. Սարգսեանի), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 486 էջ:

Պետրոսյան Ա. 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Հնդեվրոպական առասպելներ և պատմական նախատիպեր, Երևան, «Վան Արյան», 96 էջ:

Պողոսյան Ա. 2023, Կանանց կերպարները «Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց պատումներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 11, էջ 151–166:

Սասնա ծռեր 1977, Ժողովրդական վեպ, աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող», 700 էջ:

Սասնա ծռեր 2000, Նորահայտ պատումներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 283 էջ:

Սասունցի Դավիթ 1981, Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբանը՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Լույս», 346 էջ:

Սասունցի Դավիթ 1993, Համահավաք բնագիր, հյուսեց և խմբագրեց Գր. Գրիգորյանը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 415 էջ:

Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն 1939, Բաղդաստութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, «Արմֆան», 218 էջ:

Վարդումեան Գ., Թոխաթեան Կ. 2002, Հայոց լուսարեային պատկերացումները (ըստ ժայռապատկերների և ազգագրական նյութերի), Բազմավեպ, Վենետիկ – Ս. Ղազար, № 1-4, էջ 383–407:

Վարդումյան Գ. 2023, Ծովինարի էպիկական կերպարի հնագույն

ակունքները, Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ, Պրակ ԺԴ, Երևան, Վ. Բոյունովի անվ. պետ. համալսարան, էջ 22–33:

Օրբելի Հ. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., 137 էջ:

Ֆիրդուսի 1967, Ռուսում և Սոհրաբ, թարգմանեց՝ Ս. Ումադյան, Երևան, «Հայաստան» հրատ., 180 էջ:

Абрамян Л. Демирханян А. 1985, Мифологема близнецов и мировое дерево, «Պատմաբանասիրական հանդես», № 4, էջ 66–84:

Вардумян Г. 2014, Бог солнца Миhr – покровитель добра и справедливости у древних армян, «Հայոց պատմության հարցեր», Երևան, № 15, էջ 3–19:

Вардумян Г. 2015, Мифо-эпический образ армянского Миhrа в контексте сравнительного анализа с римским Митрой, Трансформационные процессы в эпоху Принципата. Включение Рима в осевое время, сборник статей, Ереван, Российско-армянский университет, с. 193–220.

Вардумян Г. 2022, Архаический эпос о зарождении древнеармянской государственности, «Հայոց պատմության հարցեր» Երևան, № 2 (25), էջ 3–27:

Давид Сасунский 1939, Армянский народный эпос, Четыре ветви, ред. И.А. Орбели, Ереван, «Арменгиз», 386 с.

Иванов В. 1980, Близнецные мифы, Мифы народов мира, Москва, «Советская энциклопедия», т. 1, с. 174–176.

Мелетинский Е. 2004, Происхождение героического эпоса. Ранние формы и архаические памятники, Москва, Восточная литература, 466 с.

Путилов Б. 1988, Героический эпос и действительность, Ленинград, «Наука», 223 с.

Штернберг Л. 1936, Античный культ близнецов при свете этнографии, Ленинград, Институт народов Севера, с. 73–109, XVI+572 с.

Kouyoumjian D., Der Mugrdechian B. 2013, David of Sasoun, Critical Studies of the Armenian Epic, Fresno, California State Univ. Press, 228 p.

Petrosyan A. 2006, Haldi and Mithra/Mher, “Aramazd”: Armenian Journal of Near Eastern Studies, 1, p. 228–238.

Гоар Д. Вардумян, Институт истории НАН РА, к.и.н., доцент,
Отражение древнеармянских мифологических представлений в
эпосе «Сасна Црер».

Резюме

«Сасна Црер» («Сасунские Удальцы») представляет собой классический героический эпос, в котором нашли отражение исторические события – арабские нашествия на Армению в VII–IX вв., к концу которых страна была освобождена от иноземных захватчиков и на армянский престол воссела династия Багратидов. На фоне реальных событий создавались эпические сказания о народных героях, которые боролись против Багдадского халифа и Мсра Мелика. Их подвиги описываются в четырех ветвях эпоса, а истоки их образов уходят в глубь тысячелетий, беря начало из мифологических представлений. В повествованиях о Санасаре и Багдасаре, Мгере Старшем, Давиде Сасунском и Мгере Младшем очевидны следы образов древних богов, однако основная идея эпоса устремлена в будущее, когда в Армянском мире наступят свобода и справедливость.

Ключевые слова: Багратидская Армения, царь Гагик, арабские нашествия, дядя Торос, Санасар, Багдасар, Мгер Старший, Давид Сасунский, Мгер Младший.

Gohar D. Vardumyan, Institute of History of the NAS RA, PhD in History, Associate Professor, Reflection of ancient Armenian mythological ideas in the epic “Sasna Tsrer”.

Summary

“Sasna Tsrer” (“Daredevils of Sasun”) is a classic heroic epic, which reflects historical events – the Arab invasions of Armenia in the 7th-9th centuries, by the end of which the country was liberated from foreign

invaders, and the Bagratid dynasty ascended the Armenian throne. On the background of these real events, epic narratives were created about folk heroes who fought against the caliph of Baghdad and Msra Melik. Their heroic deeds are described in four branches of the epic, and the origins of their images go back thousands of years, beginning from mythological ideas. In the narratives about Sanasar and Baghdasar, Elder Mher, David of Sasun and Younger Mher, traces of ancient gods are obvious, but the main idea of the epic is directed to the future, when freedom and justice will come to the Armenian world.

Key words: Bagratid Armenia, King Gagik, Arab invasions, uncle Thoros, Sanasar, Baghdasar, Elder Mher, David of Sasun, Younger Mher.

ՎԱՀԵ Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԱԱ պատրմության ինստիտուտ, պ.գ.թ.
vahetorosyan.matenadaran@gmail.com

ID 0000-0002-0717-552X

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-24

**ՍՈՒՐԲ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ
ՀԱՅ-ԼԱՏԻՆ ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(X Դ.-XIII Դ. ԿԵՍԵՐ)***

Բանալի բառեր՝ Սուրբ Թադեոս, Սուրբ Բարդուղիմեոս, Հովհաննես Դրասխանակերտցի, Նիկողայոս Միստիկոս, Հայոց կաթողիկոս, Հռոմի պապ, Կոստանդնուպոլսի պատրիարք, առաքյալ, գերագահություն:

Ներածություն

XIII դ. 40-ական թթ. կեսերին հայ-լատին եկեղեցական հարաբերություններում տեղի ունեցան նկատելի փոփոխություններ: Ի տարբերություն նախընթաց շրջափուլի (նկատի ունենք 1130-ից 1240-ական թթ. սկիզբը), երբ օրակարգում արժարժվում էին հիմնականում քաղաքական հարցեր, 1240-ական թթ. կեսերին և հաջորդող մի քանի տասնամյակներում հայ-լատին եկեղեցական հարաբերություններում սկսեցին գերակշռել դավանական ու ծիսական խնդիրները: Դրանց հետ մեկտեղ սկսվեց լայնորեն քննարկվել Ընդհանրական եկեղեցում Հռոմի պապական աթոռի

* Ներկայացվել է 13.XI.2023 թ., գրախոսվել է 22.XI.2023 թ. և 24.XI.2023 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2023 թ.:

գերագահության հարցը: Այն ուղղակիորեն առնչվում էր եկեղեցիների առաքելահաստատության ավանդույթին, որի քննությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Հայոց եկեղեցու առաքելահաստատության ավանդույթի մեկնաբանությունները XIII դ. հայ մատենագրության մեջ

Ընդհանրական եկեղեցում Հռոմի պապի գերագահությունը, ի թիվս այլ փաստարկումների, կաթոլիկ եկեղեցին հիմնավորում էր ավետարանական այն վկայությամբ, ըստ որի՝ Հիսուս Քրիստոսը, դիմելով Պետրոսին, ասել է. «Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վլէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց գնա մի՛ յաղթահարեսցես: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»¹: Մատթեոսի Ավետարանի այս վկայության հիման վրա Հռոմի պապերը, որպէս Պետրոս առաքյալի հիմնած աթոռի առաջնորդներ և նրա փոխանորդներ, տակավին IV-V դդ. վերջնականապէս ձևավորեցին Ընդհանրական եկեղեցում իրենց գերագահության տեսությունը (Petrine primacy)²: Այն շուտով տեղ գտավ միջեկեղեցական հարաբերություններում՝ վերածվելով Ընդհանրական եկեղեցում Հռոմի պապի գերիշխանությունը հաստատելու և ամրապնդելու զորեղ միջոցի:

Ընդհուպ միջև խաչակրաց արշավանքները գերագահության համար մղվող պայքարում Հռոմի պապական աթոռի թիրախում հիմնականում բյուզանդական եկեղեցին էր՝ ի դեմս կայսրի և Կոստանդնուպոլսի պատրիարքության, որոնք տարբեր միջոցներով պայքարում էին պապի գերագահական նկրտումների

¹ Մատթեոս, գլ. ԺԶ, 18-19:

² Տե՛ս u Dvornik 1979, 40-58, <https://www.britannica.com/topic/papacy>, <https://www.britannica.com/topic/Petrine-theory> (31.10.2023):

դեմ: Ի պատասխան՝ բյուզանդական եկեղեցին առաջ էր քաշում այն թեզը, որ Հռոմի աթոռի գերագահության գլխավոր կռվանը ոչ այնքան նրա հիմնադիր Պետրոս առաքյալին Տիրոջ շնորհած բացառիկ իրավունքն էր, որքան՝ կայսրության մայրաքաղաքում լինելու հանգամանքը: Մայրաքաղաքների եպիսկոպոսների գերագահությունը նահանգների մյուս եպիսկոպոսների նկատմամբ ձևավորվեց «ակամա». ելնելով այն հանգամանքից, որ եկեղեցական ժողովները տեղի էին ունենում մայրաքաղաքներում, այնտեղ նստող եպիսկոպոսներն էին դառնում հյուրընկալողն ու դրանք նախագահողը³: Այս իրողությունը կանոնական ձևակերպում ստացավ տիեզերական ժողովներում, որոնք առավել որոշակիացրին մայրաքաղաքի եպիսկոպոսի, այն է՝ մետրոպոլիի դերը, կարգավիճակն ու իշխանությունը տվյալ վարչամիավորի մյուս եպիսկոպոսների նկատմամբ⁴: Այս դեպքում, ըստ Ֆրենսիս Դվորնիկի, եկեղեցական աթոռի գերագահության համար առաջնային էր համարվում ոչ թե առաքելահաստատ, այլ նահանգային կենտրոնում կամ մայրաքաղաքում լինելը, քանզի մայրաքաղաքային բոլոր աթոռները չէ, որ առաքելահիմն էին⁵:

Փաստորեն, Կոստանդնուպոլսի պատրիարքությունը փորձում էր Հռոմի պապի գերագահական հավակնություններին հաղորդել քաղաքական բնույթ՝ դրանք բխեցնելով կայսերական անցյալում զբաղեցրած կարգավիճակից: Այսինքն, բյուզանդացիները մերժում էին պապի գերագահության աստվածաշնչյան, ասել է թե՛ կանոնական հիմնավորումները⁶: Հաջողելու դեպքում Կոս-

³ Տե՛ս **Dvornik** 1979, 30. **Dvornik** 1958, 5-6.

⁴ Խոսքը վերաբերում է Անտիոքի 341 թ. ժողովին տե՛ս **Dvornik** 1979, 32.

⁵ Տե՛ս **Dvornik** 1979, 31.

⁶ Որպես Հռոմի աթոռի տիեզերական իշխանությանը հակակշռող ուժ՝ Կոստանդնուպոլսի պատրիարքությունն առավել կենսունակ դարձավ Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո, առավել ստույգ՝ նրա XXVIII կանոնի ուժով, որով նորաստեղծ պատրիարքական աթոռը հռչակվում էր երկրորդը Հռոմից

տանդնուպոլսի պատրիարքությունը հայտնվում էր խիստ շահեկան վիճակում, քանզի Հռոմի գերագահությունը խարսխվելու էր անցյալի փառքի վրա, որն Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո այլևս չկար և ավելին, քան խորհրդանշանական բնույթ չէր կարող ունենալ: Բացի այդ, եթե Կոստանդնուպոլիսը պապի գերագահության հիմքում դնում էր կայսերական մայրաքաղաքի հանգամանքը, ապա նրա հավակնությունները, որպես Նոր Հռոմի, Հռոմեական կայսրության իրավահաջորդի, դառնում էին անմրցելի: Որ այս թեզն արդեն XII դ. շրջանառվում էր Բյուզանդիայի արքունիքում, հստակ երևում է կայսրուհի Աննա Կոմնենոսի մի դիտարկումից: Նա իր «Ալեքսիադա» աշխատության մեջ, անդրադառնալով պատրիարքական աթոռների գերագահության խնդրին, գրում է, որ երբ կայսրության մայրաքաղաքը Հռոմից տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, վերջինիս պատրիարքին անցավ նաև «բարձրագույն եպիսկոպոսական իշխանությունը»⁷:

Գերագահության համար պայքարը նոր փուլ թևակոխեց խաչակրաց արշավանքների շրջանում: Դրանք ամբողջովին փոխեցին միջերկածովյան ավազանի քաղաքական քարտեզը, որի վրա մեկը մյուսի հետևից ի հայտ եկան լատինական իշխանություններ՝ Եդեսիայի կոմսությունը, Անտիոքի իշխանապետությունը, Երուսաղեմի թագավորությունը և Տրիպոլիսի կոմսությունը⁸:

հետո: Մինչ այդ այս պայքարում նկատելի հաջողություններ էր գրանցել Ալեքսանդրիայի պատրիարքությունը, որի ականավոր առաջնորդներից Դեոսկորոսն այս աթոռի հիմնադիր Մարկոս առաքյալին գերագահ էր հռչակել անգամ Պետրոս առաքյալի նկատմամբ: Քաղկեդոնի ժողովը ծանր հարված հասցրեց Ալեքսանդրիայի պատրիարքության ազդեցությանը:

⁷ **Comnena** 2009, 39.

⁸ Խաչակիրները Բյուզանդիայի կայսեր Ալեքսիոս I Կոմնենոսի (1081-1118) հետ պայմանագիր էին կնքել, ըստ որի, նրանց գրավելիք այն տարածքները, որոնք նախկինում պատկանել էին Բյուզանդիային, վերադարձվելու էին

Արշավանքներն ու պետական այս կազմավորումների ստեղծումը խաչակրության գաղափարախոս Հռոմի պապին Արևելքում իր գերիշխանությունը հաստատելու հնարավորություն տվեցին: Անտիոքի նվաճմանը և խաչակրաց իշխանության հաստատմանը հաջորդեց այնտեղ կաթոլիկ պատրիարքի ձեռնադրումը, ինչը կատարվեց հույն պատրիարք Հովհաննես IV-ի հեռացման գնով⁹: Անտիոքի լատին պատրիարքության իշխանությունը տարածվում էր ոչ միայն նույնանուն իշխանապետության, այլև Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունների վրա:

Միջերկրական ծովի արևելյան ավազանում XII դ. լատինական իշխանությունների ու դրանցում եկեղեցական աթոռների ստեղծմամբ Հռոմի կաթոլիկ եկեղեցին անմիջականորեն սահմանակցեց Հայոց եկեղեցուն: Նաև այս իրողությունների ազդեցությամբ արդեն 1130-ականներից քիչ թե շատ կանոնավոր հարաբերություններ հաստատվեցին երկու եկեղեցիների միջև: Ինչպես վերը նշեցինք, հայ-լատին եկեղեցական հարաբերությունների 1130-ից 1240-ական թթ. սկզբի շրջափուլն առավել աչքի ընկավ քաղաքական հարցերի օրակարգով: Ասվածն ամենևին չի նշանակում, թե այդ ժամանակահատվածում քննվող հարաբերություններում բացակայել են դավանական ու ծիսական բնույթի, անգամ Հռոմի պապի գերագահությանն առնչվող հարցեր: Սակայն դրանց շուրջ այդ ժամանակ չծավալվեց այնպիսի

կայսրությանը: Փոքրասիական երկրամասերի նվաճման ժամանակ այս պայմանագիրը լիարժեքորեն գործեց, սակայն Անտիոքի գրավումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Ալեքսիոսը, տեղեկանալով, որ խաչակիրներին լրջորեն սպառնում է սելջուկյան արշավանքի վտանգը, հրաժարվեց նրանց օգնելու իր հանձնառությունից: Դա կայսեր հետ պայմանագիր կնքած լատին իշխաններին հիմք տվեց հրաժարվելու իրենց ստանձնած պարտավորություններից, ինչին էլ շուտով հաջորդեց խաչակրաց պետական կազմավորումների հիմնումը Միջերկրականի արևելյան ավազանում (տե՛ս **Hamilton** 1996, 3-5):

⁹ Տե՛ս **Hamilton** 1996, 4.

պայքար, որպիսին 1240-ականներից սկսած:

Հայ-լատին եկեղեցական հարաբերություններին առնչվող վավերագրերի բովանդակությունից դատելով՝ Հայոց եկեղեցուն 1130-ից 1240-ական թթ. սկզբին ներկայացվել է Հռոմի պապի գերազահությունն ընդունելու պահանջ: Սակայն ուշագրավ է, որ դրա վերաբերյալ Հայոց եկեղեցու՝ նույն ժամանակահատվածի և դրան հաջորդող շրջափուլի դիրքորոշումները եղել են տարբեր: Այլ առիթի թողնելով 1130-ից 1240-ական թթ. սկզբի հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քննությունը՝ նշենք, որ դիրքորոշումների տարբերությունը գերազանցապես պատճառաբանվում է քաղաքական իրողություններով¹⁰:

Պապական աթոռի գերազահական նկրտումների դեմ 1240-ականների և հաջորդող տասնամյակների հայ մատենագիրների գրվածքներից պարզվում է, որ հայ-լատին եկեղեցական հարաբերություններում Հռոմի քահանայապետը շոշափել է Հայոց եկեղեցու առաքելահաստատության խնդիրը: Ինչպես հայտնի է, վաղ միջնադարի հայկական որոշ սկզբնաղբյուրներում Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալներից Թադեոսը հիշվում է իբրև Հիսուս Քրիստոսի 70/2 աշակերտներից մեկը¹¹: Հետաքրքրական է, որ հենց 1240-ական թթ. հայ մատենագրական երկերում՝ հատկապես դավանաբանական վավերագրերում, նորովի մեկնաբանվեց Թադեոս առաքյալի՝ 12 կամ 70/2 աշակերտներից լինելու մասին ավանդույթը: Այսպես՝ XIII դ. ականավոր վարդապետներից Վանականի կարծիքով՝ Թադեոսը յոթանասնից է համարվել ոչ թե այն պատճառով, որ աշակերտների այդ շարքից էր, այլ՝ քանի որ եղել է նրանց ուսուցիչը. «Զի՞նչ է պատճառ, որ ոմանք յեթանասնից ասեն. ա՛յս է ՀԲ. աշակերտացն գլուխ և

¹⁰ Խնդրո առարկա փոխհարաբերությունների 1130-ից 1140-ական թթ. սկզբի շրջափուլի մասին տե՛ս **Տեր-Ղևոնդյան, Թորոսյան** 2021, 5-22:

¹¹ Տե՛ս Վկայաբանութիւն 1853, 9-102: **Մովսէս Խորենացի** 1913, 157:

վարդապետ էր, որպէս Պետրոս ԲԺ.իցն, զի առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչէին, ա՛յս է ստոյգ պատճառն»¹²: Թերևս, սխալ չի լինի կարծել, որ Վանական վարդապետն այս հարցին անդրադարձել է հենց Հռոմի պապի պահանջներին ի պատասխան: Այս թեմայի վերաբերյալ խիստ հետաքրքրական է նույն դարի մեկ այլ ականավոր վարդապետի՝ Մխիթար Սկևռացու բացատրությունը: Ըստ նրա, Թադէոսի՝ Հիսուս Քրիստոսի 12 կամ 70/2 աշակերտներից լինելու շփոթը ծագում է մատենագրական երկերից, մինչդեռ Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները նրան, Ղեբեոս անվամբ, հիշում են հենց 12 աշակերտների շարքում. «Եւ զոր ասէքդ՝ զԹադէոս յեօթանասնիցն գոլ, զայդ ոչ յառաքելական մատեանց ասէք՝ ուստի տրամաբանութիւնս մեր, այլ ի վիպասան պատմագրաց. իսկ յաւետարանին Մատթէոս և Մարկոս յերկոտասանիցն զնա թուեն, և անուանն փոփոխմամբ ևս զնա պատուեալ Տեառն որպէս զՊետրոս և զորդիսն Որոտման»¹³: Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններում Թադէոսը կոչվում է Ղեբեոս անվամբ: Հենց այդ հանգամանքն էին մատնացոյց անում հայերը՝ նշելով, որ Քրիստոսն անվանափոխել է նաև Հռոմի աթոռի հիմնադիր Պետրոս առաքյալին: Վանական վարդապետն այդ առթիվ գրում է. «Կենսաբեր սուրբ Աւետարանն զԹադէոս զմեր առաքեալն յերկոտասանիցն է ասցել: Ղեբէոս՝ որ անուանեցան Թադէոս: Յայտ է ի Քրիստոսէ անուանեցաւ՝ զանունն փոխեալ որպէս զՊետրոսին և զՈրդոցն Որոտման»¹⁴:

Ի՞նչ նպատակի էին ծառայում այս պարզաբանումները: Բանն այն է, որ Հռոմի պապական աթոռը, պնդելով Հիսուս Քրիստոսի 12 աշակերտների շարքում Պետրոսի ավագությունը, պահան-

¹² Գիրք թղթոց 1901, 533:

¹³ **Մխիթար Սկևռացի** 1865, 85:

¹⁴ Գիրք թղթոց 1901, 533:

ջում էր ընդունել իր գերագահությունը՝ իբրև այդ առաքյալի հիմնած աթոռի առաջնորդի: Հասկանալի է, որ Թադեոսի՝ 70/2 աշակերտներից եղած լինելու մասին մատենագրական ավանդույթը Հռոմի պապական աթոռի դեմ պայքարում թուլացնում էր Հայոց եկեղեցու դիրքերը: Ուստի Թադեոսի՝ 12 առաքյալներից լինելը մատնացույց անելով հանդերձ՝ Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների շարքում նախապատվություն տրվեց Բարդուղիմեոսին, որի՝ Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից լինելն աներկբա էր: Այսպես՝ Միքայել Ասորու «Յաղագս քահանայութեան» երկի հայերեն թարգմանության մեջ այդ մասին կարդում ենք. «Եւ քանզի երեք Առաքեալք մտին ի Հայք, Թադէոս և Բարթողոմէոս և Յուդա Յակովբայն. և թէպէտ զառաջինն Թադէոս եկն և ապա Բարթողոմէոս և Յուդա, այլ զի ոմանք ասեն թէ Թադէոս ի յեթանասնիցն է, վասն այնորիկ դիցուք գլուխ քահանայութեան նոցա զԲարթողոմէոս և ապա զԹադէոս և ապա զՅուդա և զայլ առաջնորդս ըստ կարգի»¹⁵: Բոլորովին ոչ պատահական, նույն երկի՝ Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների և նրանց փոխանորդ հայրապետների գավազանացանկն սկսվում է Բարդուղիմեոսով. «Ա. ԲԱՐԹՈՂՈՍԷՈՍ առաքեալ, մի յերկոտասանիցն: Բ. ԹԱԴԷՈՍ, զոր Աւետարանն պատմէ՝ թէ զառաջինն կոչէր Ղեբէոս, և ի Տեանէ անուանեցաւ Թադէոս»¹⁶: Նույն գավազանացանկում նշված է նաև յոթանասնից Թադեոսը, որը Հայաստան էր եկել Եդեսիայից¹⁷: Առաքյալների թվարկման նույն հերթականությունն առկա է նաև Միքայել Ասորու «Ժամանակագրութիւն» երկի հայերեն թարգմանության մեջ. «2 (6) Բարթողիմէոս յազգէն Իսաքարայ յԱղալիր գեղջէ, քարոզեաց ի Հայաստանեայս, և անդ կատարեցաւ սքանչելի նահա-

¹⁵ Միքայել Ասորի 1871, 32:

¹⁶ Միքայել Ասորի 1871, 32:

¹⁷ Միքայել Ասորի 1871, 33:

տակութեամբ ի յուբանիոս քաղաքի, որ այժմ կոչի Հաղբակ, ի Սանատրկոյ յամբարիշտ և յանօրէն թագաւորէն»... «Ժ (10) Յուդա՝ որ կոչեցաւ Թադէ. որ վասն իմաստութեան իւրոյ ասէին Ղեբէս, որ է սիրտ և հոգի, քարոզեաց ի Հայս և յԱսորիս, և կատարեցաւ ի Սանատրկոյ ի Հայս...»¹⁸:

Հետաքրքիր է, որ Մխիթար Սկևռացին, 1263 թ. Աքքայի եկեղեցական ժողովում Հռոմի պապի պատվիրակի հետ բանավեճում ներկայացնելով առաքյալների համապատվության թեզը, միայն Բարդուղիմեոսին է հիշում իբրև հայոց առաքյալ. «Եւ ասեմ կարճառոտ, որպէս զՅովհաննէս Եփեսոսի և զԹովմաս Հնկաց, և զԲարթուղիմէոս Հայոց և զայլսն»¹⁹:

Խիստ հետաքրքրական է, որ ի տարբերություն Բարդուղիմեոսի հունարեն վարքի, դրա հիման վրա 1275 թ. գրված լատիներեն վարքում հստակ նշված է, որ առաքյալը նահատակվել է Մեծ Հայքում. «Նրա չարարանքների մասին տարբեր կարծիքներ կան: Երանելի Դորոթեոսն ասում է, որ նրան խաչեցին, նաև որ նա քարոզել է մարդկանց Հնդկաստանում և հասցրել նրանց Մատթևոսի Ավետարանը նրանց սեփական լեզվով: Նա մեռավ Ալբանուսում, որ քաղաք է Մեծ Հայքում՝ գլխիվայր խաչված»²⁰: Սա նշանակում է, որ կաթոլիկ եկեղեցին ընդունել է Հայաստանում Բարդուղիմեոսի քարոզչությունն ու նահատակությունը, ինչն իր հերթին նշանակում է, որ նույն եկեղեցին այս առաքյալին արդեն XIII դ. համարել է Հայոց եկեղեցու հիմնադիր:

Հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քննվող դրվագները, ինչպես տեսնում ենք, տեղ են գտել հիմնականում

¹⁸ **Մխիթայէ Ասորի** 1871, 101: Սակայն նույն երկի ասորերեն բնագրում նշված չէ, որ Ղեբէոս անվանյալ Թադէոս առաքյալը քարոզել է Հայաստանում (Michel le Syrien 1905, 147):

¹⁹ **Մխիթար Սկևռացի** 1865, 26:

²⁰ **Մուրադյան** 2017, 136:

Կոստանդին Ա Բարձրբերդցի (1221-1267) հայրապետի աթոռակալման շրջանում: Ժամանակի հայ մատենագրության մեջ Թադեոս առաքյալի՝ Հիսուս Քրիստոսի 12 կամ 70/2 աշակերտներից եղած լինելու վերաբերյալ նշված մեկնաբանությունները, անկասկած, չէին կարող կատարվել առանց նրա ազդեցության: Թերևս հենց այդ պայքարի յուրատեսակ արտահայտություն էին Կոստանդին Բարձրբերդցու աթոռակալման շրջանում առնվազն երկու ձեռագիր հիշատակարանների արձանագրումներն առ այն, որ նա նստել է Պետրոս առաքյալի աթոռին, այսինքն՝ եղել է նրա փոխանորդը. «Ձտէր Կոստանդին հովիւ բարի//Յաթոռ նստո ընդ Պետրոսի»²¹: Այս առումով ոչ պակաս հետաքրքրական է Թորոս Ռոսլինի գրչագրած Ավետարաններից մեկի (Մատենադարան, ձեռ. թիվ 10450) նույնպես չափածո հիշատակարանի պնդումը, թե Կոստանդին Բարձրբերդցին «Նստո յաթո կեփալյական»²²: Ինչպես հայտնի է, եկեղեցական ավանդույթում «կեփաս», այսինքն՝ վեմ, ժայռ, անվամբ կոչվել է հենց Պետրոս առաքյալը:

Սբ Բարդուղիմեոս առաքյալը Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութեան» մեջ

Հարկ է նշել, որ Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների մեջ Թադեոսի նկատմամբ Բարդուղիմեոսին նախապատվություն տալու միտումն ի հայտ է եկել ոչ թե XIII, այլ՝ դեռևս X դ.: Ինչպես իրավացիորեն մատնացույց է արել անվանի ասորագետ Միշել վան Էսբրուկը, հայ մատենագրության մեջ առաջինը Հովհաննես Ե Դրասխանակերտցի պատմիչ-կաթողիկոսն է (989-929) Բարդուղիմեոսին գերադասում Թադեոսի համեմատ (այդ մա-

²¹ ԺԳ դարի հիշատակարաններ 1984, 303:

²² ԺԳ դարի հիշատակարաններ 1984, 286:

սին վկայող քաղվածքները՝ ստորև)²³:

Վան Էսբրուկը կրկին իրավացիորեն նկատում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին նպատակ է ունեցել ցույց տալու, որ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում տակավին IV դարում եղել է պատրիարքական աստիճան: Իրականում, սակայն, Հայոց եկեղեցին իր նվիրապետական համակարգը երկու՝ մետրոպոլիտի և պատրիարքի աստիճաններով համալրել է VI դարավերջին կամ VII դարասկզբին: Այսպես, հայկական աղբյուրների հաղորդմամբ՝ նշված ժամանակահատվածում Բյուզանդական կայսրությունը Հայոց կաթողիկոսից պահանջում է կամ լրացնել իննդասյա աստիճանակարգը, կամ ենթարկվել Ընդհանրական եկեղեցու պատրիարքական աթոռներից որևէ մեկին²⁴, հասկանալի է՝ Կոստանդնուպոլսի պատրիարքությանը: Նվիրապետական աստիճանակարգը լրացնելու համար Հայոց եկեղեցին վճռում է իր ազդեցության ներքո գտնվող Աղվանից կաթողիկոսին տալ արքեպիսկոպոսի (կամ եպիսկոպոսապետի), իսկ Վրաց կաթողիկոսին՝ մետրոպոլիտ կարգավիճակ, որով նրանց նկատմամբ գերագահություն ունեցող Հայոց կաթողիկոսը կստանար պատրիարքի աստիճան²⁵:

Վան Էսբրուկի տեսակետը միանգամայն հիմնավոր է, քանզի Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց եկեղեցում իննդասյա աստիճանակարգի հաստատումը թվագրում է IV դարով՝ այդ ամենը կապելով Ներսես Ա Մեծ (353-373) կաթողիկոսի գահակալման հետ: Պատմիչ-կաթողիկոսի շարադրանքից դատելով՝ Ներսես Մեծը նախ ընտրվել, ապա Կեսարիայում ձեռնադրվել է Հայոց հայրապետ, որից հետո թագավորի և նախարարների ո-

²³ Տե՛ս **Esbroeck** 1984, 164.

²⁴ Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի** 1983, 272-274: **Ուխտանէս** 2011, 595-597: **Ստեփանոս Օրբէլեան** 1910, 100-106:

²⁵ Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի** 1983, 274: **Ուխտանէս** 2011, 596:

րոշմամբ՝ կարգվել պատրիարք. «Ապա Արշակ արքայ... առաքել Ներսէս զորդի Աթանագինեայ՝ որդւոյ Յուսկանն, ըստ առաջնոյ կարգին ի Կեսարիայ ձեռնադրիլ ի հայրապետութիւն, որ եւ սքանչելի իմն նշանք պատմի լեալ, զի մինչդեռ կայր ընդ բեմականսն ի ձեռնադրութեան անդ, շնորհք Հոգւոյն Սրբոյ աղանակերպ ի վերայ գլխոյ նորա հանգուցեքալ՝ ի զարմացումն զբոլոր կղերիկոսս եկեղեցւոյն ածեալ լինէր: Եւ այսպէս ապա լուսազարդեալ նորա, գայ հաստատէ գեղեցկադիր յարմարութեամբ զբոլոր կարգս ուղղութեան, բարենախանձ լինելով ի նախանձ հոգեւոր»²⁶: Հաջորդիվ թվարկելով Ներսես Մեծի կատարած գործերը՝ նա գրում է. «Չայսպիսի բարեկարգութեան ձեւ եւ զշուք տեսեալ ապա թագաւորին եւ նախարարացն Հայոց, այլ եւ զխստամբեր վարս նորա ճգնողականս՝ ի մտի եղեալ ըստ այլոց եւս ոմանց եւ զնա եւս նախակարգել ի պատիւ պատրիարգութեան»²⁷:

Եկեղեցական բարձրագոյն պաշտոններում Ներսես Մեծի հաստատման այս հերթականությունը՝ կաթողիկոս, ապա՝ պատրիարք, որը ներկայացված է Դրասխանակերտցու երկում, ամենևին պատահական չէ: Բանն այն է, որ պատրիարքի աթոռը զբաղեցնելու համար անհրաժեշտ էր նախ կարգվել կաթողիկոս, որը նվիրապետական իննդասյա կարգի նախավերջին աստիճանն էր, և նոր միայն՝ պատրիարք:

Դրասխանակերտցին, նույնպես ոչ պատահականորեն, պատրիարքական աստիճանի ձեռքբերումը կապում է աշխարհիկ բարձրագոյն իշխանության հետ, ինչը տեղի էր ունեցել Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ: Բոլորովին ոչ անսպասելի, պատմիչը վերոբերյալ քաղվածքից անմիջապես հետո վկայակոչում է Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռի

²⁶ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 383-384:

²⁷ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 384:

ստեղծումը՝ այն վերագրելով Կոստանդիանոս Մեծ (306-337) կայսեր որդի Կոստանդին (337-361). «Քանզի փոքր ինչ յառաջ քան զայս (Ներսես Մեծի գահակալումը – Վ.Թ.) Կոստանդոս որդի մեծին Կոստանդիանոսի յեփեսոսէ ի Կոստանդինուպալիս զնշխարս ոսկերաց Յովհաննոս անտարանչին փոխեալ, եւ յայնմանէ համարձակութիւն առեալ՝ պատրիարգ ի Կոստանդնուպալիս կացուցանէ»²⁸:

Ըստ այս տրամաբանության՝ պատրիարքությանը ներկայացվող անհրաժեշտ պայմաններից էր ավետարանչի կամ առաքյալի մասունքների առկայությունը նրան պատկանող տարածքում: Ըստ այդմ՝ Ներսեսի Մեծի պատրիարքական իշխանությունը Դրասխանակերտցին հիմնավորում է Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալների՝ Հայաստանում քարոզելու, նահատակվելու և նրանց շիրիմների՝ այստեղ գտնվելու փաստով. «Ըստ սմին սակի ապա եւ մերն թագաւորն Արշակ եւ նախարարութիւնք Հայոց համարձակութիւն առեալ՝ կացուցին ի պատրիարգութիւն տանս Թորգոմայ զմեծն Ներսէս, փաստս իրաւախորհս ըստ արժանին ի մէջ առեալ զսուրբ առաքեալսն մեր զԲարթողիմէոս եւ զԹադէոս, որք Ասքանազեանս ազին վիճակեցան ի Տեառնէ քարոզք եւ անտարանիչք. եւ նշխարեալ ոսկերք նոցա կան ի միջի մերում, զորոց եւ զաթոռն իսկ ընկալաւ կենդանի մարտիրոսն Գրիգորիոս»²⁹:

Այս քաղվածքում, թերևս, առաջին անգամ հայ մատենագրության մեջ փոխված է Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների թվարկման հերթականությունը: Բարդուղիմեոսը հիշատակվում է Թադեոսից առաջ: Դրասխանակերտցին այլուստ ևս հենց այս հերթականությամբ է հիշում նրանց. «Եւ յեալթն եւ ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ նստաւ (Գրիգոր Լուսավո-

²⁸ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 384:

²⁹ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 385:

րիչը – Վ.Թ.) յաթոռ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի...»³⁰:

Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալները նույն հաջորդակա-նութեամբ են ներկայացված նաև Դրասխանակերտցու կաթողիկոսական գավազանացանկում. «Իրաւունս եւ զայս ես Յովանէս կաթողիկոս Հայոց համարիմ գրով դրոշմել զանուանս հայրապետացն Հայոց զարանց Աստուծոյ, որք արժանի գտան աթոռոյ սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի եւ նոցունց հետեւողի սրբոյն Գրիգորի...»³¹:

Քանի որ Հայոց եկեղեցին այլևս օժտված է պատրիարքական աստիճանով, Դրասխանակերտցին նշում է, որ այդպիսով Ընդհանրական եկեղեցում պատրիարքությունների թիվը հասել է յոթի³²: Նա նաև նշում է, որ պատրիարքական աստիճանի ստեղծմամբ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում լրանում է իննդասյա կարգը. «Եւ այսպէս նահապետութիւն խորհրդոյ եկեղեցւոյ եւ ի մերումս աշխարհի լցաւ բովանդակաբար՝ ինն միանգամայն դասակարգութեամբ...»³³:

Հետևելով Մովսես Խորենացուն և մատենագրական ավանդույթին՝ Հովհաննէս Դրասխանակերտցին ևս նշում է, որ առաջինը յոթանասնից Թադէոսն է եկել Հայաստան. «Իսկ զկնի այսորիկ (Թադէոսի – Վ.Թ.) ապա եւ Բարդուղիմէոս՝ մի յերկոտասանից անտի, որ Հայաստան աշխարհիս ի Տեառնէ վիճակեցաւ, իսկոյն յայսմ ժամանակի ի Սանատրկոյ կատարի չարչարանաւք»³⁴: Մինչ այդ վերարտադրելով Թադէոս առաքյալի մասին Խորենացու պատումը՝ պատմիչը հստակ գրում է, որ նա յոթանա-

³⁰ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 379:

³¹ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 602:

³² Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 385:

³³ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 385:

³⁴ **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 377:

սուն աշակերտներից էր. «Ապա յետ համբառնալոյ փրկչին մերոյ, յերեսներորդի ամի թագաւորութեանն Արգարու Թովմաս առաքեալ՝ մի երկոտասանիցն, առաքէ զԹադէոս յեաթանասանիցն ընտրելոց բժշկել զթագաւորն Արգար...»³⁵: Եթե Դրասխանակերտցին, հետևելով Խորենացուն, ևս հավատացած է, որ Հայաստան եկած առաջին քարոզիչ-առաքյալը Թադէոսն է, ինչո՞ւ է նախապատվությունը տալիս Բարդուղիմէոսին:

Վան Էսբրուկի հողվածից, սակայն, վերջնականապես պարզ չի դառնում, թե ի՞նչ դրդապատճառ(ներ)ով է Հովհաննես Դրասխանակերտցին իննդասյա աստիճանակարգի լրացումը թվագրում IV դարով և Բարդուղիմէոսին նախադասում Թադէոսից: Կարծում ենք՝ պատասխանը նախ և առաջ բխում է հենց Դրասխանակերտցու ժամանակ տեղի ունեցած իրադարձություններից, որոնք առնչվում են միջեկեղեցական ոլորտին, որպիսին այդ ժամանակ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններն էին:

Նշենք, որ «Պատմութեան» շարադրանքին՝ նկատում ենք, որ Հովհաննես Դրասխանակերտցին շրջանցել է հայ-բյուզանդական փոխհարաբերությունների այն դրվագները, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են եկեղեցական խնդիրներին:

Այսպես, նա ակնարկ անգամ չի անում հայոց Հովհաննես Բ Գաբեղենացի (557-573) կաթողիկոսի՝ Կոստանդնուպոլսի գնալու, Սուրբ Սոֆիա տաճարում քաղկեդոնիկ ծեսով հաղորդություն ստանալու, այդ ամենի պատճառով հայրենիք չվերադառնալու, Բյուզանդիայի մայրաքաղաքում մնալու և այնտեղ մահանալու մասին: Ասորի մատենագիր Անանուն Եդեսացու հաղորդմամբ՝ 570-ական թթ. սկզբին Հայաստանում բարձրացված հակաբյուզանդական ապստամբության ժամանակ օգնության խնդրելու նպատակով Հովհաննես Բ Գաբեղենացին գնում է Կոստանդնուպոլիս և Սուրբ Սոֆիայի

³⁵ **Յովհաննես Դրասխանակերտցի** 2010, 376:

տաճարում հաղորդություն ստանում, որից հետո այլևս չի վերադառնում Հայաստան. «Սկզբում, - գրում է նա, - երբ ժամանեցին հայոց կաթողիկոսն ու իրեն ընկերացող եպիսկոպոսներն ու մեծամեծները ..., առանց հարցուփորձի նրանք գնացին ու հաղորդվեցին քաղաքի պատրիարքի հետ, առանց ստուգելու ու անհանգստանալու Քաղկեդոնի ժողովի կապակցությամբ»³⁶:

Այսօրինակ, կամ՝ ոչ պատահական այլ «մոռացումները» ևս կան Դրասխանակերտցու «Պատմութեան» էջերում: Նա թաքցնում է հայոց որոշ կաթողիկոսների՝ Կոստանդնուպոլսում եղած լինելը: Այսպես, երբ 653 թ. Հայաստան արշաված Բյուզանդիայի կայսր Կոստանդ II-ը (641-668) հարկադրված վերադառնում է Կոստանդնուպոլիս, նրա հետ կայսրության մայրաքաղաք է մեկնում նաև Ներսես Գ Տայեցի հայրապետը (641-661)³⁷:

Դրասխանակերտցին զարմանալիորեն լուռ է նաև գրեթե իր ժամանակ տեղի ունեցած Շիրակավանի 862 թ. եկեղեցական ժողովի մասին, որտեղ քննվել է Կոստանդնուպոլիսի Փոստ պատրիարքի նամակ-առաջարկը Հայոց Զաքարիա Ա Ձագեցի (855-876) կաթողիկոսին³⁸:

Դրասխանակերտցու «Պատմութեան» էջերում հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին առնչվող վերոբերյալ իրողությունների չարձանագրումը, անշուշտ, չի կարող պատահական լինել: Այդ դեպքում, ինչո՞ւ է պատմիչ-կաթողիկոսը

³⁶ Ասորական աղբյուրներ 1982, 391-392: Հաջորդիվ ասորական աղբյուրը հայտնում է, որ «երբ եղածն իմացան իրենց երկրում (Հայաստանում - Վ.Թ.), բարկացան նրանց վրա եպիսկոպոսներն ու բոլոր բնակիչները և խիստ նամակ գրեցին նրանց, այնպիսի խոսքեր (գրեցին), որոնց մասին ավելի լավ է առայժմ լռել: Այդ պատճառով (եկածները) բաժանվեցին ու ստեղծեցին իրենց համայնքը մեծ դղյակներից մեկում, որտեղ ապրում էր իրենց (հայ) մեծամեծներից մեկը» (Ասորական աղբյուրներ 1982, 392):

³⁷ Տե՛ս **Սեբեոս** 1979, 168, 174-175:

³⁸ Շիրակավանի ժողովի մասին մանրամասն տե՛ս **Անանեան** 1992, **Գրիգորյան** 2011:

հետևողականորեն թաքցնում հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների այդ դրվագները: Աներկբա է, որ այդ շրջանցումներն արվել են որոշակի նպատակով:

Տրամաբանական է կարծել, որ նա այդ ամենն արել է իր ժամանակի ինչ-ինչ իրողություններից ելնելով, որոնք առնչվում են հայ-բյուզանդական հարաբերություններին:

Նախ՝ Կոստանդնուպոլիս հայոց կաթողիկոսների չգնալու մասին: Դեռևս 913 թ. Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսին (901–907, 912–925) գրած նամակում Հովհաննես Ե Դրասխանակերտցին հայտնում էր, որ փափագում է այցելել Կոստանդնուպոլիս, սակայն Աշոտ Բ թագավորին (914–928) ճանապարհելով, հրաժարվում է մեկնել՝ երկյուղելով մեղադրվել քաղկեդոնականություն ընդունելու մեջ. «Իսկ իմ չուեալ գնացի ի գաւառն Դերջան. և ամսարեայ աւուրս ինչ ի նմա գետեղեալ, թէպէտ եւ ստէպ ստէպ հրաւիրակն կոչէր սիրալիր կամաւք երթալ ի պալատն առ կայսր, սակայն ես ոչ կամեցայ, զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի ոք եւ ընդ ակամբ հայեսցի զանդ երթալն իմ՝ ի քաղկեդոնիտոսն յարակցել ինձ համարեալ: Եւ ապա այսպէս ոչ կամեցայ գնալ ի գայթակղութիւն մտաց տկարաց»³⁹:

Արդյոք գնալու պարագայում Հովհաննես Դրասխանակերտցուն պարտադրելով էին քաղկեդոնականություն, թե՞ ոչ, այլ խոսքով՝ իրակա՞ն էր նրա մտավախությունը: Այս հարցերի պատասխանները, որոնք նաև օգնում են բացահայտել Դրասխանակերտցու ծրագրի դրդապատճառները, պետք է փնտրել իրեն և Սմբատ Ա Բագրատունի թագավորին (890-914) Նիկողայոս Միստիկոսի հղած 101-րդ և 139-րդ նամակներում, որոնք ականավոր բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանի հայերեն թարգմանության⁴⁰ շնորհիվ

³⁹ **Հովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 533-534:

⁴⁰ Տե՛ս **Բարթիկյան** 1966, 251-256:

հասու դարձան հայագետների լայն շրջանակի:

Հրաչ Բարթիկյանի հիմնավոր քննությամբ պարզվել է նամակների գրության ժամանակն ու հանգամանքները: Այսպես՝ ժամանակագրորեն առաջինը 139-րդ նամակն է, որի հասցեատերը Սմբատ Ա-ն է: Այն ուղարկվել է 912/913 թթ.: Նամակի թվագրման համար հիմք է ծառայել հատկապես այն, որ դրանում խոսք կա Հայոց նոր հայրապետի ընտրության մասին: Այսինքն՝ պատրիարքը համոզված է, որ իրեն զուգահեռ աթոռակալած Հովհաննես Դրասխանակերտցին ողջ չէ, և պետք է ընտվի հայոց նոր կաթողիկոս: Ահա թե ինչ է գրում պատրիարքը Հայոց թագավորին. «Քո ներկայացուցիչների զեկուցման առթիվ (գրված մեր) նամակը, ո՛վ որդյակ, որպես նախաբան ահա այս է ասում: Նրանք ասացին, որ պետք է մտածել ձեր այս կյանքից հեռացած կաթողիկոսի առթիվ, որ դուք, որպես մեր մեծ և աստվածապսակյալ կայսեր հարազատ և համախոհ բարեկամները, ջանալով նրա հետ ամեն ինչում համամիտ լինել, ցանկանում եք, որ ձեր ապագա քահանայապետը ձեռնադրությունն ստանա այստեղի եկեղեցուց և աստուծո հաճությամբ նրան միայն ճանաչեք (որպես կաթողիկոս) մեզ հետ միասին սուրբ զոհասեղանի շուրջ կանգնող: Որովհետև աստուծո կողմից տրված պատվասիրության և շնորհքի հետ միասին, քեզ այդ էլ շնորհվեց (դու գիտես, որ խոհեմ լինելով, աստուծո ինչպիսի բարերարությանը արժանացար, բարերարություն, որի ապացույցներից մեկն էլ այն է, որ այդպիսի միտք հղացար, որ բոլոր հարցերում համամիտ լինես մեր աստվածապահ կայսեր): Քեզ մնում է այստեղ ուղարկես աստծո համաձայնությամբ (առաջադրվելիք) ձեր ապագա քահանայապետին, որպեսզի (նա) ստանա բարեպաշտության առավել ճշգրիտ դավանանքը, լինելով մեզ հետ ինչքան ժամանակ որ նա ցանկանա, ծանոթանա բարեպաշտության հարցերին և եկեղեցական իրավիճակին, որից հետո, արժանանալով ձեռնադրության, վերադառնա ձեր պայծառափայլ ազն-

վությանը, ձեր իշխանության լիության»⁴¹: Թե որքանով է ստույգ պատրիարքի գրածն այն մասին, որ Հայոց կաթողիկոսի ձեռնադրությունը Կոստանդնուպոլսից ստանալու առաջարկը եղել է Հայոց թագավորինը, դժվար է ասել, սակայն անկախ այդ ամենից, ակնհայտ է, որ բյուզանդական կողմն ի դեմս պատրիարքի և կայսեր, հետամտել է Հայոց եկեղեցուն վարչական ու դավանական առումով իրենց ենթարկելու նպատակ:

Երկու նամակներում էլ կարմիր թելի նման անցնում է գիշումների դիմաց օգնություն տրամադրելու գաղափարը:

Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես հայտնի է, առանց որևէ օգնության կարողանում է փախչել գերությունից: Սմբատ Ա-ը, անկասկած, նրան տեղեկացրել է Նիկողայոս Միստիկոսի գրած նամակի մասին, ինչը բացահայտ սպառնալիք էր Հայոց կաթողիկոսի ինքնիշխանությանը:

Սմբատ Ա-ի եղբրական սպանությունից հետո երկրում ստեղծված ծանր վիճակը, այն հաղթահարելու համար իր օգնությանն ապավինելու հայկական կողմի դիմում-խնդրանքները, դրանց ի պատասխան Հայոց գահաժառանգ Աշոտին Կոստանդնուպոլսում հյուրընկալելն ու նրա իշխանությունը ճանաչելը կայսրությունը համարեց միանգամայն նպաստավոր՝ գերությունից ազատված Հովհաննես Դրասխանակերտցուն բյուզանդական եկեղեցու գերիշխանությունն ընդունելու պահանջ ներկայացնելու համար: Այսպես՝ ակնարկելով Հայաստանին ցուցաբերած օգնությունը՝ Նիկողայոս Միստիկոսը Դրասխանակերտցուն 915 թ. գրած նամակում բացահայտ պահանջում է ընդունել կայսրության, ասել է թե՛ իր աթոռի գերագահությունը. «Մեծ և աստվածապսակյալ կայսրը ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով, ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու

⁴¹ **Բարթիկյան** 1966, 255-256:

նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց: Ահա այս (բոլորը) կատարվեց կայսեր կողմից ձեզ համար: Ձեր կատարելությունը պետք է պատկերացնի բարեգործության չափը և այդ իսկ պատճառով պատվի բարերարին: Էլ ի՞նչ այլ պատիվ է ակնկալում բարերարը, քան այն, որ իր բարեգործությանն արժանացողը ամեն ինչում ցուցաբերի իր բարեհաճությունը և ջանա ամեն կերպ համամիտ լինել նրան և կատարի նրա կամքը»⁴²: Հաջորդիվ Կոստանդնուպոլսի պատրիարքը կաթողիկոսին և արքային հորդորում է գործնական քայլերով և, որ ամենակարևորն է՝ սեփական օրինակով, ժողովրդին պատրաստել՝ ընդունելու կայսրության քաղաքական և եկեղեցական գերիշխանությունը. «Բավական է, որ և քո կատարելությունը և նա, ում վիճակվել է ձեր իշխանությունը, բարեհաճ լինեն վերոհիշյալ հարցերում և դառնան իսկական բարեկամներ. ներկա և ապագա սերունդներին ցույց տաք ձեր երախտագիտությունը, դուք, բարեգործության արժանացողներդ, իսկական հավատարմության օրինակ ցույց տաք»⁴³:

Հովհաննես Դրասխանակերտցին քաջ գիտակցում էր, որ Հայոց թագավորության թուլացմանը զուգընթաց աճելու էին Հայաստանը նվաճելու և Հայոց եկեղեցին իր գերազահության ենթարկելու Բյուզանդական կայսրության նկրտումները: Կաթողիկոսը, որը նախ և առաջ պատասխանատու էր Հայոց եկեղեցու վարչական ու դավանական ինքնուրույնության պահպանման համար, վճռեց գաղափարական պատվար ստեղծել Բյուզանդիայից եկող մարտահրավերներին հանդիման: Ահա հենց դրանց ի պատասխան ու հակակշիռ՝ Հովհաննես Դրասխանակերտցին առաջ քաշեց Հայոց

⁴² Բարթիկյան 1966, 255:

⁴³ Բարթիկյան 1966, 255:

կաթողիկոսության՝ պատրիարքական աթոռներին համապատիվ և համազոր լինելու տեսությունը՝ մատնանշելով, որ հայոց հայրապետական Աթոռը ևս օժտված է պատրիարքական աստիճանով:

Եզրակացություններ

Հայոց եկեղեցական ավանդույթում Թադեոս առաքյալի՝ Հիսուս Քրիստոսի 12 կամ 70/2 աշակերտներից եղած լինելու մասին տեղեկությունները XIII դ. հայ մատենագրության մեջ նորոպի մեկնաբանվեցին: Պատճառը՝ Հայոց կաթողիկոսին իր գերագահությունն ընդունելու վերաբերյալ Հռոմի պապական աթոռի ներկայացրած պահանջն էր: Դրան ի պատասխան՝ հայ մատենագրական երկերում Թադեոսի՝ Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից մեկը եղած լինելը հիմնավորելուն զուգընթաց, Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների շարքում նախապատվությունը տրվեց Բարդուղիմեոսին: Վերջինիս նախադասելու միտումը, սակայն, ի հայտ է եկել տակավին X դ.՝ շրջանառվելով պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու երկերում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս խնդիրը ծրագրային բնույթ ունի Դրասխանակերտցու աշխատություններում, որոնցում, ի հակակաշիռ Բյուզանդական կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության գերագահական նկրտումների, հեղինակն ընդգծում է Հայոց կաթողիկոսության համապատվությունը ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև Ընդհանրական եկեղեցու մյուս պատրիարքական աթոռներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անանեան Պ. 1992, Զաքարիա Հայոց կաթողիկոսի թղթակցութիւնը Փոռ Պատրարքին հետ, Վենետիկ-Ս. Ղազար, (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», N 35), 100 էջ:

Ասորական աղբյուրներ 1982, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, հ. Բ, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ.Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 267 էջ:

Բարթիկյան Հր. 1966, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «Պատմաբանասիրական հանդես», N 4, էջ 251-256:

Գիրք թղթոց 1901, Թիֆլիս, 584 էջ:

Գրիգորյան Մ. 2011, Շիրակավանի 862 թ. եկեղեցական ժողովը, «Հայոց պատմության հարցեր», N 12, էջ 47-63:

ԺԳ դարի հիշատակարաններ 1984, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 988:

Միխայել Ասորի 1871, Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորոյ Պատրիարքի, յերուսաղէմ, 526 էջ:

Միխայել Ասորի 1871, Յաղագս քահանայութեան, Նորին Տն. Միխայելի պատրիարքի Ասորոց, Յաղագս քահանայութեան թէ ուստի սկսանի եւ ուր կատարի, եւ թէ զինչ է քահանայութիւնն, յերուսաղէմ, 45 էջ:

Մխիթար Սկեռացի 1865, Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեռացոյ Յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց, յերուսաղէմ, 88 էջ:

Մովսէս Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 485 էջ:

Մովսէս Կաղանկատուացի 1983, Աղուանից աշխարհի պատմութիւն, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 384 էջ:

Մուրադյան Գ. 2017, Թաղետոս և Բարդուղիմեոս առաքյալների մասին լեգենդի տարբերակները միջնադարյան բնագրերում, Արշալույս քրիստոնեության հայոց, (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, էջ 133-140:

Յոհաննէս Դրասխանակերտցի 2010, Պատմութիւն հայոց, «Մատենագիրք հայոց», ԺԱ. հ., Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, էջ 317-600:

Յոհաննէս Դրասխանակերտցի 2010, Շարից հայրապետացն

հայոց յայտարարութիւնք, «Մատենագիրք հայոց», ԺԱ. հ., Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, էջ 602-608:

Ուխտանէս 2011, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Գիրք Բ., Երեւան, էջ 441-616:

Սեբէոս 1979, Պատմութիւն, աշխատասիրությամբ՝ Գ. Աբգար-յանի, Երևան, էջ 445:

Ստեփանոս Օրբէլեան 1910, Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 618 էջ:

Վկայաբանութիւն 1853, Վկայաբանութիւն եւ գիտ նշխարաց Ս. Թադէի առաքելոյ եւ Սանդիստոյ կուսի, «Սոփերք Հայկականք», հ. Ը., Վենետիկ, 102 էջ:

Տեր-Ղևնդյան Վ., Թորոսյան Վ. 2021, Հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քաղաքական ենթահողը (12-րդ դարի 30-40-ական թթ.), «Բանբեր Մատենադարանի», N 31, էջ 5-22:

Anna Comnena 2009, The Alexiad, translated by E. A. Sewter, Revised with Introduction and Notes by Peter Frankopan, Penguin Classics, p. 584.

Dvornik F. 1958, The Idea of Apostolicity in Byzantium and the Legend of the Apostle Andrew, Harvard University Press, Cambridge, Massachusetts, p. 342.

Dvornik F. 1979, Byzantium and the Roman Primacy, translated by Edwin A. Quain, S.J., Fordham University Press, second printing, with corrections, p. 176.

Esbroeck van M. 1984, The Rise of Saint Bartholomew's Cult in Armenia from the Seventh to the Thirteenth centuries, “Medieval Armenian Culture”, Edited by Thomas J. Samuelian and Michael E. Stone. University of Pennsylvania, Armenian Texts and Studies 6. Chico, CA: Scholars Press, pp. 161-178.

Hamilton B. 1996, The Latin Church in the Crusader States, “East and West in the Crusader States, *East and West in the Crusader States*, Context-Contacts-Confrontations”, (Acta of congress held at Hernen Castle in May 1993), Edited by Krijnie Ciggaar, Adelbert Davids and Herman Teule, Uitgeverij Peeters, Leuven, p. 2-19.

Michel le Syrien 1905, Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche, 1166-1199, Éditée pour la première fois et traduite

eu français par J.-B. Chabot, t. III, Paris, p. 538.

Ваге Г. Торосян, *Институт истории НАН РА, к.и.н.*, Предание святого Апостола Варфоломея в контексте армяно-латинских и армяно-византийских церковных отношений (с X в. до середины XIII в.).

Резюме

В 40-х гг. XIII в. в армяно-латинских церковных отношениях произошли значительные изменения. В этот период Папа римский настаивал на том, чтобы Католикос Всех Армян признал его верховенство. Свое главенство над Вселенской церковью Папа римский обосновывал тем, что он является наместником святого Петра, первоверховного апостола. В ответ на это Армянская Церковь подчеркнула, что была основана апостолами Фаддеем и Варфоломеем.

Чтобы ослабить позицию Армянской Церкви, Папа указал на то, что, по некоторым данным, святой Фаддей не был причислен к двенадцати ученикам Иисуса Христа. Настаивая на том, что основатель Армянской Церкви, апостол Фаддей, действительно был одним из двенадцати учеников Христа, армяне одновременно стали подчеркивать значение апостола Варфоломея. Согласно всем Евангелиям, Варфоломей был одним из двенадцати апостолов Христа.

Следует отметить, что склонность к предпочтению Варфоломея перед Фаддеем возникла в Армянской Церкви уже в X веке в ответ на требования Византийской империи и Константинопольского патриархата признать их верховенство.

Ключевые слова: Св. Фаддей, Св. Варфоломей, Ованес Драсханакертский, Николай Мистик, Католикос Армении, Папа Римский, Патриарх Константинопольский, апостол, верховенство.

Vahe H. Torosyan, *Institute of History of the NAS RA, Phd in History,*
The Tradition of Saint Bartholomew the Apostle in the Context of
Armenian-Latin and Armenian-Byzantine Church Relations (from the
10th to the mid-13th cc.)

Summary

In the 1240s, significant changes took place in the Armenian-Latin church relations. During this period, the Pope insisted that the Catholicos of All Armenians accept his supremacy. The Pope justified his supremacy over the Universal Church by claiming to be the vicar of St. Peter, the chief of the apostles. In response, the Armenian Church emphasized its apostolic lineage, tracing its foundation back to the apostles Thaddeus and Bartholomew.

To undermine the Armenian Church's position, the Pope pointed out that, according to some accounts, Saint Thaddeus was not counted among the twelve disciples of Jesus Christ. In order to affirm that the founder of the Armenian Church, the apostle Thaddeus, was indeed one of the twelve disciples of Christ, the Armenians concurrently began to highlight the significance of the apostle Bartholomew. According to all the gospels, Bartholomew was one of the twelve apostles of Jesus Christ.

It is worth noting that the inclination towards favoring Bartholomew over Thaddeus emerged in the Armenian Church as early as the 10th century, in response to the demands of the Byzantine Empire and the Patriarchate of Constantinople to recognize their authority.

Key words: St. Thaddeus, St. Bartholomew, Hovhannes Drashanakertsi, Nikolai Mystic, Catholicos of Armenia, Pope of Rome, Patriarch of Constantinople, apostle, supremacy.

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

artashesshahnazaryan.1950@gmail.com

ID 0009-0006-7000-5335

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-49

ԹՄՈԳՎԵՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՏՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ*

Քանալի բառեր¹ Թմոգվի, Վահրամ, Սարգիս Ա., Թաղիադին, Թամար թագուհի, Սարգիս Բ Բասեն:

Ներածություն

XII դ. վերջերից XIV դ. երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում Ջաքարյան ավատատիրական տոհմը որոշ ընդմիջումներով փաստացի տնօրինում էր հյուսիս-արևելյան՝ Ջաքարյան Հայաստանի կյանքի բոլոր բնագավառները: Վերջինս ներառված էր վրացական թագավորության կազմի մեջ, իսկ Ջաքարյան իշխաններն իբրև վրաց Բագրատունիների հավատարիմ ու հզոր ստորականներ վարում էին արքունական բարձրագույն պաշտոններ: Դրա շնորհիվ նրանք դժվար գերազնահատելի դեր էին խաղում նաև վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում ու հայ-վրացական տարաբնույթ առնչություններում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ջաքարյան ավատատիրական տան պատմությունն ու դրան հարակից որոշ հարցեր տասնամյակներ ի վեր հայ ու օտար (հատկապես վրաց) պատմագիտության ուշադրության կենտրոնում են: Այդուհանդերձ, չնայած կատարված մեծ աշխատանքին, Ջաքարյանների պատմության հետ կապված առանձին հարցեր կարոտ են նորովի կամ առանձին քննության:

* Ներկայացվել է 26.IX.2023 թ., գրախոսվել է 10.X.2023 թ. և 11.X.2023 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2023 թ.:

Նման հարցերից է Չաքարյան ավատատիրական տան երկու կրտսեր ճյուղերից Թմոզվեցիների պատմությունը: Այն, ի տարբերություն վրացականի, հայ պատմագիտության մեջ թեկուզ փոքրածավալ հետազոտության առարկա չի եղել: Փորձենք գիտական պարբերականի ընձեռած հնարավորությունների սահմաններում հնարավորինս լրացնել այդ բացը: Առավել ևս, որ վրաց պատմագիտության մեջ այդ հայկական իշխանական տան պատմությունն անաչառ չի ներկայացվել:

Թմոզվեցիների իշխանական տոհմի առաջացումը և վերելքը

Թմոզվեցիների իշխանական տոհմը ծագում է Չաքարյան ավատատիրական տան մեզ հայտնի առաջին սերունդը ներկայացնող ավագ Սարգսի կրտսեր թոռ Վահրամից՝ Չաքարե Ա-ի որդուց: Նա մեծ Սարգսի կրտսեր եղբայրն էր: Դատելով Վահրամի որդուն 1176 թ. կեսերին մեծ Սարգսի խնամակալելուց¹, նա այդ ժամանակ կենդանի չէր: Վահրամն ուներ երկու որդի: Նրանցից ավագը Չաքարեն էր, որը տարիքով մեծ նույնանուն հորեղբորորդուց տարբերվելու համար ստացել էր Բլուզ (փոքր, կրտսեր) մականունը²: Վահրամի կրտսեր որդին կոչվում էր Սարգիս: Ինչպես տեսնում ենք, նա որդիներից ավագին անվանել էր ի պատիվ հոր՝ Չաքարե Ա-ի, իսկ կրտսերին պապի՝ ավագ Սարգսի:

Հենց Վահրամի որդի Սարգիսը՝ Սարգիս Ա Թմոզվեցին էր, որ դարձավ Չաքարյանների Թմոզվեցի կոչված և իր հորից ծագած ճյուղի հիմնադիրը: Նա առաջին անգամ հիշատակվում է իր հորեղբորորդիներ Չաքարե Բ-ի և Իվանե Ա-ի ու եղբայր Բլուզ Չաքարեի հետ 1185–1187 թթ. միջակայքում իրենց զորքով «Դվինի երկիր» ձեռնարկած հաջող ավարտ ունեցած արշավանքի կա-

¹ Տե՛ս Կարտլիս Աջոփրեբա 2008, 251:

² Տե՛ս **Շահնազարյան** 1990, 48–49:

պակցությամբ³: Ընդ որում, Թամար թագուհու (1184–1207) առաջին պատմիչի համաձայն, նա և Իվանե Ա-ն ի տարբերություն Զաքարե Բ-ի և Բլուզ Զաքարեի պալատում դեռևս «պաշտոնապես ընդունված» չէին⁴, այսինքն հատուկ աստիճանով պետական ծառայության չէին ընդունվել⁵: Ս. Կակաբաձեն կարծել է, որ այդ ժամանակ Սարգիս Ա Թմոզվեցին դեռ չափահաս չէր ճանաչվել⁶: Սակայն վերոհիշյալ արշավանքին նրա մասնակցությունը թույլ է տալիս պնդելու, որ Սարգիս Ա Թմոզվեցին այդ ժամանակ չնայած դեռ պետական ծառայության մեջ ընդունված չլինելուն, արդեն չափահաս էր: Հետևաբար, նա պետք է որ ծնված լինի 1160-ական թվականների սկզբին, քանի որ ի տարբերություն ավագ եղբոր՝ 1176 թ. Օրբելիների բարձրացրած ապստամբությանը չէր մասնակցում⁷:

Սարգիս Ա Թմոզվեցին «Դվինի երկիր» կատարած արշավանքից քիչ անց հորեղբորորդիների ու եղբոր հետ մասնակցում է «Գանձակից ներքև»՝ մինչև Բելաքոնի, ապա Արաքսից վերև մինչև Մասիս ընկած երկրներ»⁸ կատարած հաջող ելք ունեցած մեկ այլ արշավանքի:

Զաքարյան հորեղբորորդիները գործուն մասնակցեցին նաև Թամար թագուհու դեմ նրա առաջին ամուսին Յուրի Բոգոլյուբսկու (Գեորգի Ռուս) 1190 թ. բարձրացրած ապստամբության ճնշմանը: Ընդ որում, Ջավախքում ապստամբների դեմ Թամարի

³ Տե՛ս Կարտլիս Լժովբեթա 2008, 260:

⁴ Տե՛ս Կարտլիս Լժովբեթա 2008, 260:

⁵ Տե՛ս Կարտլիս Լժովբեթա 2008, 297, որ. 180:

⁶ Տե՛ս Յակոբ Արթուրյան, 1913, 5: Ք. Մելիքսեթ-Բեկը հակված է կարծելու, որ Սարգիս Ա Թմոզվեցին ծնվել է «1170 թուի մօտերքում» (Մելիքսեթ-Բեկ Լևոն 2010, 356): Պ. Մուրադյանի կարծիքով Սարգիս Ա Թմոզվեցին 1191 թ. «Թմոզվի տիրակալ դառնալու համար ... առնվազն 30–40 տարեկան պիտի լիներ» (Վրաց ժամանակագրություն (1207–1318), 1971, 198, ծան. 36):

⁷ Տե՛ս Կարտլիս Լժովբեթա 2008, 258:

⁸ Կարտլիս Լժովբեթա 2008, 260.

կողմնակիցների վճռական հաղթանակի լուրը նրան հասցրեց Սարգիս Ա Թմոզվեցին⁹:

Ապստամբության ճնշումից հետո, ինչպես և պետք էր սպասել, Թամար թագուհու կողմնակիցները, հատկապես Զաքարյան հորեղբորորդիները, արժանացան տարաբնույթ շնորհումների: Նախքան այդ կամ Խոժոռնիի շրջակայքում, կամ, որ ավելի հավանական է, Քուրդ-Վաճառի ձորում փոքրիկ տիրույթ ունեցող Սարգիս Ա-ն ի տիրապետություն ստացավ Ջավախքում գտնվող Թմոզվի (Թմուկ) բերդը¹⁰: Բնականաբար, նրան տրվել էր նաև դրա շրջակա տարածքը: Այդուհետ վրացական սկզբնաղբյուրներում, իսկ հետագայում հայ և վրաց պատմագիտության մեջ Սարգիս Ա-ն ու իր հետևորդները հայտնի են իբրև Թմոզվեցիներ: Հայկական սկզբնաղբյուրներում այդ տոհմի անդամները վկայվում են միայն անձնանվամբ:

Զաքարյան ավատատիրական տան մյուս ճյուղերի՝ Շահնշահյանների, Ավագյանների ու Վահրամյանների (Գագեցիներ) համեմատ Թմոզվեցիների իշխանության ձևավորումը վաղ ավարտվեց: Այն սահմանափակվեց Թմոզվին իր շրջակա տարածքով ի տիրապետություն ստանալով: Հ. Մարգարյանն այս իրողությունը պայմանավորել է նրանով, որ «նոր տարածքային ձեռքբերումների համար նրանց (Թմոզվեցիների – Ա. Շ.) հնարավորությունները սահմանափակ էին»¹¹: Սակայն պնդելի է, որ հայկական ու վրացական հողերով շրջապատված այս իշխանությունն ընդարձակվելու սուկ տեսական հնարավորություններ ուներ:

Ինչպես Զաքարյանների մյուս ճյուղերի իշխանությունները, այնպես էլ Սարգիս Ա Թմոզվեցունը, սահմանազխային կուսակալություն էր՝ կոչված պաշտպանելու բուն Վրաստանի սահման-

⁹ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 265:

¹⁰ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 266:

¹¹ Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ 2014, 230:

ների անվտանգությունը տվյալ դեպքում Ջավախքից: Այդ է վկայում Թամար թագուհու երկրորդ պատմիչը, փաստելով, որ «Վերևում Ջավախքն էր, որտեղ կուսակալներ էին Սարգիս Երկայնաբազուկ – Թմոզվեցին և Շավլա Թորելին»¹²:

Եղբոր ու հորեղբորորդիների նման զորավարական անուրանալի տաղանդով օժտված Սարգիս Ա թմոզվեցին նրանց հետ եռանդուն մասնակցում էր սելջուկյան տիրապետության տակ գտնվող հայկական հողերի ազատագրման համար մղվող մարտերին: Նա ոչ միայն մասնակցեց Գանձակի Ելտկուզյան աթաբեկ Նուրաթ ադ-դին աբու Բաքրի (1186–1195) բանակի ու հայվրացական զորքերի միջև 1195 թ. հունիսի 1-ին Շամքորի մոտ կայացած ճակատամարտին, այլև հաղթանակի լուրը հասցրեց Թամար թագուհուն¹³:

Դրանից հետո նա օգնում էր եղբորը՝ Բլուզ Ջաքարեին, Գանձակի թուլացած Ելտկուզյան աթաբեկության տիրապետության տակ գտնվող հայկական գավառների ազատագրմամբ ընդարձակելու իր իշխանությունը: Կիրակոս Գանձակեցու համաձայն «իշխանն Ջաքարե անուն և եղբայրն իր Սարգիս, և միս Սարգիս, հայրն Շալուէի ու Իանէի, ազգականք մեծ իշխանացն (Ջաքարե Բ և Իվանե Ա Ջաքարյանների – Ա.Շ.), ձեռնտուութամբ նոցին՝ առին և նոքա բազում գաառս ի պարսից և բերդս ամուրս»¹⁴: Սա շարունակվեց մինչև հիջրի 301 թ. (29 օգոստոս 1204 – 17 օգոստոս 1205), երբ հայվրացական զորքերի Ատրպատական կատարած արշավանքը գլխավորելիս Բլուզ Ջաքարեն զոհվեց¹⁵:

Սարգիս Ա Թմոզվեցին մասնակցել է նաև Կարսի առման հա-

¹² Картлис Цховреба 2008, 311.

¹³ Տե՛ս Կարտլիս Ըխօրեբա 2008, 309:

¹⁴ **Կիրակոս Գանձակեցի** 1961, 163: Ջաքարյանների և, մասնավորապես, Թմոզվեցիների հետ Թորելիներից սերված Ախալցխիսելիների ազգակցական կապի ժխտումը տե՛ս **Շահնազարյան** 1990, 29–30, ծան. 2:

¹⁵ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 11, 1981, 284:

մար մղված համառ մարտական գործողություններին: Թամար թագուհու երկրորդ պատմիչի վկայությամբ «վաղ ժամանակից ի վեր այդ քաղաքի (Կարսի – Ա.Շ.) համար կոչվում էին Սարգիս Թմոզվեցին, Շավվա Թորելին և մեսխերը, բայց ոչ մի ուժով չէին կարողանում այն գրավել»¹⁶: Ի վերջո, Կարսը Ջաքարյանների գլխավորությամբ 1206/1207 թ. ձմռանը գրավվեց¹⁷:

Կարսի հետ կապված իրադարձություններից հետո Սարգիս Ա Թմոզվեցին որևէ սկզբնաղբյուրում չի հիշատակվում: 1211 թ. աշնանից 1212 թ. սկիզբն ընկած ժամանակահատվածում Ջաքարյանների գլխավորությամբ հայ-վրացական զորքերի դեպի Ատրպատական ու Խորասան կատարած խոշոր ու հաջող ընթացք ունեցած արշավանքին մասնակցում էր ոչ թե նա, այլ որդին՝ Թադիադինը¹⁸: Այս հանգամանքը թույլ է տալիս պնդելու, որ դեռևս առաջացած տարիք չթևակոխած Սարգիս Ա Թմոզվեցին արդեն մահացած էր և Թմոզվեցիների տոհմի գլուխ էր անցել Թադիադինը, որը դեռ հոր կենդանության օրոք հայտնի ռազմական գործիչ էր:

Ամենայն հավանականությամբ 1170-ականների վերջին ծնված, սպասալարի տիտղոս ունեցող և զորավարական տաղանդով ու խիզախությամբ օժտված Թադիադին Թմոզվեցին հիշատակվել է միայն Թամար թագուհու առաջին պատմիչի կողմից, այն էլ ընդամենը երկիցս: Պատմիչն առաջին անգամ նրան անդրադարձել է Բասենի 1202 թ. նշանավոր ճակատամարտի մասին պատմելիս: Նա Թադիադինին բնութագրել է իբրև «քաջ տղամարդու», հավելելով, որ այդ ճակատամարտի ընթացքում ի թիվս այլ զորավետերի ձիերի, սպանվել էր նաև նրա ձին¹⁹: Այս հանգամանքը

¹⁶ Картлис Цховреба 2008, 317.

¹⁷ Տե՛ս **Շահնազարյան** 2005, 35–36:

¹⁸ Տե՛ս Картлис Цховреба 2008, 288:

¹⁹ Տե՛ս Картлис Цховреба 2008, 284:

վկայում է, որ Թաղիադին Թմոզվեցին մարտնչում էր ճակատի առաջին գծում:

Թաղիադինի զորավարական տաղանդն ու խելահեղության հասնող խիզախությունը դրսևորվեց նաև հետագայում՝ հայ-վրացական զորքերի՝ դեպի Ատրպատական ու Խորասան կատարած վերոհիշյալ արշավանքի ժամանակ: Նա Մարանդ քաղաքին մերձակա լեռան մոտ 500 հոգանոց զորախմբով գլխովին ջախջախեց հակառակորդի զորաբանակը, չտալով ոչ մի զոհ: Պատմիչի այնդամսբ «Չնայած այդպիսի հաղթանակ էր տարվել, Թաղիադինն այնուամենայնիվ մեղադրում էին. նրան հատկապես մեղադրում էր Ջաքարիան (Ջաքարե Բ-ն – Ա.Շ.), քանի որ նա մարտի մեջ էր մտել առանց այդ մասին տեղյակ պահելու»²⁰:

Թմոզվեցիների իշխանական փոհմը Սարգիս Բ Թմոզվեցու օրոք

Թե մինչև ե՞րբ է ապրել Թաղիադին Թմոզվեցին, հայտնի չէ: Հայտնի է միայն, որ Թմոզվեցիներին վերաբերվող ժամանակագրորեն հաջորդ տեղեկությունը թվագրվում է 1230-ական թվականների երկրորդ կեսով և Թաղիադինի որդի Սարգիս Բ Թմոզվեցու մասին է: Նա Թմոզվեցիների իշխանական տոհմի ամենահայտնի ներկայացուցիչն է: XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրը նրան բնութագրել է երկիցս: Առաջին անգամ իբրև «գիտուն և իմաստասեր», իսկ երկրորդ անգամ՝ որպես «իմաստնացած, իմաստասեր ու ճարտասան» մարդու»²¹: Վրացական թագավորության ռազմաքաղաքական ու մշակութային երկարատև ու գործուն մասնակցության բերումով նա աղբյուրներում Թաղիադինից անհամեմատ շատ է վկայակոչվում:

Հորից հետո Թմոզվեցիների իշխանական տոհմի ավագույթ-

²⁰ Картлис Цховреба 2008, 288.

²¹ Картлис Цховреба 2008, 347, 357.

յունն առնվազն 1235-ին ստանձնած և 1261/1262-ին կենդանի Սարգիս Բ Թմոզվեցին պետք է որ ծնված լինի XIII դ. առաջին տասնամյակում: Վրաց ժամանակագրի համաձայն մոնղոլների կողմից 1236 թ. հյուսիս-արևելյան՝ Ջաքարյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը գրավվելուց հետո նա ի թիվս այլ հայ ու վրաց իշխանների հպատակվեց մոնղոլներին²² և պահպանեց իր իշխանությունը: Այն դարձավ այնտեղ մոնղոլների ստեղծած 25 վարչական շրջաններից մեկը: Սակայն 1245 թ. առաջին կեսին Ռուսոդան թագուհու (1223–1245) մահվանից հետո մոնղոլներն այդ վարչական շրջանները խոշորացրեցին՝ մտցնելով 10 հազարանոց բանակ հանելու կարողություն ունեցող 7 ռազմավարչական միավորների՝ թումանների մեջ: Քանի որ միմյանց սահմանակից Թմոզվեցիների ու Թորելիների իշխանություններն առանձին-առանձին այդքան զորք հանելու ունակ չէին, մտցվեցին մեկ թումանի մեջ, որի գլուխ կարգվեց ոչ թե Սարգիս Բ Թմոզվեցին, այլ՝ Գամրեկել Թորելին²³: Սակայն վրացական թագավորության կյանքի տարբեր բնագավառներում Գամրեկել Թորելու համեմատ Սարգիս Բ Թմոզվեցու դերակատարությունն անհամեմատ մեծ էր:

Նույն տարում Սարգիս Ա Թմոզվեցին մի քանի հայ ու վրաց իշխանների, այդ թվում իր պապի եղբորորդի Վահրամ Գագեցու հետ Կոխտասթավիում մասնակցեց մոնղոլների դեմ ապստամբություն նախապատրաստելու նպատակով հրավիրված խորհրդակցությանը: Սակայն բանն ապստամբության չհասավ: Խորհրդակցության մասին իրազեկված մոնղոլները նրա մասնակիցներին ձերբակալեցին և նրանք հազիվ փրկվեցին մահապատժից²⁴:

Դրանից անմիջապես հետո Սարգիս Բ Թմոզվեցին մեծ ավանդ ներդրեց վրաց թագավոր Գեորգի Լաշայի (1207–1223)

²² Տե՛ս Կարտլիս Աջօվրեբա 2008, 347:

²³ Տե՛ս Կարտլիս Աջօվրեբա 2008, 353:

²⁴ Տե՛ս Կարտլիս Աջօվրեբա 2008, 356–357:

որդի Դավթին (Ուլու Դավլիթ) գահ բարձրացնելու գործում: Բանն այն է, որ Ռուսուդան թագուհին եղբոր՝ Գեորգի Լաշայի կտակը խախտելով Ուլու Դավթին ասպարեզից հանելու նպատակով ուղարկել էր Կեսարիա՝ այդ ժամանակ դեռ Իկոնիա Ռումի սուլթանության թագաժառանգ փեսայի՝ Ղիաս աղ-Դինի մոտ և գահ բարձրացրել իր որդի Դավթին (Դավլիթ Նարին)²⁵:

Եվ ահա, քանի որ Ռուսուդանը վախճանվել էր, իսկ վրացական գահին հաստատվելու համար մոնղոլական տերության երկրորդ դեմք Բաթու խանի մոտ նրա նստավայր Սարայ ուղարկված Դավլիթ Նարինից լուր չկար, Ջաքարյանները, որոնց թվում էր նաև Սարգիս Բ Թմոզվեցին ու արևելավրացական որոշ իշխաններ խորհրդակցելով որոշում են Ուլու Դավթին գտնել և մոնղոլների օգնությամբ Վրաստան բերելով գահ բարձրացնել²⁶: Երբ պարզվում է, որ վերջինս Կեսարիայում բանտարկված է, Գյուրջիստանի վիլայեթի մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Բաչու նոյինը զորապետ Անգուրատին 100 զինվորներով Վահրամ Գագեցու և Սարգիս Բ Թմոզվեցու հետ ուղարկում է այնտեղ՝ նրան վերադարձնելու հայրենիք²⁷: Վրաց արքայազնը բերվում է Տիփիս, ապա Մծխեթում հանդիսավորությամբ թագադրվում²⁸:

Դրանից հետո Բաչու նոյինն ընդունված կարգի համաձայն Ուլու Դավթին գահին հաստատվելու համար ուղարկում է Սարայ՝ Բաթու խանի մոտ: Սարգիս Բ Թմոզվեցին նրան ուղեկցողների թվում էր²⁹: Բաթուն իր հերթին Ուլու Դավթին Սարգիս Բ Թմոզվեցու ուղեկցությամբ ուղարկում է մեծ խանի նստավայր Ղարա-

²⁵ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 343:

²⁶ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 357:

²⁷ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 357–358:

²⁸ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի 1961, 289:

²⁹ Կարտլիս Ըջօրեբա 2008, 358.

ղորում՝ որպեսզի այդ պաշտոնում ընտրվելիք Գոյուքը որոշեր, թե երկու Դավիթներից ո՞վ պետք է զբաղեցնե՞ր վրացական թագավորության գահը³⁰:

XIV դարի վրաց Անանուն ժամանակագրի հավաստմամբ Սարգիս Բ Թմոզվեցին Ղարաղորումում Դավիթ Նարինի կողմնակիցների հետ բանավիճելով «Պատշաճ չէ, որ կնոջ սերունդը տիրի թագավորությանը և ոչ թե տղամարդ ինքնակալ թագավորի որդին»³¹ փաստարկմամբ պաշտպանում էր Ուլու Դավթի գահակալության իրավունքը: Ի վերջո, մեծ խան ընտրված Գոյուքը (1246-1248) երկու Դավիթին էլ թագավոր ճանաչեց³²:

Այս իրադարձություններին հայկական սկզբնաղբյուրներից անդրադարձել են Կիրակոս Գանձակեցին ու Գրիգոր Ակնեցին³³: Ընդ որում, վերջինս դրանց Սարգիս Բ Թմոզվեցու մասնակցության մասին լռում է, փոխարենը XIV դարի վրաց Անանուն ժամանակագրին ու Կիրակոս Գանձակեցուն հավելելով փաստում, որ Ուլու Դավթը Մծխեթում թագադրվելուց հետո կոչվեց «Վահրամով թագավոր, այսինքն, թե Վահրամ եղիր թագաւոր»³⁴: Այս հանգամանքը վկայում է, որ Ուլու Դավթին Կեսարիայից բերելու և Մծխեթում թագադրելու հարցում Վահրամ Գագեցու ավանդն ավելի մեծ է եղել, քան Սարգիս Բ Թմոզվեցունը: Սակայն, եթե հաշվի ենք առնում դրանից հետո Ուլու Դավթին մոնղոլների մոտ Սարգիս Բ Թմոզվեցու ուղեկցելը և Ղարաղորումում նրա շահերը եռանդուն պաշտպանելը, ապա Ուլու Դավթի գահակալության հարցում նրանց ավանդները հավասարվում են:

Այս իրադարձություններից հետո Սարգիս Բ Թմոզվեցին

³⁰ Տե՛ս Կարտլիս Աջօրեբա 2008, 358:

³¹ Տե՛ս Կարտլիս Աջօրեբա 2008, 359:

³² Տե՛ս Կարտլիս Աջօրեբա 2008, 360:

³³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի 1961, 288–289, 315–316: Գրիգոր Ակնեցի 1974, 33–34:

³⁴ Գրիգոր Ակնեցի 1974, 34:

սկզբնաղբյուրներում վկայվում է միայն մեկ անգամ, այն էլ մեկուկես տասնամյակ անց: Նրան հիշատակում է XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրը՝ մոնղոլ ապստամբ զորապետ Ալա Թեմուրի 1261/1262 թ. Ջավախք մտած զորամասի առաջախաղացումը կասեցնելու հետ կապված իրադարձություններին անդրադառնալիս: Պարզվում է, որ Սարգիս Բ Թմոզվեցուն, ի թիվս այլ իշխանների, հանձնարարված է եղել բռնել Ալա Թեմուրին, սակայն վերջինիս հաջողվել է հասնել Ոսկե Հորդայի Բերքա խանի մոտ³⁵:

Սարգիս Բ Թմոզվեցուն XIV դարի վրաց Անանուն ժամանակագրի կողմից իբրև անհատի տված վերոբերյալ բնութագրումները նրան գրական մեծարժեք վաստակ վերագրելու առիթ են ծառայել: Նրան է վերագրվել ոչ միայն Շոթա Ռուսթավելու հիշատակած «Դիլարիանի» պոեմը, այլև անգամ «Ընձենավորը» և պարսիկ նշանավոր բանաստեղծ Ֆահրեդդին Գարզանի «Վիս և Ռամին» («Վիսրամիանի») սիրավեպի վրացերեն թարգմանությունը: Լ. Մելիքսեթ-Քեկը կարծել է, որ «Դիլարիանիի» հեղինակը, իրոք, Սարգիս Բ Թմոզվեցին է³⁶: Ս. Երեմյանն իր հերթին նրան համարելով «վրաց գրականության պատմության մեջ հայտնի փիլիսոփա և բանաստեղծ»³⁷, նկատել է, որ նրան է վերագրվում «Ընձենավորի» առաջին խմբագրությունն ու մի քանի գլուխների հեղինակությունը և պնդել, որ «սա գրել է մեզ չհասած «Դիլարիանի» պոեմը և թարգմանել է պարսկերենից վրացերեն՝ հռչակավոր պարսից բանաստեղծ Ֆահրեդդին Գուրգանի «Վիս-ո-Ռամին» («Վիսրամիանի») վեպը»³⁸:

Սարգիս Բ Թմոզվեցուն հայագիտության և, հատկապես, վրա-

³⁵ Տե՛ս Կարլիս Լժովրեբա 2008, 372–373:

³⁶ Տե՛ս Մելիքսեթ-Քեկ 2010, 352, 354, 358:

³⁷ Երեմյան 1944, 20:

³⁸ Երեմյան 1944, 20:

ցագիտության մեջ գրական մեծարժեք վաստակ վերագրած կարծիքների քննությունը դիտելով մեր բուն խնդրից դուրս, նկատենք միայն, որ վրաց հին գրականության խոշորագույն գիտակ Կ. Կեկելիձեի համոզիչ դիտարկմամբ այդ տեսակետը XIX դ. սկզբներին է առաջացել և իրականությանը չի համապատասխանում³⁹:

Թմոզվեցիների դավանական պատկանելիության հարցը ևս բանավեճի առարկա է: Վրացագիտության մեջ գերիշխող կարծիքի համաձայն XIII դ. սկզբներից Թմոզվեցիների տոհմի հոգևոր կենտրոնը եղել է քաղկեդոնական (վրացադավան) Վահանա Այրիվանքը: Ապացուցման կարոտ և վարկած հիշեցնող այս կարծիքը հիմք ծառայեցնելով՝ Թմոզվեցիների դավանական պատկանելիության հարցն արծարծած վրացագետների բացարձակ մեծամասնությունը նրանց հռչակել է վրացադավան, այսինքն քաղկեդոնական: Թմոզվեցիների պատմությունն առաջինը հատուկ ուսումնասիրած Ս. Կակաբաձեն գտել է, որ Թմոզվեցիների նախնի Վահրամը պետք է գրիգորյան, այսինքն լուսավորչական եղած լինի, սակայն նրա հետնորդներն Իվանե Ա-ի վրացադավան դառնալուց հետո հետևել են վերջինիս օրինակին⁴⁰: Հաքարյանների պատմությամբ վերջինը մանրամասն զբաղված, բայց սկզբնաղբյուրների հաղորդումները յուրովի մեկնաբանած Շ. Մեսիխիան էլ Թմոզվեցիներին անվարան վրացի է հռչակել թե ազգությամբ և թե դավանանքով⁴¹:

Հայագիտության մեջ Թմոզվեցիների դավանական պատկանելիության հարցին խիստ համառոտ անդրադարձել են Լ. Մելիքսեթ-Բեկն ու Ս. Երեմյանը: Նրանցից առաջինը նկատի ունենալով Թմոզվեցիներին, գտել է. «այդ ճիղը սկզբներում անշուշտ հայադաւան (հակաքաղկեդոնիկ) պետք է եղած լինի, իսկ XIII կամ XIV

³⁹ კორნელი კეკელიძე 1980, 56–57.

⁴⁰ Տե՛ս Կազաձաձե Տարցոս 1913, 12 სტრიქონი.

⁴¹ Տե՛ս Թեյսեճիա Յոտա 1979, 245, 246, 251.

դարուց վրացավաանութեան (քաղկեդոնականութեան) յարած ... Սարգիս Թմոզվեցու ո՞ր դաւանութեանը պատկանելու հարցը, դժբախտաբար, մնում է բաց և առայժմ անլուծելի»⁴²: Ս. Երեմյանն էլ գտել է, որ «Այս տոհմը ուղղափառություն ընդունեց և XIV դարից սկսած վրացականացավ»⁴³: Այսպիսով երկու հետազոտողն էլ համակարծիք են Թմոզվեցիների դավանափոխության հարցում, որի ժամկետներն են սահմանում XIII–XIV դարերը:

Սակայն բանն այն է, որ Վահանա Այրիվանքը Թմոզվեցիների հոգևոր կենտրոն է համարվել XIII դ. 20–30-ական թվականներին կազմված⁴⁴ նրա կանոնադրության հեղինակ Մխարգրծելի և այդ հաստատության հովանավոր նրա որդի Սարգսի Թմոզվեցիների տոհմից լինելու վերաբերյալ պնդումների հիման վրա որոնք հեռու են համոզիչ լինելուց:

XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի կողմից Ալա Թեմուրի հետ կապված 1261/1262 թ. իրադարձությունների առթիվ Սարգիս Բ Թմոզվեցուն հիշատակելը սկզբնաղբյուրներում նրա մասին վերջին տեղեկությունն է: Թմոզվեցիների մասին վերջին հիշատակումը թվագրվում է 1304-ով: XIV դարի վրաց Անանուն ժամանակագրի համաձայն նրանք եղել են Ղազան խանի (1295–1304) կողմից այդ թվականին եղբոր՝ Դավիթ VIII-ի փոխարեն արևելավրացական թագավոր նշանակված Վախթանգ III-ին հարած իշխաններից⁴⁵:

Ինչ վերաբերվում է Ս. Կակաբաձեից սկիզբ առած և վրացագիտության մեջ շրջանառվող տեսակետին առ այն, որ Թմոզվեցիներից են սկիզբ առնում Ուջարմելի և Փավնեսիշվիլի տոհմերը, ապա այն կարոտ է հիմնավորման: Այսպիսով այդ նշանավոր

⁴² Մելիքսեթ-Քեկ 2010, 358:

⁴³ Երեմյան 1944, 20:

⁴⁴ Маргарян 1980, 85.

⁴⁵ Տե՛ս Կարտլիս Ըջոքրեբա 2008, 398:

հայկական իշխանատոհմի մասին հավաստի տեղեկությունները 1304-ով ավարտվում են:

Եզրակացություններ

Թմոզվեցիների իշխանատոհմը Ջաքարյան ավատատիրական տան երկու կրտսեր ճյուղերից մեկն է: Այն ծագում է Ջաքարյանների մեզ հայտնի առաջին սերունդը ներկայացնող ավագ Սարգսի կրտսեր թոռ Վահրամից և հիմնադրվել է նրա կրտսեր որդի Սարգիս Ա-ի կողմից: Վերջինս Թմոզվեցի, իսկ նրա սերունդները Թմոզվեցիներ են կոչվել Ջավախքում գտնվող Թմոզվի բերդի անունից: Սարգիս Ա-ն Թմոզվին իր շրջակայքով ստացել էր վրաց Թամար թագուհուց՝ նրա առաջին ամուսին Յուրի Բոգոլյուբսկու բարձրացրած 1190–1191 թթ. ապստամբության ճնշմանը գործուն մասնակցելու համար: Նրա իշխանությունը դարձել է վրացական թագավորության սահմանապահ կուսակալություններից մեկը:

Սարգիս Ա Թմոզվեցին մասնակցել է եղբոր՝ Բլուզ Ջաքարեի իշխանության ընդարձակմանը, նրա ու հորեղբորորդիների հետ գործակցել սելջուկյան տիրապետությունից հայկական հողերի ազատագրման համար մղվող համառ պայքարում:

Սարգիս Ա Թմոզվեցուն փոխարինել է որդին՝ Թադիադինը, որը ևս գործուն մասնակցել է իր ազգական Ջաքարյանների հակասելջուկյան ձեռնարկումներին: Նրան հաջորդած որդին՝ Սարգիս Բ Թմոզվեցին հայ ու վրաց այլ իշխանների հետ 1236 թ. հպատակվել է մոնղոլներին և զգալի դեր խաղացել վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում: Նրա դերը մեծ է հատկապես վրաց արքա Գեորգի Լաշայի որդի Ուլու Դավթին գահ բարձրացնելու գործում: Վերջին անգամ սկզբնաղբյուրներում հիշատակվում է 1261/1262 թ. իրադարձությունների հետ կապված: Դրանից հետո Թմոզվեցիները մի վերջին անգամ

սկզբնաղբյուրներում հիշատակվում են 1304 թ. կատարված մի իրադարձության կապակցությամբ:

Թմոզվեցիները հայ ու հայադավան են, ուստի նրանց վրացի ու վրացադավան համարելու փորձերն անհիմն են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Ակնեցի 1974, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 80 էջ:

Երեմյան Ս. 1944, Ամիրսպասալար Զաքարիա երկայնաբազուկ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 54 էջ:

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք Օհանջանյանի, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 426 էջ:

Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ 2014, Երևան, «Զանգակ» հրատ., 798 էջ:

Մելիքսեթ-Քեկ Լևոն 2010, Պատմա-բանասիրական պրպտումներ, Աշխատասիրությամբ Պարույր Մուրադյանի, Ս. էջմիածին, Մայր աթոռ սուրբ էջմիածնի հրատ., 457 էջ:

Շահնազարյան Ա.Ի. 1990, Վահրամյանների իշխանությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 216 էջ:

Շահնազարյան Ա.Ի. 2005, Զաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, Երևան, էջ 35-52:

Շահնազարյան Ա. Ի. 2007, Զաքարյան Հայաստանը մոնղոլական տեղապահության շրջանում, «Գիտական աշխատություններ», պրակ հինգերորդ, էջ 110-124:

Վրաց ժամանակագրություն (1207-1318), 1971, թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 222 էջ:

Օտար աբյուրները Հայաստանի և հայերի մասին 11, 1981, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 442 էջ:

Картлис Цховреба 2008, История Грузии, Тбилиси, изд. «Артануджи», 451 с.

Маргарян А.Г. 1980, К датировке и интерпретации «Типика» Ваханского пещерного монастыря. – «Кавказ и Византия», выпуск 2, Ереван, с. 81–86.

კაკაბაძე სარგის 1913, ვინ იყო და როდის ცხოვრობდა სარგის თმოგველი? თბილისი, «შრომა» გამომცემლობა, 12 გვ.

კორნელი კეკელიძე 1980, ძველი ქართული ლიტერატურის ისტორია, I თბილისი, «მეცნიერება» გამომცემლობა, 287 გვ.

მესხია შოთა 1979, საშინაო პოლიტიკური ვითარება და სამოხელელო წყობა XII საუკუნის საქართველოში, თბილისი, თბილისის უნივერსიტეტის გამომცემლობა, 338 გვ.

Арташес И. Шахназарян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, К истории княжеского рода Тмогвеци.

Резюме

Княжеский род Тмогвеци является одной из двух младших ветвей феодального дома Закарянов. Основоположителем рода был младший сын умершего до 1176 г. Ваграма Закаряна – Саргис I. Название рода восходит к «название» повторяется в предложении крепости Тмогви, которая являлась центром княжества. Известны три князя из рода Тмогвеци – Ваграм, его сын Тагиадин и внук Саргис II. Они были преданными вассалами грузинских Багратидов и принимали активное участие в антисельджукских начинаниях Закарянов.

В 1236 г. Саргис II в числе других армянских и грузинских князей подчинился монголам и сыграл заметную роль в событиях, происходивших в грузинском царстве.

Он внес значительный вклад в возведение на престол сына Георгия Лаша – Улу Давида. В последний раз род Тмогвеци был упомянут в первоисточниках в связи с событием, произошедшим в 1304 году.

Ключевые слова: Тмогви, Ваграм, Саргис I, Тагиадин, царица Тамар, Саргис II Басен.

Artashes I. Shahnazaryan, *Institute of History of the NAS RA, Ph.D.*,
Associate Professor, **The history of the the Tmogvetsi dynasty.**

Summary

The Tmogvetsi dynasty is one of the two younger branches of the Zakaryan family. It was founded by Sargis A., the youngest son of Vahram Zakaryan, who passed away before 1176. The name of the dynasty comes from Tmogvets fortress, which was the center of their power.

Three princes of Tmogvetsis are known: Sargis I, his son Taghiadin and grandson Sargis II. They were loyal vassals of the Georgian Bagratunis and actively participated in the anti-Seljuk initiatives of the Zakarians.

In 1236 Sargis II, among other Armenian and Georgian princes, submitted to the Mongols and played a major role in various events unfolding in the Georgian kingdom.

He made a significant contribution to raising Ulu Davit, the son of Georgian king George Lasha, to the throne. For the last time the Tmogvetsis were mentioned in the primary sources in connection with the event that took place in 1304.

Keywords: Tmogvi, Vahram, Sargis I, Taghiadin, Queen Tamar, Sargis II Basen.

GAYANE G. MAKHMOURIAN

Doct. of Sc. in Hist., Int. Sen. Researcher

Institute of History of the NAS RA,

Leading Scientist

ggmakhm@hotmail.com

ID 0009-0009-2864-0679

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-66

THE FRENCH POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA AND TRANSCAUCASIA IN 1919 *

Keywords: Republic of Armenia, Transcaucasia, French Policy, Paris Peace Conference, Artsakh, Zangezur, Captain A. Poidebard.

Introduction

In 1919 the French policy in Armenia, in the whole Transcaucasia and on the Armenian Question generally was determined by several factors. First, during the Paris Peace Conference, on 18 January – 28 June 1919, it was mainly implemented in the sphere of multilateral diplomatic relations. Second, when the British forces quitted Transcaucasia in July – August of 1919, the Paris-based statesmen began to implement their own program of establishing in the Republic of Armenia, taking into consideration the main conflicts and facilities of the Transcaucasia. Third, on 22–23 December 1919, when the US withdrew from the negotiations and the British

* Submitted on 26.IX.2023, reviewed on 29.IX.2023 and 1.XI.2023, accepted for publication on 15.XII.2023.

evacuated their Army from Transcaucasia, France acquired more space to act with a free hand at the bilateral London Conference. Analysis of the insufficiently explored stand, which had been taken by France and its partners in the constantly changing environment, as well as its correlation with the Big Game of 1919–1920 has both scientific and practical political significance.

The Republic of Armenia in the French Policy at Paris

At the Paris Peace Conference of 1919–1920, France sought to settle down in Syria and Cilicia, even though Cilicia with its Armenian population and its strategic and economic advantages, had been regarded as a safety buffer for Syria. When the Prime Minister G. Clemenceau directed his High Commissioner J.-A. DeFrance to Constantinople on 5 January 1919, he assigned him to become a mediator between the Commander of the national squadron in the Mediterranean and Commissioners of other Powers, who would supervise C. M. F. Georges-Picot, the regional High Commissioner in Syria-Palestine and Armenia, and would also receive in Constantinople all the information from the Military Attaché to the Caucasus, Colonel P.-A. Chardigny¹. Here, on the shores of Bosphorus, DeFrance had to ensure the performance of the Mudros requirements and to suggest the specific clauses for the final Peace Treaty with Turkey. In his note of 10 January entitled “On a liquidation of the Ottoman Empire and constitution the Turkish State” the French Foreign Ministry had envisaged an institution of Armenian States – in Cilicia together with an enlarged Republic of Armenia (abbreviated – RA). Such a creation had been substantiated by “the general reprobation of the domination, that

¹ Documents diplomatiques 2014, 609.

had been put into effect by the means of periodic massacres, promoted to the system of government”².

At first France was very watchful towards the Republic of Armenia. The Delegation of the latter failed to attend the Paris Peace Conference till 4 February³, and on 20 January the French President R. Poincare made written excuses to the Chairman of the Armenian National Delegation Boghos Nubar and explained why he did not mention Armenians in his speech at the inauguration of the Congress. Poincare wrote that his government “gave enough evidence of sympathy and friendship with Armenians, so that you would not have any doubt in invariability of these feelings. I have done it myself recently and repeated to you my assurances in response to your amiable telegram, sent to me to Alsace. I am very far from consigning Armenians to oblivion”, that’s why I gave an instruction to verify the wording in the «Journal official”. Now the fragment of the inauguration speech sounds as follows: “Yugo-Slavs, Armenians, Syrians and Lebanese, Arabs, all oppressed peoples”⁴. The very same days Chardigny informed counsellor-to-be of the Armenian Republican Delegation Major General G. Korganian of the first steps of the international forum⁵.

Byornlund M. 2006, *Before the Armenian Genocide: Danish Missionary and Rescue Operations in the Ottoman Empire, 1900-1914*, *Haigazian Armenological Review*, Volume 26, pp. 141-156.

Ekmekcioglu L. 2016, *Recovering Armenia. The Limits of Belonging in Post-Genocide Turkey*, Stanford, Stanford University Press, 241 p.

Elliott M. 1924, *Beginning Again at Ararat*, New York-Chicago, Fleming H. Revell Company, 341 p.

Gatrell P. 2013, *The Making of the Modern Refugee*, Oxford, Oxford University Press, 328 p.

Hovannisian R. 1971, *The Republic of Armenia. The First Year, 1918-1919*, Berkeley/Los Angeles/London, University of California Press, Volume 1, 547 p.

Maksudyan N. 2014, *Orphans and Destitute Children in the Late Ottoman Empire*, Syracuse- New York, Syracuse University Press, 232 p.

Malkki Liisa H. 2015, *The Need to Help. The Domestic Arts of International Humanitarianism*, Durham-London, Duke University Press, 204 p.

Naguib N. 2017, *Middle East Encounters 69 Degrees North Latitude: Syrian Refugees and Everyday Humanitarianism in the Arctic*. *International Journal of Middle East Studies*, Volume 49, pp. 645-660.

Naguib N., Okkenhaug I. 2008, *Interpreting Welfare and Relief in the Middle East*, Leiden-Boston, Brill, 255 p.

Nansen F. 1962, *Gjennom Armenia*, Oslo, Ascheoug & Co, 248 p.
National Archives, Oslo, PA 699, Norwegian Women's Mission organization (Kvinnelige misjonsarbeidere, KMA), 0028, Kvartalshilsen, 1922, nr. 4, p. 38.

National Archives, Oslo, PA 699, KMA, 0028, Kvartalshilsen, 1923, nr. 1, 2.

National Archives, Oslo, PA 699, KMA, 0028, Kvartalshilsen nr. 3, 1936, p. 6

Rockefeller Archive Center (RAC), LSRM, 104-111/3, 104. Telegram from Jaquith to Near East Relief, Vickrey, New York, 2 April, 1922.

Watenpugh K. 2015, *Bread from Stones. The Middle East and the Making of Modern Humanitarianism*, Oakland, California University Press, 251 p.

Yarrow E. 1920, *Winter Relief in Caucasus, The New Near East*, Vol. IV, No 8 (7), February, p. 3-6.

Ինգեր Մ. Օկենհաուզ, Արմեն Ս. Հայրապետյան, Վոլդայի համալսարանական քոլեջ, պ.գ.թ., պրոֆեսոր; ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., Նորվեգական առաքելության գործունեությունն Ալեքսանդրոպոլում. մի միսիոներուհու պատմություն

Ամփոփում

Բուժքույր և միսիոներ Բողիլ Բյորնն «Արևելքում քրիստոնեական բարեգործության խթանման գերմանական միության» կազմում 1905 թ. ժամանեց Մուշ և մոտ 10 տարի ղեկավարեց տեղի գերմանական որբանոցի կլինիկան, ապա Առաջին աշխարհամարտի տարիներին իր սկանդինավցի գործընկերի հետ աշխատեց Կարմիր խաչի հիվանդանոցում: Երբ պատերազմի ավարտից հետո թուրքական իշխանություններն արգելեցին օտարերկրյան առաքելությունների գործունեությունը երկրում՝ հայ ժողովրդի հետ ցեղասպանություն վերապրած նորվեգուհին տուն չվերադարձավ, այլ տեղափոխվեց Խորհրդային Հայաստան և 1922 թ. Ալեքսանդրոպոլում հիմնեց որբանոց: Այս կերպ նա փորձեց համատեղել միսիոներական կոչումը և մարդասիրական աշխատանքը ցեղասպանությունը վերապրածների շրջանում, քանզի համոզված էր, որ Աստված ծրագիր ունի փրկված հայ երեխաների համար: Նորվեգուհիների մասնավոր նվիրատվությունների հաշվին պահվող որբանոցը կոչվեց «Լույսի աղբյուր»: Իր կարճատև գոյության ընթացքում այն սովի ճիրաններից փրկեց և ընտանեկան դաստիարակություն սովեց տասնյակ որբերի:

Ցավոք, խորհրդային իշխանությունները չհանդուրժելով նորվեգական քրիստոնեական առաքելության գոյությունը՝ 1920-ական թվականների կեսերին պահանջեցին լուծարել որբանոցը: «Կանանց նորվեգական միսիոներական կազմակերպությունը» 1927 թ. պաշտոնապես դադարեցրեց իր գործունեությունը Խորհրդային Հայաստանում, իսկ Բողիլ Բյորնը հայ որբերի համար նոր որբանոց հիմնեց Հալեպում:

Բանալի բաներ՝ Նորվեգական առաքելություն, Ալեքսանդրոպոլ, ցեղասպանություն, ամերիկյան որբանոց, «Լույսի աղբյուր», ձեռագործ գուլպաներ, խորթ մայր, Ֆրիտյոֆ Նանսեն:

Ингер М. Оккенхауг, Армен С. Айрапетян, Университетский колледж Волды, к.и.н., профессор, Институт истории НАН РА, к.и.н., Деятельность Норвежской миссии в Александрополе: история одной миссионерки.

Резюме

Медсестра и миссионерка Бодил Бьёрн в составе «Немецкого общества содействия христианской благотворительности на Востоке» прибыла в Муш в 1905 г. и в течение примерно 10 лет возглавляла клинику местного немецкого приюта. В годы Первой мировой войны она вместе со своими скандинавскими коллегами работала в госпитале Красного Креста. После окончания войны, когда турецкие власти запретили иностранные представительства в стране, норвежская миссионерка, пережившая с армянским народом геноцид, не вернулась домой. Вместо этого она переехала в Советскую Армению и в 1922 г. основала приют в Александрополе.

Таким образом, Бьёрн пыталась совместить миссионерское призвание и гуманитарную работу среди переживших геноцид, убежденная в том, что у Бога есть план для спасенных армянских детей. Детский дом, содержащийся за счет частных пожертвований норвежских женщин, получил название «Источник света». За время своего недолгого существования он спас десятки сирот от голодной смерти и обеспечил им семейное воспитание.

К сожалению, советские власти недолго терпели существование Норвежской христианской миссии и в середине 1920-х годов потребовали расформировать приют. В 1927 году Норвежская женская миссионерская организация официально прекратила свою деятельность в Советской Армении, а Бодил Бьёрн основала в Алеппо новый приют для армянских сирот.

Ключевые слова: Норвежская миссия, Александрополь, геноцид, американский детский дом, «Источник света», носки ручной вязки, приемная мать, Фрицьоф Нансен.

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

gugvard57@gmail.com

ID 0009-0002-9858-5926

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-159

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1960-1975) ***

Բանալի բառեր՝ Հայաստան, խորհրդային, տեխնիկում, սովորող, ուսումնարան, կրթություն, մասնագիտացում:

Ներածություն

1950-ական թթ. վերջին խորհրդային Հայաստանում կրթական բարեփոխումների արմատական վերակառուցման աշխատանքը նպատակ էր հետապնդում նոր որակի բարձրացնել կրթության մակարդակը, որը պետք է ապահովեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը:

Միայն ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից 1959-1960 ուսումնական տարվա ընթացքում տասնյակ որոշումներ են ընդունվել հանրակրթական դպրոցի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների աշխատանքների որակի բարելավման վերաբերյալ: Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից կազմվել և համապատասխան գերատեսչություններին էին ուղարկվել փաստաթղթերի ու հրահանգների ժողովածուներ:

**Ներկայացվել է 13.XI.2023 թ., գրախոսվել է 20.XI.2023 թ. և 21.XI.2023 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2023 թ.:*

Հատկապես կարևոր նշանակություն ուներ 1960թ. մայիսին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ «ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության մասին» ընդունած որոշումը¹, որում մանրամասն տրվում էր, թե ինչպիսի քաղաքականություն պիտի իրականացի մինիստրությունը համակարգի հետագա զարգացումն ապահովելու համար: ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1961թ. մարտին հաստատեց միջին մասնագիտական կրթական հաստատությունների նոր կանոնադրությունը²: Մեր հանրապետության պետական – կուսակցական ղեկավարությունը քայլեր էր ձեռնարկում ապահովելու միջին մասնագիտական կրթության հետագա զարգացումը:

Միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստումը 1960-1975 թթ.

Ժողովրդական տնտեսության հետագա զարգացումն ապահովելու համար լուրջ ուշադրություն էր հատկացվում միջին մասնագիտական որակյալ կրթությամբ կադրերի պատրաստմանը: Արդեն 1960- ական թթ. սկզբին հանրապետությունում գործում էր կայուն միջին մասնագիտական կրթական համակարգ:

ՀԽՍՀ-ում 1964-1965 ուսումնական տարում գործում էին 43 միջին մասնագիտական կրթական հաստատություններ՝ 23115 սովորողով³: Այդ թվում արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության բնագավառները միջին որակավորման մասնագետներով ապահովելու նպատակով գործում էին 17 միջին մասնագիտական կրթական հաստատություններ՝ 18529 սովորող-

¹ Ст'у Среднее специальное образование в СССР 1962, 61.

² Ст'у Среднее специальное образование в СССР 1962, 73.

³ Ст'у Народное хозяйство Армянской ССР 1965, 233.

ղով⁴: Երևանում գործում էին ռադիոէլեկտրոկապի, էլեկտրոմեխանիկական, մեքենաշինական, մաթեմատիկական հաշվիչ մեքենաների, քիմիոտեխնոլոգիական, թեթև ու սննդի արդյունաբերությանների, շինարարական և ավտոտրանսպորտի տեխնիկումները⁵:

Գործում էին նաև Կիրովականի /Վանաձոր/ սարքաշինական, քիմիոտեխնոլոգիական և շինարարական, Լենինականի /Գյումրի/ հաստոցաշինական, թեթև արդյունաբերության, շինարարական, երկաթուղային տրանսպորտի, Կապանի հանքամետալուրգիական և Քաջարանի շինարարական տեխնիկումները⁶:

Գյուղատնտեսության ոլորտի համար մասնագետներ էին պատրաստում շուրջ 10 տեխնիկումներ: Երևանում գործում էին գյուղատնտեսական, գյուղմեքենայացման և ադրբեջանական գյուղատնտեսական, Գորիսում, Կամոյում /Գավառ/ և Ստեփանավանում՝ անասնաբուժական, Կիրովականում և Հոկտեմբերյանում /Արմավիր/ գյուղատնտեսական, Լենինականում՝ հողջրօգտագործման, Օձունում՝ պտուղբանջարեղենի տեխնիկումները: Սովորողների թիվը՝ 5115 էր: Ցերեկային ուսուցմամբ ուսանում էին 2451 հոգի, որը կազմում էր ընդհանուրի մոտ 48 %-ը⁷:

Այդ ուսումնական տարում միջին մասնագիտական կրթությամբ մանկավարժական կադրեր էին պատրաստում Երևանի ռուսական և Լենինականի մանկավարժական ուսումնարանները:

⁴ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 -232 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

⁵ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 -232 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

⁶ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 -232 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

⁷ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

րը, որոնք ունեին 1154 սովորող⁸: Կրթամշակութային ոլորտում գործում էին 6 միջին մասնագիտական հաստատություններ՝ Երևանի ակումբագրադարանային տեխնիկումը, գեղարվեստի, պարարվեստի, երաժշտական, նաև Լենինականի և Կիրովականի երաժշտական ուսումնարանները՝ 1285 սովորողով⁹: Առողջապահության ոլորտում կար 4 միջին մասնագիտական կրթական ուսումնարան՝ 2147 սովորողով: Դրանք տեղաբաշխված էին Երևանում, Լենինականում, Կապանում և Դիլիջանում¹⁰:

Հանրապետության միջին մասնագիտական կրթական հաստատությունների գերակշիռ մասը կադրեր էր պատրաստում արդյունաբերական տարբեր ճյուղերի համար: Մեքենաշինության, սարքաշինության, ռադիոտեխնիկայի և կապի, քիմիական տեխնոլոգիայի մասնագիտություններով սովորողների թիվը 1962թ. հասնում էր մոտ 60 %-ի¹¹: Հատկապես ավելացել էր տեխնիկումների երեկոյան և հեռակա ուսուցման սովորողների թիվը: Երեկոյան 16 և հեռակա 21 ուսուցման բաժիններում ընդգրկված էին սովորողների ընդհանուր թվի 40 %-ը¹²:

1960-ական թթ. առաջին կեսին հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները տեղաբաշխված էին հիմնականում քաղաքներում. Երևանում՝ 20, Լենինականում՝ 8, Կիրովականում՝ 5, Կապանում՝ 2, Դիլիջանում, Գորիսում, Ստեփանավանում, Օծունում, Քաջարանում՝ մեկա-

⁸ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

⁹ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

¹⁰ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 233 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

¹¹ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

¹² Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 17:

կան: Երևանի տեխնիկումների մի մասը մասնաճյուղեր ուներ հանրապետության տարբեր շրջաններում¹³:

Սակայն միջին մասնագիտական կրթական հաստատությունների աշխատանքում կային բազմաթիվ թերություններ: Հանրապետության կուսակցական-պետական մարմինները հիմնականում ուշադրությունը հատկացրել էին տեխնիկումների և սովորողների քանակական աճին: Մինչդեռ, այդ հաստատությունների շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան, ուսումնամեթոդական ծրագրերն ու պլաններն և դասագրքերը չէին համապատասխանում ժամանակի պահանջներին:

Պարբերական մամուլում ծավալվեց քննարկում՝ միջին մասնագիտական կրթական հաստատությունների աշխատանքում տեղ գտած բացթողումների վերաբերյալ: ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահ Գ. Հայրյանը, նշելով նմանատիպ բացթողումները, մասնավորապես անդրադառնում էր մայրենի լեզվով դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման վիճակին, գրելով հետևյալը. «Ամեն անգամ այդ հարցը դնելիս մեզ ասում են, թե թուղթ չկա: Ճիշտ է, հանրապետության թղթի ֆոնդը մեծ չէ, սակայն այդ ֆոնդի ռացիոնալ օգտագործելու դեպքում միշտ կարելի է բաժին հանել տեխնիկումների համար»¹⁴:

Կարևոր էր համարվում որակյալ մասնագետ մանկավարժներով տեխնիկումների և ուսումնարանների ապահովումը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում տվյալ ժամանակաշրջանում աշխատող մանկավարժներից բարձրագույն կրթություն ունեին 90, թերի բարձրագույն՝ 7 և միջնակարգ

¹³ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР 1965, 231-232 /հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ վիճակագրական տվյալների հիման վրա/:

¹⁴ Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 198:

կրթություն՝ 3%-ը¹⁵: Այն խնդիրները, որոնք դրվում էին միջին մասնագիտական կրթական հաստատությունների առջև, պահանջում էին որակական փոփոխություններ կատարել և բարձրացնել այդ հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների գործունեության արդյունավետությունը¹⁶: Սակայն տեխնիկումներում և ուսումնարաններում որոշ ղեկավար կադրերի նշանակման հարցում առաջին տեղում դրվում էր գաղափարաքաղաքական պատրաստվածությունը և նոր միայն մասնագիտական ունակությունները: Այդ պաշտոններում նշանակվում էին կուսակցականներ, որոնց մասնագիտությունը չէր համապատասխանում իրենց ղեկավարած ուսումնական հաստատության բնույթին:

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1962 թ. հուլիսին քննարկելով «Հանրապետության միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատանքների վիճակի ու դրանց բարելավման միջոցառումների մասին» հարցը, նշեց այդ ոլորտի աշխատանքները վերակառուցելու ուղղությամբ ձեռք բերված հաջողությունները և միաժամանակ արձանագրեց էական բացթողումներ: Դա վերաբերվում էր կադրերի պատրաստման անհամաչափությանը¹⁷: Հանրապետության բարձրագույն կրթությամբ 100 ճարտարագետին և գյուղատնտեսին համապատասխանաբար ընկնում էր 80 տեխնիկ և 55 կրտսեր գյուղատնտես¹⁸: Տեխնիկումների մեծ մասը չունեի ուսումնական մասնաշենքեր և հանրակացարաններ: Դրանց նյութատեխնիկական բազան աղքատիկ էր, ուսումնադաստիրակչական աշխատանքներում տեղ էին գտել բազմաթիվ թերություններ: Բյուրոյի որոշման մեջ

¹⁵ Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 198:

¹⁶ Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 198:

¹⁷ Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 198:

¹⁸ Տե՛ս Սովետական Հայաստան 1962, N 198:

առանձնահատուկ տեղ էր տրվում տեխնիկումները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելուն և մայրենի լեզվով դասագրքերի հրատարակմանը: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն համապատասխան կուսակցական – պետական մարմիններից պահանջեց կարճ ժամկետում վերացնել նկատված թերությունները և կարգավորել համակարգի աշխատանքները¹⁹:

Պետական-կուսակցական մարմինների ձեռնարկված միջոցառումների շնորհիվ յոթնամյա պլանի (1959-1965) կատարման ընթացքում աստիճանաբար կարգավորվեց համակարգի գործունեությունը: Սակայն դեռևս կային բավականին բացթողումներ: 1961-1965 թթ. հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտել էին շուրջ 17,8 հազար մասնագետներ, իսկ բուհերը՝ շուրջ 15,4 հազար²⁰: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ավարտած մասնագետների թիվը դեռևս բավարար չէր, քանի որ պետության կողմից առաջադրված պահանջը՝ 2-3 անգամ գերազանցել բուհական կրթությամբ մասնագետների թիվը, չէր կատարվել: Դա կապված էր պատական մարմինների կողմից ոչ ճիշտ պլանավորման հետ, երբ հիմնականում ուշադրություն էր հատկացվում բուհն ավարտած և առավել բարձր որակավորում ունեցող մասնագետներին: Այդուհանդերձ, որակական տեսակետից տեղի էր ունեցել որոշ առաջընթաց:

Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և այլ գերատեսչությունների հետ առավել համակարգված աշխատանքների կազմակերպման ու պլանավորման նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1965 թ. դեկտեմբերի 20-ի որոշման համաձայն ստեղծվեց ՀԽՍՀ Բարձրագույն և միջնա-

¹⁹ Տե՛ս Հուրիխանյան 1975, 195-197:

²⁰ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР за 60 лет 1980, 280.

կարգ մասնագիտական կրթության մինիստրությունը: Զգալիորեն ավելացվեցին այս ոլորտի ֆինանսական հատկացումները: Արդեն 1970 թ. մինիստրության բյուջետային - ֆինանսական ծավալը կազմում էր 8.5 միլիոն ռուբլի: Աճել էին նաև կապիտալ շինարարության ներդրումները՝ 2,2 միլիոնից հասնելով 5,6 միլիոն ռուբլու: Մեկ տեխնիկումի բյուջետային - ֆինանսական հատկացումը միջին հաշվով կազմում էր 251 հազար 750 ռուբլի²¹:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1966 թ. սեպտեմբերի 3-ի համատեղ որոշմամբ ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը հանձնարարվեց մշակել բուհերի և տեխնիկումների նոր կանոնադրությունների նախագծեր: Բուհերին և տեխնիկումներին տրվում էր առավել ինքնուրույն գործելու իրավունք: Ընդլայնվում էին դրանց ղեկավարների իրավունքներն ուսումնական, գիտական, տնտեսական հարցերը լուծելիս և այլն: Այս որոշման ընդունումը բավականին նպաստեց նաև մեր հանրապետությունում բուհական և միջին մասնագիտական կրթության հետագա զարգացմանը:

Արդեն 1966-1970 թթ. ընթացքում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատանքում տեղի ունեցան որակական փոփոխություններ: Այդ տարիներին ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկումներ բացվեցին Սևան, Ալավերդի, Կամո, Հրազդան, Հոկտեմբերյան քաղաքներում, խորհրդային առևտրի տեխնիկում՝ Երևանում: Մանկավարժական ուսումնարան էր կազմակերպվել Գորիսում, երաժշտական - մանկավարժական՝ Երևանում, ակումբա-գրադարանային տեխնիկում՝ Էջմիածնում, բժշկական ուսումնարան՝ Վարդենիսում:

²¹ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 26-27:

Միայն այդ տարիներին Երևանում, Լենինականում և Կիրովականում, ինչպես նաև 21 փոքր քաղաքներում ու մեծ գյուղերում գործում էին տեխնիկումներ և ուսումնարաններ²²: Շահագործման հանձնվեցին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի երաժշտական ուսումնարանները²³, Լենինականի հաստոցա-գործիքաշինական, Սևանի ինդուստրիալ-տեխնոլոգիական, Երևանի և Կիրովականի քիմիատեխնոլոգիական տեխնիկումների նոր ուսումնական մասնաշենքերը: Երևանում, Արարատում, Ալավերդիում, Չարենցավանում ու այլ քաղաքներում գործող տեխնիկումների և ուսումնարանների համար կառուցվել էին հանրակացարաններ²⁴:

Հանրապետությունում ութերորդ հնգամյակի (1966-1970) վերջին կար 64 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ավելի քան 47450 սովորողով, որոնք մասնագիտանում էին շուրջ 160 մասնագիտություններով²⁵: Հատկապես կարևոր էր մասնագիտական նոր բաժինների ստեղծումը քիմիական-տեխնոլոգիական, հանքարդյունաբերության, ավտոմատացման և էլեկտրոսարքավորումների ոլորտներում: Այդ հնգամյակի ընթացքում տեխնիկումները և ուսումնարանները տվել էին 38186 մասնագետ²⁶: Զգալիորեն ամրապնդվել էր տեխնիկումների և ուսումնարանների նյութատեխնիկական բազան: Բնակչության շրջանում աճել էր հետաքրքրությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նկատմամբ: Դա է վկայում այդ հաստատությունների դիմորդների թվի զգալի ավելացումը: Միայն 1968-1969 ուսումնական տարում դի-

²² Տե՛ս **Կոզմոյան** 1977, 225:

²³ Տե՛ս **Պողոսյան** 1980, 15:

²⁴ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 5: **Հուրիխանյան** 1975, 116:

²⁵ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 26:

²⁶ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 27:

մորդների թիվը հասավ 24200-ի՝ 11600 տեղի համար: Դրական գնահատական ստացած բոլոր դիմորդներն ընդունվել էին²⁷:

Հանրապետության միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում այդ տարիներին աշխատում էին 3340 մանկավարժներ, որոնցից 200-ն արժանացել էին հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման²⁸:

Զգալի ուշադրություն էր հատկացվում միջին մասնագիտական կրթական հաստատությունների մանկավարժների որակավորման բարձրացմանը: ԽՍՀՄ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրի 1968 թ. հունիսի 6-ի հրամանով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտին կից ստեղծվեց միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների մանկավարժների որակավորման բարձրացման ֆակուլտետ, որը 1972 թ. սեպտեմբերին վերակազմվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների մանկավարժների որակի բարձրացման ֆակուլտետի: Այն կարևոր դեր խաղաց մանկավարժների գիտելիքները հարստացնելու և նոր գիտատեխնիկական հայտնագործություններին ծանոթացնելու գործում: Միայն 1970-ական թթ. առաջին կեսին պոլիտեխնիկական ինստիտուտում դասախոսների որակի բարձրացման դասընթացներն ավարտել էին միջին մասնագիտական կրթական հաստատությունների 500 մանկավարժներ²⁹: Դպրոցների միջին մասնագիտական կրթություն ունեցող մանկավարժական կադրերի որակավորումն իրականացնում էր ուսուցիչների կատարելագործման հանրապետական (հիմնադրվել է 1949 թ.) և Երևանի քաղաքային (հիմնադրվել է 1967 թ.) ինստիտուտների կողմից: 1968 թ. հանրապետական ինստիտուտի

²⁷ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 7:

²⁸ Տե՛ս Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, N 4, 10:

²⁹ Տե՛ս **Հովակիմյան** 1977, 298:

մասնաճյուղերը բացվեցին Լենինականում և Կիրովականում³⁰:

Մասնագիտական որակավորման բարձրացման ֆակուլտետներ էին կազմակերպվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Միջին մասնագիտական կրթական հաստատությունների դասախոսների որակավորման բարձրացումը կատարվում էր նաև Խորհրդային Միության այն քաղաքներում, որտեղ կային համապատասխան մասնագիտությունների գծով ֆակուլտետներ: Փաստորեն գործում էր կայուն, զարգացող միջին մասնագիտական կրթական համակարգ:

Սակայն դեռևս կային բավականին թերություններ: Դրանք հատկապես վերաբերում էին ուսման որակի բարձրացմանը, տեխնիկումների և ուսումնարանների ընդունելության քննությունների պլանավորմանը, շրջանավարտների տեղաբաշխմանը, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ցածր մակարդակին: Արտադրական պրակտիկան շարունակում էր շատ հաճախ ձևական բնույթ կրել: Շարունակում էր խնդրահարույց լինել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով և տեխնիկական տեղեկատուներով ապահովելը: Հանրապետության պետական-կուսակցական ղեկավարությունը պահանջում էր լուրջ ուշադրություն հատկացնել թերությունների վերացմանը: «Ընթացիկ հնգամյակում Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը պետք է հատուկ ուշադրություն նվիրի բուհերի և տեխնիկումների նյութատեխնիկական և ուսումնա-լաբորատոր բազայի ամրապնդմանը, մասնագիտությունների պլանավորման և նոր ստեղծվող ուսումնական հիմնարկների տեղաբաշխման ժամանակ ղեկա-

³⁰ Տե՛ս Ղազախեցյան 1972, 210:

վարվի հանրապետության տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման հեռանկարային պահանջներով ու առանձնահատկություններով»,- նշվում էր 1971 թ. փետրվարին կայացած ՀԿԿ 25-րդ համագումարում Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի հաշվետու զեկուցման մեջ³¹:

1971 թ. հոկտեմբերին, ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և սովորողների նյութական ու բնակարանային-կենցաղային պայմանների հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը: Միջին մասնագիտական կրթական հաստատությունների սովորողների կրթաթոշակը բարձրացվում էր 50 %-ով՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական կողմորոշումը և առաջադիմությունը: Միայն կրթաթոշակների բարձրացման և թոշակառուների թվի ընդլայնման համար պետական միջոցներից լրացուցիչ հատկացումները կազմելու էին 1,5 միլիարդ ռուբլի³²: Նախատեսվում էր բարելավել բուհերի և տեխնիկումների ուսանողների հանրակացարանային պայմանները, կրթական հաստատություններում կազմակերպել հասարակական սննդի և բժշկական սպասարկման կետեր³³: ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը 1971 թ. դեկտեմբերին այս որոշումը քննարկեցին և հավանություն տվեցին: Կուսակցական-պետական մարմինները պարտավոր էին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու սովորողների նյութական ու բնակարանային-կենցաղային պայմանները, բուժսպասարկումը և այլն³⁴:

Որոշման կենսագործումը հնարավորություն էր տալիս որոշ

³¹ Տե՛ս Սովետական Հայաստան 1971, N 48:

³² Տե՛ս Սովետական Հայաստան 1971, N 249:

³³ Տե՛ս Սովետական Հայաստան 1971, N 249:

³⁴ Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1, ց. 96, գ. 60, թ. 3-15:

չափով վերացնել սովորողների և ուսանողների ֆինանսական խնդիրներն ու բարելավել նրանց կենցաղային պայմանները: Բացի այդ, այն դպրոցների մեծ թվով շրջանավարտների շահագրգռում էր սովորելու բուհական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում:

Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների՝ միջին մասնագիտական կրթության համակարգի աշխատանքներում զգալի տեղաշարժ կատարվեց: Արդեն 1975 թ. հանրապետությունում կային 63 միջին մասնագիտական կրթական հաստատություններ՝ 51.200 սովորողներով³⁵: Տեխնիկումների մեծ մասը կադրեր էր պատրաստում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների համար:

Եզրակացություններ

1960-1970 ական թթ. առաջին կեսին Խորհրդային Հայաստանում ժողովրդական տնտեսության զարգացման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ էին որակյալ միջին մասնագիտական կրթությամբ կադրեր: Այդ տարիներին հանապետությունում գործող միջին մասնագիտական կրթական համակարգը կադրեր էր պատրաստում արդյունաբերության, գյուղատնտեսության և կրթամշակութային տարբեր բնագավառների համար: Անհրաժեշտ էր մեծացնել միջին մասնագիտական կրթական հաստատությունների քանակը և բարձրացնել դրանց որակական մակարդակը:

Հանրապետության պետական-կուսակցական ղեկավարության ընդունած որոշումների հիման վրա ընդլայնվեց գործող համակարգը: Միջին մասնագիտական կրթական հաստատությունների համար կառուցվեցին տիպային համալիրներ և հանրակա-

³⁵ Ст'я Народное хозяйство Армянской ССР за 60 лет 1980, 273.

ցարաններ, նյութատեխնիկական բազան համալրվեց նոր սարքավորումներով ու լաբորատորիաներով:

Ժամանակի պահանջներին համապատասխան վերանայվեցին ուսումնական ծրագրերը և պլանները, հրապարակվեցին մայրենի լեզվով դասագրքեր: Ուսուցման որակը բարձրացնելու նպատակով համակարգը համալրվեց նոր մասնագետ մանկավարժական կադրերով, բացվեցին բուհերին կից վերապատրաստման դասընթացներ: Կարևոր նշանակություն ունեցավ սովորողների կրթաթոշակի բարձրացումը, ինչպես նաև սոցիալական, առողջապահական երաշխիքների տրամադրումը:

Այսպիսով՝ քննվող ժամանակաշրջանում, մեր հանապետությունում զգալի աշխատանք կատարվեց միջին մասնագիտական կրթական հաստատությունների զարգացման ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն 1971, Երևան, N 4, էջ 5-10, 26-27:

Կոզմոյան Կ. 1977, Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1970, Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 359 էջ:

ՀԱԱ, Ֆ.1, ց. 96, գ. 60, թ. 3-15:

Հայրապետյան Ա. 1974, Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, Երևան, «Հայաստան» հրատ., 231 էջ:

Հովակիմյան Ս. 1977, Բարձրագույն տեխնիկական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 553 էջ:

Հուրիխանյան Փ. 1975, Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 212 էջ:

Հուրիխանյան Փ. 1969, Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում /Համառոտ ակնարկ/ Երևան, 242 էջ:

Ղազարեցյան Ա. 1972, Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում, Երևան, «Լույս» հրատ., 210 էջ:

Պողոսյան Հ. 1980, Սովետական Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունը 60 տարում, Երևան, Գիտելիք ընկերություն, 24 էջ:

Սովետական Հայաստան 1962, օգոստոսի 24, N 198:

Սովետական Հայաստան 1971, հոկտեմբերի 26, N 249:

Սովետական Հայաստան 1962, հունվարի 20, N 17:

Սովետական Հայաստան 1971, փետրվարի 26, N 48:

Народное хозяйство Армянской ССР за 60 лет, Ереван, 1980, изд. “Айастан”, 340 с..

Народное хозяйство Армянской ССР 1965, Ереван, с. 231 – 233.

Среднее специальное образование в СССР 1962, Москва, Высшая школа, 268 с..

Гурген В. Варданян, *Институт истории НАН РА, к.и.д., доцент*,
**Развитие среднего специального образования в Советской
Армении (1960-1975)**

Резюме

С целью эффективного развития народного хозяйства в Советской Армении в 1960-1970-х гг. необходимо было подготовить высококвалифицированные среднеспециальные кадры. Среднеспециальная образовательная система республики готовила специалистов разных отраслей промышленности, сельского хозяйства и культурной сферы.

В республике необходимо было увеличить число среднеспециальных учреждений, поднять уровень образования в данных учреждениях. Основываясь на решениях и директивах государственно-политического руководства страны, продолжалось развитие действующей системы среднеспециального образования, строились новые типовые комплексы и общежития. Материально-техническая база оснащалась современным оборудованием, лабораториями. Были пересмотрены и приведены в соответствие с требованиями времени учебные программы, планы, изданы

учебные пособия и учебники на армянском языке. В вузах республики были открыты курсы по переподготовке специалистов со среднеспециальным образованием. Важное значение имело повышение стипендии учащихся техникумов и училищ, предоставление им социально-медицинских услуг.

Таким образом, в республике в рассматриваемый период была проделана значительная работа по развитию системы среднеспециального образования.

Ключевые слова: Армения, советская, техникум, учащийся, училище, образование, специализация.

Gurgen V. Vardanyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Associate Professor*, **Secondary vocational educational in Soviet Armenia (1960– 1975)**

Summary

In 1960-1970s to increase the effectiveness of development of national economy in Soviet Armenia, qualified human resources with secondary education were needed. The Secondary Educational System of our republic was producing specialists for different fields of industry, agriculture, education and culture. There was a need to increase the level of Specialized Secondary Education Institutions both in quality and quantity.

Due to the decisions made by the authorities of state-parties, the incumbent system was extended, new typical complexes and dormitories were built for the Specialized Secondary Education Institutions, the material-technical base was enriched with new equipment and laboratories, the educational programs and plans were reviewed, the workbooks were published in native language. The great importance was given to the arrangements of the industrial practices.

For advancing the quality of education, the system was enrolled with new pedagogical specialists. The educational grants were raised, the social and health guaranties were provided.

Thus, in our republic, essential efforts were made for the development of Specialized Secondary Education Institutions in observed period.

Key words: Armenia, Soviet, Technical Institute, learner, institution, education, specialization.

ЛИЛИТ С. ЗАКАРЯН

Институт истории НАН РА, к.и.н, доцент

lilit_zakaryan@mail.ru

ID: 0009-0005-4497-5410

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-176

Взаимоотношения Верховного Совета Республики Армения и местных Советов народных депутатов в первой половине 1990-х годов*

Ключевые слова: Верховный Совет, местные Советы народных депутатов, комиссия местного самоуправления, законодательный орган власти, органы местного самоуправления.

Введение

После провозглашения независимости политическая система Армении претерпела серьезные преобразования. Формировались политические институты независимого государства, происходили изменения в общественном сознании, создавались и внедрялись новые политические технологии. Эти трансформации затронули также органы представительной власти, как на республиканском, так и на местном уровнях.

В первые годы независимости взаимоотношения между Верховным Советом и местными советами были довольно сложными. На первом этапе Верховный Совет выступал в качестве высшего органа власти. Новые политические силы, сформировавшиеся благодаря Арцахскому движению и вошедшие в Верховный Совет, не доверяли представителям бывших властей на

*Представлена 13.XI.2023 г., рецензирована 20.XI.2023 г. и 22.XI.2023 г., принята к печати 15.XII.2023 г.

местах и пытались взять местные советы под свой контроль. К тому же формирование системы местного самоуправления в Армении проходило в условиях сложной внешнеполитической и социально-экономической обстановки.

Попытки трансформировать местные советы в органы местного самоуправления так и не увенчались успехом. Концепция местного самоуправления формировалась сверху, в результате длительных дискуссий в законодательных и исполнительных органах страны, политических партиях. Система местного самоуправления была сформирована лишь после принятия Конституции РА.

В статье представлены сложные взаимоотношения Верховного Совета и местных советов до принятия Конституции Республики Армения.

Верховный Совет РА и местные Советы народных депутатов

После принятия Верховным Советом Армении «Декларации о независимости» в условиях демократизации политической системы возник вопрос о создании системы местного самоуправления. Несмотря на то, что в Верховный Совет были избраны представители Коммунистической партии Армении (КПА) и Армянского общенационального движения (АОД), все властные позиции перешли к АОД. Шел процесс формирования новых фракций и депутатских групп, и фактически в течение 1991 года парламент Армении стал многопартийным органом законодательной и представительной власти. В первые годы независимости, пока не была принята новая Конституция независимой республики, была предпринята попытка трансформации местных советов (сельских, районных, городских, городских районных советов) в органы местного самоуправления. Однако не было четкого понимания

системы местного самоуправления.

Со стороны новых политических сил высказывалось недоверие к местным властям, вызванное различиями в путях прихода к власти и представительстве в органах власти. Основные политические силы пришли в Верховный Совет через Арцахское движение, получив опыт народовластия на митингах на улицах и площадях городов Армении. В то время как формирование состава представительных органов осуществлялось по советскому номенклатурному принципу, в соответствии с которым в составе местных советов были представители разных социальных групп – рабочих, служащих, представителей колхозов, руководящего звена.

Если в Верховном Совете был положен конец власти Коммунистической партии, то в местных советах еще доминировали коммунисты или их ставленники. В стране Советов местные советы были интегрированы в систему государственных органов и находились под контролем Коммунистической партии. Между тем в новых условиях эта система начала рушиться, так как главный актер этой системы, Коммунистическая партия, был отстранен от власти. Верховному Совету нужно было разрешить конфликт между органами государственной власти и местными органами. Именно поэтому в запланированную Верховным Советом повестку вошел и законодательный пакет, предусматривающий формирование нового административно-территориального устройства и органов местного самоуправления.

Изменения на местном уровне начались с переименований административно-территориальных единиц и населенных пунктов. 22 октября 1990 г. в Верховном Совете была создана Комиссия по переименованию административно-территориальных единиц и

населенных пунктов Республики Армения в следующем составе¹:

Арутюнян Гагик, заместитель председателя Верховного Совета Армении (председатель комиссии);

Авагян Григор, заведующий кафедрой экономической географии Ереванского института народного хозяйства, депутат Верховного Совета РА;

Барсебян Ованес, профессор кафедры истории армянского языка ЕГУ;

Бегларян Григор, младший научный сотрудник Института искусств Академии наук РА;

Амбарцум Галстян, старший научный сотрудник Института истории Академии наук РА;

Гргегарян Акоп, доцент кафедры географии Ереванского института народного хозяйства;

Ишханян Аветик, старший научный сотрудник института «Айгунметпроект», президент ассоциации «Маштоц»;

Хачатрян Людвиг, член Комиссии по становлению независимой государственности и национальной политики Верховного Совета РА;

Карагезян Оганес, научный сотрудник Института востоковедения Академии наук РА;

Киракосян Эля, секретарь комиссии, исполняющая обязанности заведующего отделом по вопросам труда;

Арутюнян Бабкен, доцент кафедры истории армянского народа ЕГУ, научный руководитель Лаборатории исторической географии и картографии Армении;

Матевосян Арташес, старший научный сотрудник Матенадарана;

Матевосян Грант, писатель, депутат Верховного Совета РА;

Мурадян Паруйр, заведующий отделом Института востоковедения

¹ Национальный архив Армении (НАА), ф. 207, сп. 62, д. 18, стр. 129.

АН РА, доктор-профессор;

Петросян Вардгес, директор Фонда культуры Армении, депутат Верховного Совета РА;

Джаукян Геворг, академик Академии наук РА, директор Института языка АН РА имени Г-ра Ачаряна;

Джиханян Врамшапук, ученый секретарь Института языка имени Ачаряна;

Рубинян Карапет, член Комитета местного самоуправления Верховного Совета РА.

После окончания работы комиссии начался процесс переименования (восстановления армянских наименований) ряда районов и населенных пунктов Республики Армения. В Верховном Совете началось обсуждение закона «О местных советах». 28 октября 1990 г. в некоторых областях были проведены выборы в местные советы, и в Верховном Совете возникло определенное беспокойство по этому поводу. Власть в центре перешла к новым политическим элитам, но для реформирующейся страны было очень важно, какие силы придут к власти на местах. Поэтому депутаты Верховного Совета часто ездили по селам и городам, встречались с избирателями, председателями местных советов, чтобы понять, что на самом деле происходит на местах. По сравнению с парламентскими выборами 1990 года местные выборы казались регрессивными. По этой причине многие депутаты, оценивая ситуацию с выборами на местах, высказывали свое недовольство, считая, что нормы демократии на местных выборах были нарушены.

Депутат Аршак Садоян, высказываясь о местных выборах, отмечал, что даже в располагающем значительными финансовыми средствами Ереване кандидаты не представляют хотя бы свои

краткие предвыборные программы. Ситуация в районах была еще более критичная. Посетив четыре села Котайкского района, депутат был очень разочарован тем, что 90% избирателей не были проинформированы о кандидатах в местные советы и порядке выборов. Он с беспокойством отмечал, что подготовительная работа для выборов в местные советы почти не ведется².

В Комиссию местного самоуправления поступало множество жалоб в виде документов, видеозаписей и показаний о нарушениях, допущенных во время выборов в местные советы. Однако в предыдущем законе о выборах в местные советы существовали пробелы, и возможности для обсуждения этих проблем и нарушений были ограничены. В случае выборов депутатов в Верховный Совет были две инстанции для рассмотрения жалоб – ЦИК и мандатное собрание, которые могли признать выборы недействительными. Однако в случае местных выборов эти инстанции не работали.

Левон Тер-Петросян, председатель Верховного Совета Армении, предложил, чтобы эту функцию взял на себя комитет местного самоуправления. Однако из-за большого количества жалоб, которые было невозможно рассмотреть полностью, было предложено создать временную парламентскую комиссию, которая бы рассматривала обращения вместе с Постоянной комиссией местного самоуправления³. Выводы временной комиссии должны были быть представлены на рассмотрение Верховному Совету.

Как было отмечено выше, если на парламентских выборах преобладали новые политические силы, то влияние КПА на местах было довольно сильным, что объясняло повышенное внимание Верховного Совета к местным выборам.

Активность населения на местных выборах была низкой. В

² НАА, ф. 207, сп. 62, д. 78, стр. 22.

³ НАА, ф. 207, сп. 62, д. 83, стр. 89.

некоторых регионах, где проводились выборы и были избраны не менее 2/3 депутатов, созывались заседания советов и избирались новые лидеры. Но эти выборы проходили бесконтрольно, и Левон Тер-Петросян предложил не допускать проведения заседаний советов до принятия закона о советах.

30 октября 1990 года Верховный Совет РА принял решение, согласно которому созыв первых сессий местных Советов народных депутатов откладывался до принятия соответствующих законов о местных Советах народных депутатов⁴. Это решение, в принципе, было нарушением местной демократии. Задержка принятия закона привела к усилению анархии на местах. Верховный Совет РА принял решение «О создании комиссии по контролю за применением закона о местных советах народных депутатов, выборов народных депутатов»⁵.

В своем выступлении в Верховном Совете 14 ноября 1990 г. Тер-Гусик Лазарян представил следующие факты нарушений, выявленных на местных выборах:

- сжигание бюллетеней, что не позволило комиссии проверить объективность подсчета голосов;
- нарушения голосования в воинских частях;
- случаи кражи избирательной урны после выборов;
- «В регионах возникли оппозиционные силы, борьба которых за власть создала нездоровую атмосферу. и, по сути, выборы, как таковые, не состоялись»⁶.

Постановлением Верховного Совета повторное голосование за кандидатов в депутаты местных советов было назначено на 18 ноября 1990 года. В постановлении были упомянуты

⁴ НАА, ф. 207, сп. 62, д. 18, стр. 185.

⁵ НАА, ф. 207, сп. 62, д. 18, стр. 228.

⁶ НАА, ф. 207, сп. 62, д. 90, стр. 84.

многочисленные жалобы на нарушения Избирательного кодекса во время выборов народных депутатов местных советов⁷.

Сложившуюся ситуацию в местных советах можно объяснить как субъективными факторами, так и сложными трансформационными процессами. Ранее советы подчинялись первым секретарям райкомов КП Арм. ССР. После прихода в парламент новых политических сил в некоторых случаях образовался вакуум власти, который часто начали заполнять «местные авторитеты». При этом, если представители коммунистической элиты до «избрания» проходили серьезную партийную школу, учась навыкам организации хозяйства и управления, то люди, пришедшие к власти на местах, часто не имели никакого опыта и, зачастую, были просто безграмотны в этих вопросах.

В своем выступлении от 30 ноября в Верховном Совете премьер-министр Вазген Манукян заявил: «Есть регионы, которые просто бесхозны и в области сельского хозяйства, и промышленности, и политики. Мы теряем темп. Мы проигрываем и в политике, и в экономике, и в кадровой политике». Власти ясно видели проблему, но до тех пор, пока не были внедрены системы территориального управления и местного самоуправления, у них не было достаточных рычагов вмешательства и регулирования.

24 декабря 1990 года были внесены изменения и дополнения в законы «О поселковом сельском Совете народных депутатов Республики Армения», «О районном Совете народных депутатов Республики Армения», «О городском Совете народных депутатов Республики Армения», «О городском районном Совете народных депутатов Республики Армения», с помощью которых была предпринята попытка регулирования деятельности местных советов

⁷ НАА, ф. 207, сп. 62, д. 19, стр. 20.

и работы их исполнительных комитетов⁸.

С новым законом усилилось влияние Верховного Совета РА на районные и городские советы. Например, Верховный Совет РА мог отменить решение районного совета в случае несоответствия Конституции и законам РА. Также Верховный Совет мог принимать решения о созыве сессии вновь избранного городского совета или районного совета города. Заседание мог открыть представитель Верховного Совета РА⁹. Если председатель местного совета не был избран в течение недели после признания полномочий хотя бы половиной голосов от общего числа депутатов на сессии, Совет Министров с согласия Председателя Верховного Совета мог назначить уполномоченного представителя с полномочиями председателя совета¹⁰. Кроме того, Президиум Верховного Совета «по своей инициативе или по инициативе Совета Министров мог выразить недоверие председателю Совета»¹¹. Областные советы народных депутатов и городские советы городов республиканского значения были также подотчетны Верховному Совету РА. Депутаты Верховного Совета вмешивались в процесс выборов депутатов местных советов не только принимая решения, но и направляя наблюдателей и доверенных лиц в местные советы.

Система местного самоуправления не сформировалась, и деятельность местных советов фактически была взята под контроль Верховным Советом Республики Армения. Постоянная комиссия местного самоуправления Верховного Совета состояла из 8 членов, в обязанность которых входило, помимо работы над проектом закона о местном самоуправлении, также посещение и

⁸ НАА, ф. 207, сп. 62, д. 21, стр. 91, 102, 111.

⁹ НАА, ф. 207, сп. 62, д. 21, стр. 112.

¹⁰ НАА, ф. 207, сп. 62, д. 21, стр. 112.

¹¹ НАА, ф. 207, сп. 62, д. 21, стр. 116.

контролирование местных советов. В Армении насчитывалось 65 местных советов, и контроль над ними был разделен между членами комиссии.

На этом этапе, без серьезных исследований и обоснований, решением Верховного Совета была проведена политика разделения деревень и восстановления в них сельских советов, несмотря на предыдущую политику укрупнения, проведенную в позднесоветском периоде.

12 августа 1991 года Президиум Центрального Совета Республики Армения принял решение «О закреплении депутатского состава Верховного Совета в регионах Республики»¹², согласно которому отдельные члены президиума и постоянных комиссий ЦК РА были закреплены за различными городами и районами республики. Это предполагало создание нового института полномочных представителей, который, по сути, должен был заменить прежнюю функцию руководства Коммунистической партией и осуществления контроля над ней. Они должны были следить за выполнением законов и решений, принятых Верховным Советом РА. Однако создание этого нового института не состоялось, и на одном из заседаний депутат Г.Оганесян заявил: «Заверения президента о том, что президентская система заменит Коммунистическую партию и станет закрепляющим звеном, работающим в советах, на самом деле дали противоположный результат, эта идея получилась слишком размытой, разлагающей основы государственного управления и самоуправления»¹³.

Многие депутаты за два года работы пришли к выводу, что все вопросы, относящиеся к центральным республиканским проблемам, должны решаться правительством и Верховным Советом, а те

¹² НАА, ф. 207, сп. 62, д. 6, стр. 25.

¹³ НАА, ф. 207, сп. 64, д. 258, стр. 116.

проблемы, которые касаются местных интересов, например, санитарное состояние, транспорт, торговля, вопросы просвещения и здравоохранения, связанные с местными проблемами, должны полностью находиться под юрисдикцией местных органов власти.

Перед началом второй сессии в Верховном Совете произошли некоторые организационные изменения. Было решено проводить 6 заседаний в месяц. Перерывы предназначались для законодательской работы депутатов в постоянных комиссиях. Это должно было позволить депутатам, входящим в состав исполнительных органов местных советов (а таких было примерно 8% от общей численности депутатов), уделять больше времени своей непосредственной работе. В перерывах работы Верховного Совета некоторые депутаты и члены правительства выезжали в деревни и проводили разъяснительную работу, связанную с приватизацией земли¹⁴. Такая деятельность приветствовалась руководством Верховного Совета.

В 1991 году, после референдума о независимости и развала СССР, Армения стала независимым государством. Было установлено президентское правление, что уменьшило влияние Верховного Совета в том числе и на местные советы, но проблема местного самоуправления так и не была решена.

В 1992 году, в одном из своих выступлений, Президент РА Левон Тер-Петросян отмечал: «Сегодня местная власть практически вышла из нашей государственной структуры. А если принять во внимание тот факт, что местные власти в основном представлены чиновниками прежней системы, то должно быть понятно, какие противоречия возникают между республиканской и местной властями. Если бы парламент смог бы в короткий срок восполнить этот пробел, создать определенную правовую основу системы местного самоуправления,

¹⁴ НАА, ф. 207, сп. 62, д. 98, стр. 8.

то есть, наконец, принять закон о местном самоуправлении, то мы сделали бы очень серьезный шаг в направлении улучшения наших государственных структур»¹⁵.

В течение 1992 года периодически обсуждался вопрос о местном самоуправлении. Само понятие «самоуправление» для многих было непонятным, и многие депутаты просили разъяснений и определений. Возникла необходимость более детального изучения западного опыта местного самоуправления. При обсуждении приватизации и других законов экономического блока также всегда возникал вопрос о местном самоуправлении. Намечались два пути решения:

- зафиксировать все основы реформ в законе о местном самоуправлении, а затем на их основе перенести их в соответствующие законы по экономическому развитию;

- в законах, принимаемых по экономическому блоку, закрепить часть, предназначенную для органов местного самоуправления, а позднее закрепить ее в Законе о местном самоуправлении¹⁶. Так было сделано, например, в законе о собственности, в законе об агрохолдингах.

В своем выступлении от 24 февраля 1992 года депутат Дж.Ананаян отмечала, что на местах царит хаос из-за отсутствия закона о местном самоуправлении. К этому времени уже было несколько версий законопроекта, и первая уже была отправлена на рассмотрение депутатов.

Власти надеялись, что ожидаемые экономические достижения, связанные с приватизацией, станут серьезной основой для реализации политических целей. Начались процессы приватизации земли, но некоторые председатели сельских советов препятствовали этому. Поэтому важным было также реформирование системы

¹⁵ Тер-Петросян 2006, 285.

¹⁶ НАА, ф. 207, с. 62. д. 179, стр. 8.

местных советов и развитие местного самоуправления. Как выразился депутат А.Садоян: «Больше прав, больше ответственности»¹⁷.

Проблема внедрения органов местного самоуправления поднималась неоднократно. Так, в 1993 году на V съезде Армянского общенационального движения в своем выступлении Левон Тер-Петросян заявлял: «Пока в Армении существует система советов, мы не можем создать серьезные государственные структуры, отвечающие требованиям сегодняшнего дня. И система, хоть и свергнута, продолжает свое существование, и мораль этой структуры, и чиновники правят в ближайшем окружении»¹⁸.

В 1993 г. борьба за власть на местах усилилась, что привело к насильственным действиям против местных властей в различных регионах Республики Армения. Депутат Верховного Совета от партии Дашнакцутюн Багдасарян в своем выступлении от 1 марта 1993 г. заявил об эскалации насилия на местах и отметил, что Верховный Совет ничего не делает, чтобы помешать этому¹⁹. 15 марта 1993 г. фракция АРФД предложила внести в повестку дня вопрос о создании временной комиссии по расследованию применения насильственных действий против некоторых органов местного самоуправления в различных городах (в Аштараке, Армавире, Горисе и т.д.)²⁰.

Ситуация усугублялась тем, что трансформационные процессы на местах проходили в условиях войны. Особенно приграничные районы с Азербайджаном нуждались в четком управлении. 15 июля 1993 года, выступая на Верховном Совете с докладом «О ситуации в

¹⁷ НАА, ф. 207, с. 62. д. 231, стр. 30.

¹⁸ **Тер-Петросян** 2006, 284.

¹⁹ НАА, ф. 207, с. 62. д. 274, стр. 7.

²⁰ НАА, ф. 207, с. 62. д. 278, стр. 40.

приграничных районах Республики Армении», министр обороны В. Манукян отмечал, что приграничные деревни, казалось, вели войну с врагом самостоятельно. Это было связано с ошибочной политикой по созданию армии, отсутствием регулярной армии, отсутствием правовой базы армейского строительства, а также необходимостью создания военизированных поселений и соответствующего закона о них. Он также отметил, что при строительстве дорог не учитывалось снабжение деревень, что приводило к слабым связям между ними²¹.

Эти проблемы так и не были решены до принятия Конституции РА 1995 года. В контексте реформ, связанных с принятием на референдуме 5 июля 1995 года Конституции РА, особенно радикальными стали шаги, направленные на формирование системы местного управления и самоуправления. Схема местного самоуправления была представлена в главе 7 Конституции РА под названием «Территориальное управление и местное самоуправление». Система местного самоуправления была создана в соответствии с Европейской Хартией местного самоуправления.

25 октября 1995 года по законодательной инициативе Государственно-правовой комиссии в правительство РА были направлены на заключение проекты законов «О территориальном управлении», а 8 декабря – «Переходные положения о местном самоуправлении и территориальном управлении и отношения к органам местного самоуправления». До принятия новых законов закон «О сельских и городских советах» мог действовать в той мере, в которой он не противоречил рассматриваемому законопроекту. Фактически советы временно выполняли роль совета старейшин, а председатель исполкома становился главой общины. В 1996 году, наконец, был принят Закон РА «О местном самоуправлении».

²¹ НАА, ф. 207, с. 62. д. 223, стр. 32.

Заключение

В 1990-е годы, в условиях приобретения независимости, в Армении происходили сложные процессы трансформации политической системы: осуществлялся переход от советской системы правления к системе независимого демократического государства. В результате преобразований были изменены форма и содержание законодательных и представительных органов. В Верховном Совете РА изменения проходили более легко, поскольку пришедшие к власти депутаты за два года Арцахского движения накопили определенный опыт народовластия на улицах и площадях Еревана и других городов, а также были готовы осуществить переход к новым правилам политической игры. Более того, многие из них были авторами и инициаторами этих изменений.

Иная ситуация сложилась на местном уровне власти, в местных советах, где по-прежнему правила коммунистическая элита. В первый период независимости возникли острые противоречия между Верховным Советом и местными советами. Верховный Совет пытался взять под полный контроль местные советы, но этот процесс провалился и фактически привел к безвластию на местах. Решить проблему удалось только в 1995 году после принятия Конституции РА. Согласно Конституции РА, в стране была введена система местного самоуправления, а местные советы были заменены органами местного самоуправления.

ЛИТЕРАТУРА

Национальный архив Армении (НАА), ф. 207, сп.62, д.6
НАА, ф.207, сп.62, д.18
НАА, ф.207, сп.62, д.19
НАА, ф.207, сп.62, д.21

НАА, ф.207, сп.62, д.78
НАА, ф.207, сп.62, д.83
НАА, ф.207, сп.62, д.90
НАА, ф.207, сп.62, д.91
НАА, ф.207, сп.62, д.98
НАА, ф.207, сп.62, д.179
НАА, ф.207, сп.62, д.223
НАА, ф.207, сп.62, д.231
НАА, ф.207, сп.64, д.258
НАА, ф.207, сп.62, д.274
НАА, ф.207, сп.62, д.278

Левон Тер-Петросян 2006, Избранное. Выступления, статьи, интервью: 1983–1998 гг., Ереван, 728 с. (на арм. яз.).

Լիլիթ Ս. Ջաքարյան, ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դրոշմագր, ՀՀ Գերագույն խորհրդի և Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների փոխհարաբերությունները

Ամփոփում

1990-ական թվականներին Հայաստանի անկախացման համատեքստում տեղի ունեցավ քաղաքական համակարգի բարդ փոխակերպման գործընթաց՝ անցում կատարվեց կառավարման խորհրդային համակարգից անկախ ժողովրդավարական պետության համակարգի: Փոխակերպումների արդյունքում փոփոխվեց օրենսդիր, ներկայացուցչական մարմինների ձևն ու բովանդակությունը: Դա առավել հեշտ ընթացավ ՀՀ Գերագույն խորհրդում, քանի որ այստեղ իշխանության եկած պատգամավորները Արցախյան շարժման 2 տարիների ընթացքում Երևանի և այլ քաղաքների փողոցներում և հրապարակներում ժողովրդաիշխանության որոշակի փորձ էին կուտակել և պատրաստ էին անցում կատարել քաղաքական խաղի նոր կանոններին: Ավելին՝ նրացից շատերը հենց այդ փոփոխությունների հեղինակներն ու պատվիրատուներն էին: Այլ էր վիճակը տեղական կառավարման մակարդակում՝ տեղական խորհուրդներում,

որտեղ դեռևս իշխում էր կոմունիստական էլիտան: Անկախության առաջին շրջանում սուր հակասություն առաջացավ Գերագույն խորհրդի և տեղական խորհուրդների միջև: Գերագույն խորհուրդը փորձեց լիակատար հսկողության տակ վերցնել տեղական խորհուրդները, սակայն գործընթացը ձախողվեց և իրականում բերեց տեղերում անիշխանության: Խնդիրը հնարավոր եղավ լուծել միայն 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո: Սահմանադրությամբ երկրում ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը և տեղական խորհուրդներին փոխարինեցին տեղական ինքնակառավարման մարմինները:

Բանալի բաներ՝ Գերագույն խորհուրդ, ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդներ, տեղական ինքնակառավարման հանձնաժողով, օրենսդիր մարմին, տեղական ինքնակառավարման մարմիններ:

Lilit S. Zakaryan, Institute of History of the NAS, PhD., Associate Professor, **Relations between the Supreme Council of the Republic of Armenia and Local Councils of People's Deputies.**

Summary

In the 1990s, in the context of Armenia's independence, a complex process of transformation of the political system took place: a transition was made from the Soviet system of governance to the system of an independent democratic state. As a result of the transformations, the form and content of legislative representative bodies were changed. It went easier in the Supreme Council of the Republic of Armenia, because the deputies who came to power here had accumulated some experience of democracy in the streets and squares of Yerevan and other cities during the two years of the Artsakh movement and were ready to make the transition to the new rules of the political game. Moreover, many of them were the authors and initiators of those changes. The situation was different at the local government level, in

the local councils, where the communist elite still ruled. In the first period of independence, a sharp contradiction arose between the Supreme Council and the local councils. The Supreme Council tried to take full control of the local councils, but the process failed and actually led to anarchy at the local level. It was possible to solve the problem only in 1995 after the adoption of the RA Constitution. Based on the Constitution, the system of local self-government was introduced in the country and local councils were replaced by local self-government bodies.

Key words: Supreme Council, local Councils of people's deputies, local self-government commission, legislative body, local self-government bodies.

ՔԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

lira777@yahoo.com

ID 0009-0000-5496-4997

DOI:10.59523/1829-4596.2023.2(27)-194

ՍԻՐԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՐԱԾ ՁՐԿԱՆՔՆԵՐԸ (2012–2018)*

Քանալի բառեր¹ Սիրիայի պատերազմ, իսլամիստ, ահաբեկիչ, առևանգում, ֆիզիկական և բարոյական զրկանքներ, փրկագին, իսլամացում, Սիրիայի հայ համայնք, ճգնաժամ:

Ներածություն

2011 թ. մարտի 15-ին Սիրիայում սկսված պատերազմական գործողությունների ընթացքում այդտեղ բնակվող հայերը, որպես Սիրիայի քաղաքացիներ, տեղի ամբողջ բնակչության, այդ թվում այլ էթնիկ, մասնավորապես, քրիստոնյա խմբերի հետ միասին, կրել են մարդկային ու նյութական զգալի կորուստներ¹ և ֆիզիկական ու բարոյական անասելի զրկանքներ:

2011 թ-ից Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի դեմ ծավալվող ռազմական գործողությունները չէին կարող անտարբեր թողնել նաև տեղաբնակ հայերին, որոնք գերազանցապես վայելում էին երկրի ղեկավար շրջանների բարյացակամ վերաբերմունքն իրենց հանդեպ:

Մերձավոր Արևելքից սերված սիյուռքահայ առանձին գիտնականների իսկ հավաստմամբ՝ «Ինչպես 1975 թվականին Լիբանանի հայերը, նույնպես և 2011 թվականին Սիրիայի հայերը, ընդհա-

* Ներկայացվել է 26.IX.2023 թ., գրախոսվել է 04.X.2023 թ. և 10.X.2023 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2023 թ.:

¹ Ավելի մանրամասն տե՛ս՝ **Ավագյան** 2022, 12–29:

նոր առմամբ, գոհ էին իրենց համայնքի դրությամբ: Միաժամանակ, նրանք մտավախություն ունեին, որ քաղաքական համակարգում որևէ ռադիկալ փոփոխություն կարող էր խաթարել նրանց մշակութային իրավունքները, ինչից նրանք օգտվում էին»²:

Ահա թե ինչու, երկրի ապագայով մտահոգ սիրիահայերի մի ստվար մասը կողմնակից էր Բաշար ալ-Ասադի իշխանությանը, «Սիրիայի ազգային միասնությանը, անկախությանն ու տարածքային ամբողջականությանը»³, իսկ մյուսները պահպանել են չեզոքություն⁴: Սակայն, «երբ հակամարտությունը ռազմական բնույթ է ընդունել, ակնհայտ էր, որ «Լիբանանում իրականացրած դրական չեզոքության քաղաքականությունը Սիրիայում կրկնօրինակելը հնարավոր չէր լինելու»⁵:

Ինչպես ստորև կտեսնենք, ցավոք, եղել են նաև առանձին հայեր, որոնք հակամարտության ընթացքում ընդունել են իսլամ կամ, հանգամանքների բերումով ու նյութական կարիքից դրդված, աջակցել են Թուրքիայի ազդեցության տակ գտնվող Սիրիական ազատ բանակին (ՍԱԲ)⁶:

Եթե սկզբնական շրջանում ռազմական գործողությունները հայաբնակ շրջաններից հեռու էին ծավալվում, ապա շուտով սկսել են հասնել նաև հայկական բնակավայրեր, հատկապես՝ Հալեպ: Հանգամանք, ինչը վկայել է այն մասին, որ սիրիական ընդդիմություն կոչվածը նաև հակաքրիստոնեական, հակահայկական ուղղվածության էր:

² **Sanjian** 2015, 19, <http://www.noravank.am> (23.08.2023).

³ **Sanjian** 2015, 20, <<http://www.noravank.am>> (23.08.2023).

⁴ Chicago Holds Rally in Support of Syrian-Armenians. 2012, <<https://armenianweekly.com>> (23.08.2023).

⁵ **Sanjian** 2015, 20, <<http://www.noravank.am>> (23.08.2023).

⁶ Chicago Holds Rally in Support of Syrian-Armenians. 2012, <<https://armenianweekly.com>> (23.08.2023). **Fisk** 2013, <<http://www.independent.co.uk>> (23.08.2023).

Հայերի նկարմամբ իսլամական ահաբեկիչների գործադրած դաժանությունները

Սիրիաքնակ հայերը, որպես քրիստոնյա փոքրամասնություն, երկրի ամբողջ բնակչության հետ միասին ենթարկվել են ինքնահոչակ «Իսլամական պետության» (ԻՊ) ահաբեկիչների դաժան բռնություններին: Նրանց ևս թալանել են, առևանգել, սառը զենքով սպառնացել, մարդկային արժանապատվությունը նսեմացրել, հոգեկան տանջանքների ու կտտանքների ենթարկել և կամ՝ ոմբահարումների զոհ դարձրել⁷:

Իսլամական ահաբեկիչները տեղացի քրիստոնյաներին առաջարկում էին կռվել գործող իշխանության դեմ: Չհամաձայնվելու դեպքում՝ սպառնում էին, դաժանորեն ծեծում, իսկ հայերից, որպես բարեկեցիկ համայնքի ներկայացուցիչների, նաև հսկայական փրկագին էին պահանջում⁸:

Հայաստան ներգաղթած Հարութ Հալաջյանը պատմել է, թե ինչպես իսլամիստներն առանց պատճառի կարող էին ծեծել քրիստոնյաներին: Նա վկայել է. «Մի անգամ կռվող ջահելներից մեկն եկավ ինադու ինձի խփեց, անցավ: Ես էլ, չիմանալով, որ ինքը մուսուլման ա, կռիվների մասնակից, դարձա, իրան հարցրեցի՝ խի ես խփում: Շատ վատ ձևով հարձակվավ ինձ վրա, ու էդ օրվանից տնից չիջա՝ մինչև Հայաստան գալը»⁹:

Մեկ ուրիշ ականատես՝ հալեպցի Լուսին Վարդանը, նկարագրել է հայերի կրած սարսափները և այն պայմանները, որոնցում նրանք հարկադրված են եղել ապրել. «Մի քանի պայթյուն կրկար մեր քաղաքը, կսկսեին վախնալ: Եկեղեցիները կվառեն, կսպանեն, բայց կապրեն, ի՞նչ ընեն»¹⁰:

⁷ Armenian Killed in Aleppo 2014, <<http://www.panorama.am>> (23.08.2023).

⁸ Sengupta 2012, <www.independent.co.uk> (23.08.2023).

⁹ Մամյան 2013, <<http://hetq.am>> (23.08.2023):

¹⁰ Armenian Homes in Kessab Looted, Occupied 2014, <<http://asbarez.com>>

Քեսապցի Տիգրանուհի Մանջիկյանի բնակարանը թալանվել է, իսկ Սթիվ Շըխուկյանը դանակահարվելու սպառնալիքի է ենթարկվել և կրակահերթերի տակ տևական ժամանակ շղթայված մնացել: Հայր ու որդի Վանիս և Մինաս Լևոնյաններն էլ առևանգվել ու դաժանորեն սպանվել են¹¹ և այլն:

Ինչպես «Հալէպ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, սիրիահայ հայրենադարձ Սարգիս Բալխյանն է նշել, ՍԱԲ-ն ունեցել է բոլոր գենք ունեցող հայերի անձնական տվյալները (անուն, հասցե, լուսանկար)¹²: Այդ հանգամանքը պատճառ է դարձել, որ հայերին գերեվարեն Բաշար ալ-Ասադի իշխանությանն աջակից լինելու մեղադրանքով:

Ծավալվող և օրեցօր ավելի դաժան ու ընդգծված կրոնական երանգներ ստացող պատերազմի հետևանքով 2012 թ. 23-ամյա սիրիահայ Համլիկ Պետրոսյանն ընկերուհու՝ 18-ամյա քրիստոնյա արաբ Նուրա Հադադի հետ հազիվ կարողացել է փախչել Լիբանան: Նա խոստովանել է, որ լինելով երիտասարդ և Հալեպի համալսարանի ուսանող, տատանվել է քաղաքական հստակ դիրքորոշման մեջ. սկզբում պաշտպանել է Բաշար ալ-Ասադին, ապա՝ ահաբեկիչներին: Սակայն, երբ վերջիններս Հալեպի արվարձանային Անադան թաղամասում իրեն և ընկերուհուն առևանգել են, հրացանի կոթով, բռունցքի և ոտքի հարվածներով ծեծել, նա վերջնականապես համոզվել է, որ ահաբեկիչներին չի հետաքրքրել թե տվյալ անձը չէզոք դիրքորոշում ունի, թե քաղաքական որոշակի հայացքներ: Առևանգողները բռնագրավել են նրա թանկարժեք ավտոմեքենան, փրկագին պահանջել ընկերուհու և իր

(23.08.2023).

¹¹ Armenian Homes in Kessab Looted, Occupied 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023). **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

¹² **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

համար, ապա, սակարկելով, 12.000 դոլար են պոկել նրա ծնողներից ու նոր միայն բաց թողել: Ազատվելուց հետո նրա սարսափահար ընկերուհին ցավով խոստովանել է, որ պատահաճից հետո իր համար այլևս դժվար է մահմեդական ընկերների հետ առնչվելը: «Մենք հեռացանք, - հայտնել է նա, - քանի որ նրանք ուզում էին մեզ սպանել: Նրանք ուզում էին մեզ սպանել, քանի որ մենք քրիստոնյա էինք: Նրանք մեզ «քաֆիր»¹³ էին անվանում, նույնիսկ փոքր երեխաներն էին ասում նման բաներ: Նրանք, ովքեր մեր հարևաններն էին՝ մեր դեմ էլան»¹⁴:

2013 թ. հուլիսի 26-ին արհեստավոր 4 հայեր (21-ամյա Կառլո (Գարեգին) Հացագործյան, Կարո Պոպոդյան, Նարեկ Վարժապետյան, 27-ամյա Սաքո Ասատուրյան¹⁵) Հալեպ-Երևան ավտոբուսի վրա ապստամբների հարձակման հետևանքով առևանգվել էին: Սկզբում նրանց ճակատագիրն անհայտ էր, ապա պարզ է դարձել, որ զինյալ ահաբեկիչները նրանց 45 օր ֆիզիկական և հոգեբանական տանջանքների ու կտտանքների են ենթարկել: Գերության մեջ էր հայտնվել նաև 3 հայ կին, որոնց սակայն 10 ժամ անց ահաբեկիչները բաց էին թողել¹⁶:

Ի դեպ, այն տունը, որտեղ գերի էին պահվում հայերը, Թուրքիայից գարեջուր ներկրող սիրիահայ Չափրազյան ընտանիքի սեփականությունն էր, որը ՍԱԲ-ի գրոհայինները բռնագրավել և վերածել էին ռազմական պահեստի ու համակենտրոնացման ճամբարի:

Տանջանքների ենթարկված տղամարդկանց իսկ վկայությամբ,

¹³ Քաֆիր (Kaffir – արաբ.) – Ալլահին մերժող կամ՝ անհավատ:

¹⁴ **Sengupta** 2012, <www.independent.co.uk> (23.08.2023).

¹⁵ Ս. Ասատուրյանը դրանից մեկ ամիս առաջ սիրիական բանակ վերստին զորակոչվելու հանձնարարական էր ստացել, սակայն մեկնել էր Հայաստան՝ միանալու եղբորը: Տե՛ս **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

¹⁶ **Rebels Release Kidnapped Syrian Armenian Children (Update)** 2013, <<https://armenianweekly.com>>. **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

նրանց ստիպել են ծնկաչոք Տերունական աղոթքն արտասանել, իսկ դահիճները այդ ընթացքում հայիոյելով, տարբեր գործիքներով նրանց ծեծել ու արյունաքամ են արել: Ահաբեկիչները հայիոյել են ոչ միայն Բաշար ալ-Ասադին, այլև՝ ընդհանրապես հայերին, քրիստոնեկան կրոնը, Հիսուս Քրիստոսին ու Մարիամ Աստվածածնին: Զինյալները հայերին տանջելիս սարսափեցրել են՝ ասելով. «Դուք բոլորդ էլ դավաճաններ եք: Դուք քաֆիրներ (անհավատներ – Ք.Ա.) եք, որ պաշտպանում եք Ասադին: Վաղը մենք ձեզ կսպանենք»¹⁷:

Եվ կամ՝ ՍԱԲ-ի մարտիկները գերեվարված հայերին ներկայացրել են անհավանական պահանջներ: Օրինակ՝ «Քանի դեռ սիրիահայ համայնքն ի վիճակի չէ սիրիական բանակին համոզելու, որ այն իր ռազմական անցակետերը հեռացնի Հալեպին մերձակա Միտանի շրջակայքից, ուրեմն մենք ձեզ կսպանենք»¹⁸ և այլն:

Սաքո Ասատուրյանի իսկ բնորոշմամբ՝ «Նրանք [ՍԱԲ-ի գրոհայինները] չէին ընդունում այն փաստը, որ մեր կյանքը ոչինչ էր [այսինքն՝ մենք ոչինչ էինք] այդ հակամարտության մեծ ծրագրում»¹⁹, քանի որ հայերն ի զորու չէին ինչ-որ կերպ ազդել երկրի քաղաքական գործընթացների վրա:

Գրոհայինները, զայրացած հայերի իշխանամետ դիրքորոշումից, հարցեր էին ուղղում նրանց. «Դուք հայերդ քաղաքացիականներ եք: Մենք պատերազմի մեջ ենք ալևիների դեմ, Ասադի բանակի դեմ: Ինչո՞ւ հայերը զենք են բարձրացրել մեր դեմ՝ սուննիների²⁰ դեմ: Ինչո՞ւ եք դուք սատարում Ասադին»²¹: Հայերն էլ

¹⁷ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

¹⁸ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

¹⁹ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

²⁰ Սուննի (արաբ.) – իսլամի ամենամեծաթիվ ճյուղը: Այն հետևում է Մուհամմեդ Մարգարեի ուղուն: Որպես մահմեդական համայնքի աշխարհիկ ղեկավար ընդունում է միայն Ալլին:

²¹ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

պատասխանում էին, որ իրենք ոչ թե Ասադին են պաշտպանում, այլ զենք են վերցրել իրենց ու իրենց հարևանների տները՝ հայ բնակչությանը պաշտպանելու համար:

Սաքո Ասատուրյանը փորձել է գրոհայիններին բացատրել, որ իրենք ալավիներից²² տարբեր են, և որ սուննի մահմեդականներն են ապաստան տվել Հայոց ցեղասպանություն հետևանքով Հալեպ գաղթած հայերին: Հայերը նրանց հետ հաշտ ու խաղաղ ապրել են դեռևս մինչև ԲԱԱՍ կուսակցության²³ իշխանության գալը: Անշուշտ, բոլորը, այդ թվում և հայերը դեմ էին կոռուպցիային և հասարակական-քաղաքական այլ արատավոր երևույթներին, որոնք կարող էին տեղ գտնել երկրում, սակայն դրանք կարելի էր հարթել ցույցերի, քաղաքացիական անհամաձայնությունների, բանակցությունների և այլ ճանապարհով, այլ ոչ թե արյունալի ու ավերիչ պատերազմի միջոցով. «Յուրաքանչյուր սիրիացի կողմնակից է բարեփոխման, սակայն մենք չենք ուզում, որ դրա հետևանքով կործանվի երկիրը», - ասել է Սաքո Ասատուրյանը²⁴:

Այդ բացատրությանը հաջորդել է ՍԱԲ-ի գրոհայինի հակահարցադրումը. «Եթե դուք չեք ցանկանում հակամարտության մեջ ներքաշվել, պետք է որ գնացած լինեիք ձեր երկիրը՝ Հայաստան: Բայց դուք չեք գնացել: Ձեր արքեպիսկոպոսը (նկատի ունի՝ թե-

²² Ալավիզմ – իսլամի պարսկական ուղղության և, նույնիսկ, շիիզմի էկլեկտիկ, էզոթերիկ ճյուղը: Ալավիներին միավորում է Մուհամեդ մարգարեի՝ փեսայի և հորական կամ մորական եղբոր պաշտամունքը:

²³ Ազգային-սոցիալիստական գաղափարներ հետապնդող Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության (ԲԱԱՍ՝ վերածնունդ, հարություն – արաբ.) հիմնադիր ժողովը կայացել է 1947 թ. ապրիլի 4–6-ին: Կուսակցությունը հիմնվել է ի պատասխան տարածաշրջանում Իսրայել պետության ստեղծման և ի պաշտպանություն արաբ ժողովուրդների ինքնիշխան իրավունքների: Կուսակցության գաղափարախոսությունը հիմնված է արաբական սոցիալիզմի, պանարաբիզմի և հակաիմպերիալիզմի համակցություն վրա: Կուսակցության կարգախոսն է՝ «Միություն, ազատություն, սոցիալիզմ»:

²⁴ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

մական առաջնորդին – Բ.Ա.) կառավարության հետ է: Ամեն մի հայ կառավարության հետ է: Ուրեմն, որտեղի՞ց են հայերն իրենց զենքերը ձեռք բերում: Մի՞թե դուք դրանք Ասադի բանակից չեք ստանում: Դուք դրանք օգտագործո՞ւմ եք ՍԱԲ-ի դեմ»²⁵: Ուստի, գրոհայինների եզրակացությունը մեկն էր. «Դուք ստախոս եք: Դուք բոլորդ էլ մեր դեմ եք: Քրոդերը, դրուզները²⁶, քրիստոնյաները, հայերը, շիիտները²⁷ և ալևիները՝ բոլորն էլ սուննիների դեմ են: Մենք ձեզ բոլորին մի լավ դաս կտանք»²⁸:

Առանձնապես ցնցող են ՍԱԲ-ի «Բալանկո» կոչված տանջարանում գերիների, այդ թվում՝ հայերի կրած տառապանքները: ՍԱԲ-ի զինվորները «զվարճանք» անվան տակ քրդերի, ալևիների և այլոց հետ ամենասարսափելի ձևերով տանջում էին նաև հայերին: Նրանց ոտքերն ու ձեռքերը կապած գլխիվայր ամրացնում էին վերամբարձիչի կեռիկին, մեկ մետրի չափ վեր բարձրացնում և սկսում ծեծել, մետաղներով հարվածել մարմնի տարբեր մասերին, էլեկտրահարում և այլն: Հաջորդ օրերին տանջանքները կրկնվում էին առավել դաժանությամբ: Այդ վիճակում հայերին զանգել էին տալիս իրենց հարազատներին և մահվան սպառնալիքի տակ ստիպում 10 մլն սիրիական ֆունտ (մոտավորապես 60 հազար դոլար) փրկագին ուզել: Մինչդեռ, հայ ընտանիքներն ի վիճակի չէին նման փրկագին վճարելու:

Գերիներին օրերով առանց ջուր և առանց սնունդ էին պահում, և կամ ստիպում խմել ջրավազանի ջուրը, որտեղ ՍԱԲ-ի զինվորները լողանում կամ միզում էին: Հայերին մաքրել էին տալիս զինվորական սանհանգույցը, օգտագործում որպես բեռնակիր, ստի-

²⁵ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

²⁶ Դրուզ (արաբ.) – իսլամի շիա ուղղության իսմայիստական աղանդի ուրույն ճյուղավորման հետնորդ:

²⁷ Շիա (արաբ.) – իսլամի ճյուղ, «Ալիի համախոհներ»:

²⁸ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

պում պատրաստել ականանետային ռումբ, որը կիրառվել է անգամ Հալեպի հայկական Միտան, Սուվեյմանիե թաղերի վրա հարձակումների ժամանակ և այլն: Գերեվարված հայերին ստիպում էին սերտել Ղուրանը, իսկ երեկոյան ստուգում էին. սխալվելու դեպքում նրանց ուղարկում էին «Բալանկո» տանջարան: Այդ դաժանությունները տեսած Սաքո Ասատուրյանը վկայել է. «Մենք լավ ուսանողներ էինք: Մենք հատվածները (Ղուրանի – Բ.Ա.) շատ լավ էինք սովորում: Մենք չէինք կարող թույլ տալ սխալվել: «Բալանկոյից» սարսափած մենք սովորեցինք և աղոթում էինք զինվորների հետ ճիշտ այնպես, ինչպես մահմեդականը»²⁹:

Երբ Կառլո Հացագործյանի գիտելիքներն օգտագործելու նպատակով նրան համակարգչի մոտ են նստեցրել, նա կարողացել է պահն օգտագործել և դիմագրքային սոցիալական ցանցի միջոցով Հայոց Առաջնորդարանից խնդրել վճարելու իր համար պահանջվող փրկագինը³⁰:

Ի վերջո, վերոնշվածներից Նարեկ Վարժապետյանն ազատվել է հարազատների վճարած փրկագնի շնորհիվ, մինչդեռ Կառլո Հացագործյանի մայրը, իր զարդերը վաճառելով հանդերձ, կարողացել է հայթհայթել որդու ազատման համար պահանջվող գումարի չնչին մասը միայն: Սաքո Ասատուրյանի համար համայնքը հանգանակություն է կազմակերպել, քանի որ նրա հայրը որդու գերվելու լուրն առնելուց 15 օր անց սրտի տագնապից մահացել էր, իսկ մայրը, որդուն տեսնելու հույսը կորցրած, մեկնել էր Երևան՝ ավագ որդու մոտ: Ի վերջո, և՛ Կառլոն, և՛ Սաքոն հեռացել էին Հալեպից և հաստատվել Հայրենիքում³¹:

Սիրիայի պատերազմի ընթացքում առանձնապես վտանգված էր հայ հոգևորականությունը: Ահա, թե ինչու, անվտանգության

²⁹ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

³⁰ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

³¹ **Balkhian** 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

հանգամանքներից ելնելով, ինչպես նաև որպես հայ և քրիստոնյա «թիրախ դառնալուց» խուսափելու համար հայ եկեղեցին նպատակահարմար է գտել որ փողոցում հայ հոգևորականը զերծ մնա կրոնական հագուստ կրելուց: Այդ մասին վկայել են Հալեպի որոշ հոգևորականներ և ավելացրել, որ նրանք հիմնականում իրենց տարածքներից չեն հեռացել, իսկ անհրաժեշտության դեպքում շրջել են անձնական զինված հայ թիկնապահի ուղեկցությամբ³²:

Եվ կամ՝ Հալեպի շրջակայքում ՍԱԲ-ի ապստամբները կանգնեցրել են սիրիական բանակի հովանավորության տակ գտնվող միլիցիայի մի հայ և մի քրիստոնյա արաբ անզեն ծառայողների ավտոմեքենան, ստուգել փաստաթղթերը, ապա, որպես պետական պաշտոնյա, նրանց տարել են մերձակա գյուղ՝ դատելու: Ապստամբների խմբի ավագի հարցին, թե ինչու են հայերը զենք վերցրել և կռվում իրենց դեմ, միլիցիայի հայ ներկայացուցիչը բացատրել է, որ հայերը զենք են վերցնում միայն իրենց եկեղեցիները պաշտպանելու համար: Այդ պատասխանը դրական է ընդունվել տեղի մուլլայի կողմից և, քանի որ գերվածներն իրենց համազյուղացիներն էին, որոշել են այս անգամ նրանց չպատժել, այլ բավարարվել են միայն դրամական հատուցում գանձելով³³:

Տեղական կամ միջազգային ոչ մի անկախ հանձնաժողով այդպես էլ որևէ հաղորդում չի հրապարակել Սիրիայի հայ բնակչության նկատմամբ իսլամիստ ահաբեկիչների իրականացրած տարաբնույթ բռնությունների, բարոյական կտտանքների, հանցագործությունների և մարդկային իրավունքների ոտնահարման վերաբերյալ: Այս հանգամանքը կրկին անգամ վկայել է այն մասին, որ նախ՝ «հայերը միջազգային հանրության աչքում սիրիական հասարակության աննշան մասն են»³⁴ և երկրորդ, որ ինչպես Հա-

³² Mollica, Hakobyan 2021, 191.

³³ Mollica, Hakobyan 2021, 192.

³⁴ Balkhian 2014, <<http://asbarez.com>> (23.08.2023).

յոց ցեղասպանության, այնպես էլ սիրիական իրադարձությունների ժամանակ, «միջազգային հանրությանը» բացարձակապես չեն հետաքրքրել ո՛չ երիտթուրքերի և ո՛չ էլ ՍԱԲ-ի դաժանությունները՝ հայերի նկատմամբ մասնավորապես և քրիստոնյաների նկատմամբ՝ ընդհանրապես:

Աջակցություն իսլամիստներին

Սիրիական պատերազմի ընթացքում եղել են դեպքեր, երբ առանձին հայեր հանդես են եկել ընդդիմության պաշտպանությամբ կամ էլ ստիպված են եղել ծառայել իսլամիստներին:

Այդ մասին վկայել են մասնավորապես «Հայրենիք» թերթի խմբագիր Զավեն Թորիկյանը³⁵ և սիրիահայ լրագրող Հարութ Էլմանյանը: Նրանց հավաստումներով, որոշ հայեր հատկապես Բաշար ալ-Ասադի իշխանության դեմ ցույցերի ժամանակ պաշտպանել են այլախոհներին ու ընդդիմությանը³⁶: Բացի այդ, հայ արհեստավորները նյութական խիստ կարիքից դրդված, պարբերաբար աշխատել են իսլամիստների մոտ, մանավանդ, որ վերջիններս բավական լավ են վճարել³⁷:

Այսպես, 2015 թ. վերջի տվյալներով, որոշ հայ ընտանիքներ, որոնք մնացել էին «Իսլամական պետության» փաստացի մայրաքաղաք դարձած Ռաքքայում, գոյատևել են իսլամիստների ավտոմեքենաները վերանորոգելով: Ռաքքայից վերջին հայերը հեռացել են 2015 թ. սեպտեմբերի 30-ին ռուսական ուժերի կողմից հակահարձակական գործողությունները սկսելուն պես³⁸:

³⁵ Chicago Holds Rally in Support of Syrian-Armenians 2012, <<https://armenianweekly.com>> (23.08.2023).

³⁶ Zolyan 2015, <<https://www.opendemocracy.net>> (23.08.2023).

³⁷ «Սիրիայի հայ արհեստավորները գնում, աշխատում են իսլամիստների մոտ» (տեսանյութ) 2015, <<http://www.a1plus.am>> (23.08.2023):

³⁸ Zolyan 2015, <<https://www.opendemocracy.net>> (23.08.2023).

Իսլամացում

Ահազնացող արմատական մահմեդական վտանգից պաշտպանվելու ու վերապրելու հույսով կամ անբարենպաստ հանգամանքների բերումով որոշ հայեր ոչ միայն հարկադրաբար, այլև նույնիսկ կամովին կրոնափոխ են եղել՝ ընդունելով իսլամ:

Այսպես, ըստ արաբական <aksalser.com> կայքի հաղորդած տեղեկության, 2014 թ. սկզբին Հալեպի գավառի Կաֆր Համրա գյուղում բնակվող երկու հայ ընտանիք տեղի մզկիթում շեյխի և հոծ բազմության ներկայությամբ ընդունել է իսլամ: Ընդ որում, կրոնափոխությունը եղել է կամովին, առանց ճնշումների, տեղացի բնակչության հանդեպ բարյացական վերաբերմունքի պայմաններում: Նույն աղբյուրը հաղորդել է նաև, որ նախորդ 6 տարիների ընթացքում այդ գյուղում 9 հայ ընտանիք էր ապրում: Նրանք ունեին «Հայերու շենք» կոչվող միությունը, բայց և այնպես, բոլորն էլ արդեն հեռացել էին այդտեղից³⁹:

Սակայն կամովին կամ հարկադրված իսլամացումը բազմաթիվ դեպքերում փրկության միջոց չի դարձել շատ ու շատ հայերի համար: Այսպես, երբ հայր և որդի Ուանիս (69 տարեկան) և Մինաս (38 տարեկան) Լիվոնյանների ընտանիքներին պատկանող և Հալեպի Մերձակա Բաբ տարածքում գտնվող սառույցի փոքր գործարանն անցել էր Իսլամական պետության վերահսկողության տակ, նրանք գործարանը հետ ստանալու նպատակով մեկնել էին արդյունաբերական Շեյխ Նաջար քաղաք՝ իսլամիստների էմիրի հետ բանակցելու: Բայց վերջիններս բանակցելու փոխարեն նրանց գերեվարել և հարկադրաբար իսլամ ընդունել տալուց հետո, ի վերջո, գնդակահարել էին: Իսլամիստները դա պատճառաբանել էին նրանով, թե, իբր, հայերը «ձևացրել են, թե ընդունել են

³⁹ Ըստ արաբական <aksalser.com> կայքի Սիրիայում երկու հայ ընտանիք իսլամ է ընդունել 2014, <<http://www.noravank.am>> (23.08.2023):

իսլամ, որպեսզի իրենց հիմարացնեն»⁴⁰: Միաժամանակ, իրենց հարազատների դիակները ստանալու համար նրանց ընտանիքի անդամների բոլոր խնդրանքները մերժել էին՝ պատճառաբանելով, թե՛ «Դա անկարելի է: Նրանք հայտարարել էին իրենց իսլամ լինելու մասին և արդեն նահատակներ են, որոնք պետք է թաղվեն Շարիաթի օրենքներով»⁴¹:

Եզրակացություններ

Այսպիսով, սիրիական պատերազմի ընթացքում հայերը, երկրի ամբողջ բնակչության, մասնավորապես՝ քրիստոնյաների հետ ենթարկվել են դաժան փորձությունների, կրել մարդկային ու նյութական զգալի կորուսներ և ֆիզիկական ու բարոյական անասելի զրկանքներ (առևանգում, հարցաքննություն, նսեմացում, հայիոյանք, ծեծ, կտտանքներ, խոշտանգում, տաժանակիր աշխատանք, Ղուրանի սերտողություն, անձնական իրերի հափշտակում, փրկագնի պահանջ և այլն), առանձին դեպքերում էլ գոյատևման անհրաժեշտությունից դրդված նույնիսկ ընդունել իսլամ և այլն: Հետևաբար, Սիրիայի ճգնաժամը նաև հայ համայնքի ճգնաժամն էր: Նման պայմաններում դժվար է պատկերացնել, թե հայերը ինչ գնով պետք է վերադառնան կամ շարունակեն ապրել ու նաև վերականգնել հետզհետե մահմեդականներով ստվարացող Սիրիայի երբեմնի հայաշատ, բայց պատերազմի հետևանքով ավերակված բնակավայրերը: Հանգամանք, որի մասին կոչերով հաճախ են հանդես եկել սփյուռքյան և Սիրիայում տակավին գործող հայկական համայնքային կառույցները, ինչպես նաև նոսրացած համայնքի առանձին ներկայացուցիչները:

⁴⁰ The Story of Two Armenians Arrested By ISIS 2014, <<http://english.al-akhbar.com>> (23.08.2023).

⁴¹ The Story of Two Armenians Arrested By ISIS 2014, <<http://english.al-akhbar.com>> (23.08.2023).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավագյան Ք. 2022, Սիրիայի հայ համայնքի կրած մարդկային և նյութական վնասները (2012–2018 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 1 (664), էջ 12–29:

Ըստ արաբական <aksalser.com> կայքի Սիրիայում երկու հայ ընտանիք իսլամ է ընդունել, 2014, 9 հունվարի, <<http://www.noravank.am>>:

Մամյան Մ. 2013, Գյումրու երկրաշարժի և Սիրիայի պատերազմի ականատեսը պատմում է Ղարաբաղի կյանքի մասին, 26 դեկտեմբերի, <<http://hetq.am>>:

«Սիրիայի հայ արհեստավորները գնում, աշխատում են իսլամիստների մոտ» (տեսանյութ) 2015, 10 նոյեմբերի, <<http://www.a1plus.am>>:

Armenian Homes in Kessab Looted, Occupied 2014, March 25, <<http://asbarez.com>>.

Armenian Killed In Aleppo 2014, June 3, <<http://www.panorama.am>>.

Balkhian S. 2014, 45 Days in Hell: Syrian Armenians Kidnapped and Tortured by FSA. June 18, <<http://asbarez.com>>.

Chicago Holds Rally in Support of Syrian-Armenians 2012, October 11, <<https://armenianweekly.com>>.

Fisk R. 2013, Nearly a Century after the Armenian Genocide, These People are Still Being Slaughtered in Syria. December 1, <<http://www.independent.co.uk>>.

Mollica M., Hakobyan A. 2021, Syrian Armenians and the Turkish Factor. Kessab, Aleppo and Deir ez-Zor in the Syrian War. Switzerland: “Palgrave Macmillan,” 308 p.

Rebels Release Kidnapped Syrian Armenian Children (Update) 2013, July 30, <<https://armenianweekly.com>>.

Sanjian A. 2015, Armenians in the Midst of Civil Wars: Lebanon and Syria Compared, 25 p. <<http://www.noravank.am>>.

Sengupta K. 2012, The Plight of Syria's Christians: 'We Left Homs because They were Trying to Kill Us'. In the Civil War, They Have Tried to Stay Neutral. But Despite This, Many are Now Facing Persecution and Death, November 2, <www.independent.co.uk>.

The Story of Two Armenians Arrested By ISIS 2014, January 17,

<<http://english.al-akhbar.com>>.

Zolyan M. 2015, Refugees or Repatriates? Syrian Armenians Return to Armenia. October 15, <<https://www.opendemocracy.net>>.

Кнарик Р. Авакян, Институт истории НАН РА, к.и.н., Трудности и лишения армян во время Сирийской войны (2012–2018 гг.)

Резюме

В ходе тяжелых боев в Сирии с 15 марта 2011 г. и по сей день армяне как преданные граждане гостеприимной сирийской страны вместе с местным населением, а также другими этническими группами, в частности – христианами, понесли значительные человеческие и материальные потери.

Во время сирийской войны армяне понесли тяжелые физические и морально-психологические лишения, а также в связи с необходимостью выживания в ряде случаев вынуждены были даже добровольно принимать ислам и т. д..

В этих условиях трудно представить, какой ценой они должны вернуться или продолжить жить, а также восстанавливать разрушенные войной некогда многолюдные армянские районы Сирии, все больше заселенные мусульманами.

Ситуация, когда отдельные представители пока еще действующих армянских общинных организаций в Сирии, а также разбавленной общины неоднократно выступали с призывами ко всем переселившимся за рубежом сирийским армянам – вернуться и возродить общину.

Ключевые слова: Война в Сирии, исламист, террорист, похищение, физические и моральные лишения, выкуп, исламизация, армянская община Сирии, кризис.

Knarik R. Avagyan, *Institute of History of the NAS RA*, PhD in History, **The sufferings of Armenians during the Syrian War (2012-2018)**

Summary

Throughout the hot war operations unleashed in Syria, since March 15, 2011, and later, the Armenians, as devoted citizens of the hospitable Syrian country, together with the local population, as well as the other ethnic groups, in particular – the Christians, suffered significant human and material losses.

During the Syrian war, the Armenians suffered harsh experiences of physical and moral deprivations, as well as in some cases, due to the necessity of survival, in some cases even were obliged voluntary to convert to Islam, etc..

In these cases, it is difficult to imagine at what cost the Armenians should return or continue to live and also restore the districts in Syria, once full of Armenians, but destroyed as a result of the war and increasingly populated with Muslims.

It is a case, where some representatives of still acting Armenian community organizations in Syria, as well as diminishing community have repeatedly made appeals to all Syrian-Armenians resettled abroad – to return and to reborn the community.

Key words: War in Syria, Islamist, terrorist, kidnapping, physical and moral deprivation, ransom, Islamization, Armenian Community of Syria, crisis.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային
ակադեմիայի պատմության ինստիտուտը 80 տարեկան է 5

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳՈՀԱՐ Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հին հայոց դիցաբանական պատկերացումների արտացոլումը
«Սասնա ծռեր» էպոսում 7

ՎԱՀԵ Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի ավանդույթը հայ-լատին և հայ-
բյուզանդական եկեղեցական հարաբերությունների համա-
տեքստում (X դ.-XIII դ. կեսեր) 24

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Թմոզվեցիների իշխանատոհմի պատմության շուրջ 49

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ Գ. ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

Ֆրանսիայի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետու-
թյունում և Անդրկովկասում 1919 թ. 66

ԱՐՄԵՆՈՒՀԻ Վ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԱՄՆ-ի կառավարությանը Հայաստանի հատուկ առաքելության
ներկայացրած հուշագիրը Հանրապետության ճանաչման մասին
(1919 թ. հոկտեմբերի 28) 94

ՄԱՆԵ Կ. ԿՈՆԻՆՅԱՆ

Կ. Պոլսի Հայ ազգային խնամատարության օգնությունը հայ
գաղթականությանը (1919-1920) 117

ՆԱՐԻՆԵ Մ. ՄՈՎՍԵՅԱՆ

1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկզբնավորման հարցի
անդրադարձը խորհրդահայ պատմագիտության մեջ 129

ԻՆԳԵՐ Մ. ՕԿԵՆՀԱՈՒԳ, ԱՐՄԵՆ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Նորվեգական առաքելության գործունեությունն Ալեքսանդրոպոլում. մի միսիոներուիու պատմություն	142
ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ Միջին մասնագիտական կրթության զարգացումը Խորհրդային Հայաստանում (1960-1975)	159
ԼԻԼԻԹ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ ՀՀ Գերագույն խորհրդի և ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների փոխհարաբերությունները	176
ՔՆԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ Սիրիայի պատերազմի ընթացքում հայերի կրած զրկանքները (2012–2018)	194

СОДЕРЖАНИЕ

АШОТ А. МЕЛКОНЯН

80-летие Института истории Национальной академии наук
Республики Армения 5

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

ГОАР Д. ВАРДУМЯН

Отражение древнеармянских мифологических представлений в
эпосе «Сасна Црер» 7

ВАГЕ Г. ТОРОСЯН

Предание святого Апостола Варфоломея в контексте армяно-
латинских и армяно-византийских церковных отношений (с X в.
до середины XIII в.) 24

АРТАШЕС И. ШАХНАЗАРЯН

К истории княжеского рода Тмогвеци 49

НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

ГАЯНЭ Г. МАХМУРЯН

Политика Франции в Республике Армения и Закавказье в 1919 г. ..66

АРМЕНУИ В. ГАМБАРЯН

Меморандум о признании Республики Армения, представленный
специальной миссией Армении правительству Соединенных
Штатов Америки (28 октября 1919 г.) 94

МАНЕ К. КОНИНЯН

Помощь, оказанная «Армянской национальной опекой»
армянской эмиграции Константинополя (1919-1920 гг.) 117

НАРИНЕ М. МОВСЕСЯН

Проблемы периодизации турецко-армянской войны 1920 г. в
советской армянской историографии 129

ИНГЕР М. ОККЕНХАУГ, АРМЕН С. АЙРАПЕТЯН

Деятельность Норвежской миссии в Александрополе: история
одной миссионерки 142

ГУРГЕН В. ВАРДАНЯН

Развитие среднего специального образования в Советской
Армении (1960-1975) 159

ЛИЛИТ С. ЗАКАРЯН

Взаимоотношения Верховного Совета Республики Армения и
местных Советов народных депутатов в первой половине 1990-х
годов 176

КНАРИК Р. АВАКЯН

Трудности и лишения армян во время Сирийской войны
(2012–2018 гг.) 194

CONTENT

ASHOT A. MELKONYAN

80th Anniversary of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia 5

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

GOHAR D. VARDUMYAN

Reflection of ancient Armenian mythological ideas in the epic "Sasna Tsrer" 7

VAHE H. TOROSYAN

The Tradition of Saint Bartholomew the Apostle in the Context of Armenian-Latin and Armenian-Byzantine Church Relations (from the 10th to the mid-13th cc.) 24

ARTASHES I. SHAHNAZARYAN

The history of the the Tmogveti dynasty 49

CONTEMPORARY HISTORY

GAYANE G. MAKHMOURIAN

The French policy in the Republic of Armenia and Transcaucasia in 1919 66

ARMENUHI V. GHAMBARYAN

Memorandum on the Recognition of the Republic, Submitted by the Special Mission of Armenia to the U.S. Government (28 October 1919) 94

MANE K. KONINYAN

Assistance provided by the "Armenian National Foster Care" to the Armenian emigration of Constantinople (1919-1920) 117

NARINE M. MOYSESYAN

Issues of Periodization of the Turkish-Armenian War of 1920 in the Soviet Armenian Historiography 129

INGER M. OKKENHAUG, ARMEN S. HAYRAPETYAN

Activities of the Norwegian mission in Alexandropol: The story of one missionary 142

GURGEN V. VARDANYAN

Secondary vocational educational in Soviet Armenia (1960– 1975) ...159

LILIT S. ZAKARYAN

Relations between the Supreme Council of the Republic of Armenia and Local Councils of People's Deputies 176

KNARIK R. AVAGYAN

The sufferings of Armenians during the Syrian War (2012-2018) 194

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

2 (27). 2023

Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Յու. Կրյուկով
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100, ստորագրված է տպագրության 15.12.2023 թ.
Тираж – 100, подписано к печати 15.12.2023 г.
Printed copies – 100, signed for printing 15.12.2023

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/>
Официальный сайт журнала: <http://academhistory.am/>
Official site of the journal: <http://academhistory.am/>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ hayotspatmutyanhartser@gmail.com
Электронная почта журнала: hayotspatmutyanhartser@gmail.com
E-mail of the journal: hayotspatmutyanhartser@gmail.com

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/4, հեռ. 0(10)529263
Адрес редакции: 0019, Ереван,
пр. Маршала Баграмяна 24/4, тел. 0(10)529263
Editorial office address: 0019, Yerevan,
Marshal Baghramyan Ave., 24/4, tel. 0(10)529263